


ANAHIT, REVUE ARMÉNIENNE, LITTÉRAIRE ET ARTISTIQUE



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆ ԴԵՍ

ԱԶԳ. ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԻԵՍՏԱԿԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ 1911 ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ. ԹԻԻ 3-4

ՓԱՐԻԶ

DIRECTEUR : A. TCHOBANIAN .

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

		Էջ
Նախնեաց գործը	ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆՆԱՆ	49
Հայկական հարսանիք	Տ. Բ. Մ. Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ	56
Հայոց եկեղեցական նկարչութիւնը	Ա. Չ.	67
Ս. Էջմիածնի տաճարի պատկերագրութիւնը	ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ	67
Փիլիսոփայական միջնագրութիւնք	ԽԱՉԲԵԱՐ	70
Արձակ երգեր	ՄԱՆՆԻԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ	71
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Հայ տղու առաջին դասագիրքը. ԲԱՐԳԷՆ ԵՊՍ. ԿԻԻԼԷՍԷՐԵԱՆ		72
Տիգրան խան Բելեկեան եւ արեւելեան արուեստը Եւրոպայի մէջ		77
« Ես քեզ մեղայ », (Լադիսլաւ-Քիւն Էրեւ Կարոտաժով) Գ. Արարուած		
Արուեստը (բանաստեղծութիւն)	ԳԵՂԱՄ ԱՐԾՐՈՒՆԻ	80
Քրոնիկ	ԹԷՕՅԻԼ ԿՈԹԻԷ	89
Պ. Փրօֆֆ-Գալֆայեանի նուագահանդէսը	ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆՆԱՆ	89
Կոչ (Շերլանդերէ յոբէլեանը)		96

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ն Ա Հ Ի Տ Ի

Տ Ա Ս Ն Ե Ր Կ Ո Ւ Ե Ր Ո Ր Գ Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն Ի

Բաժանորդագրութիւնը պէտք է ԿԱՆԵՐԿ ՎՃԱՐԵԼ :

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս


ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ. 1911

ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ

ԹԻԻ 3-4

Ն Ա Խ Ն Ե Ա Յ Գ Ո Ր Ծ Ը



1895ի կոտորածներու ատեն, երբ փողոսուող հազարաւոր Հայերու սարսափազդեցիկ լուրերուն հետ՝ հրդեհուող կամ կողոպտուող վանքերու, եկեղեցիներու գուժերը կուգային, որ մը՝ բարեկամական շրջանակի մը մէջ՝ «Ափսո՛ս, ըսի, ո՞վ գիտէ ի՞նչքան թանկագին հին ձեռագիրներ, անփոխարինելի գեղարուեստական առարկաներ կորան ու դեռ պիտի կորչին այս անաւոր օրերուն մէջ»։ Արտասահմանեան վայրահաջ թերթերէն մէկը, ետքէն, բերնէ բերան այդ խօսքն իմացած ըլլալով՝ կը յիշէր զայն իբրև իմ «անսրտութեանս» փայլուն ապացոյցներէն մին, եւ կ'ըսէր՝ «Ի՞նչ հրէշային իմաստակութիւն, ուշադրութիւն չգարձընիլ կենդանի էակներու խողխողումին, եւ անշունչ թղթի, քարի կտորներու կորուստը ողբալ...»։

Ես մինչեւ այսօր կ'ողբամ այդ հին թղթերու եւ քարերու կորուստը, — ինչ որ չի նշանակեր թէ հազարաւոր Հայ կենդանի էակներու խողխողումը զիս անտարբեր է ձգած։ Ես մինչեւ այսօր կը շարունակեմ մտածել թէ հին ձեռագիր մը, նկար մը, արձան մը, պատմական յիշատակարան մը, «անշունչ» առարկաներ չեն. «էակներ են» անոնք ալ, որոնց մէջ կը թրթռայ կեանք մը, նոյն իսկ աւելի հոծ ու թանկագին քան կարգ մը այսօր ապրող ու վաղը մոռցուելու սահմանուած մտի կոյտեր։ Այո՛, մինչեւ այսօր կ'ողբամ

այդ քարէ, փայտէ, թղթէ բազմակենդան էակներուն կորուստը, — եւ ինչ որ այժմ աւելի քան երբէք կ'ողբամ նաեւ, այն ալ սա պարագան է որ մեր մէջ շատ քիչերն են որ ինծի պէս կ'ըմբռնեն այդ կորուստը եւ կ'ողբան զայն։

Մեր հասարակութեան մէջ ոչ միայն քիչ են մեր նախնեաց մտաւոր արտադրութեանց փճացումը կակձանքով նկատողները, այլ եւ խիստ շատ են անոնք որ անգիտակցութեամբ՝ իրենք իսկ կը նպաստեն այդ փճացման։ Միայն օտարները չեն որ քանդած, փշրած, այրած, կողոպտած են մեր հնութեանց նըշխարները. մենք ալ նոյնքան բաժին ունինք այդ վանասլուծեան մէջ, ի՞նչքան թանկագին ձեռագրեր՝ եկեղեցականներու հետ զագաղը դրուած փոսին մէջ նետուած եւ կորսուած, կամ՝ Բրդերու ձեռք չիյնալու համար՝ հողին մէջ, արտերու մէջ թաղուած, անհետացած... կամ՝ պատուտուած տան պէտքերու գործածուած։ Ի՞նչքան հին շէնքերու կտորներ, քանդակեալ քարեր՝ քակուած, կտրտուած, անհատական տուներու շինութեան գործածուելով փճացած... Ի՞նչքան վանքերու նկարներ, անօթներ, գողցուած, օտարներու ծախուած, կամ թանկագին քարերը հանելով տեղը սուտ քարեր դրուած, իւն. իւն.— ու մնացածներն ալ՝ ընդհանրապէս ի՞նչքան գէշ, ինչքան անխնամ անկարգ պահուած, եւ մեծ մասամբ՝ ուշադրութեան, ուսումնասիրութեան առարկայ չդարձած, անյայտ ձգուած...։

Ռուսաց կովկասի տիրապետութենէն յետոյ՝ տասնեակներով տարիներ անցան, ու-

սահայք հարստացան, զարգացան, ուսեալ ու կարող սերունդներ յառաջ եկան, եւ սակայն ոչ ոք մտքէն անցուց Անիի մէջ գտնուող հայ գեղարուեստի հոյակապ գանձերը երեւան հանել, հաւաքել, պահպանել, ուսումնասիրել եւ այլոց եւս ծանօթացնել: Ռուս մը, Պ. Մար, այդ գաղափարն ունեցաւ. եւ այն օրհնեալ օրէն ի վեր ուր Պ. Մար իր հմտութիւնը, իր ժամանակը, իր եռանդը նուիրած է այդ պեղմանց գործին, ի՛նչ խղճալի, ի՛նչ ամօթալի կերպով քիչ բան է նիւթական օգնութիւնը զոր Հայութիւնը տուաւ այդ գործին, որ սակայն մեզ համար կենսական կարեւորութիւն ունի եւ որուն պահանջած խոշոր գումարները մենք պարտաւոր էինք փութկոտօրէն շատոնց արդէն տրամադրութեանը տակ դնել Պ. Մարին: Մեր հասարակութիւնը այդ գումարները շատ դիւրաւ կարող է գտնել եթէ ուզէ. այդ պէտքին զգացումն է որ չունի տակաւին հարկ եղած չափով:

* * *

Մեր նախնեաց կատարած գործին վրայ մեր ունեցած ծանօթութիւնը շատ պակասաւոր է: Ասիկա ես ըսած եմ հարիւր անգամ. եւ հազար անգամ դեռ պիտի կրկնեմ: Գիտնալու համար ամէն ինչ որ մեր նախնիք կատարած են, պէտք է թօթվենք մեր անտարբերութիւնը, մեր ծուլութիւնը, մեր ինքնարհամարհանքը, եւ պէտք է աշխատինք, փնտռենք, ուսումնասիրենք, պէտք է յանձն առնենք հարկ եղած նիւթական գոհողութիւնները ու մտաւոր նեղութիւնները: Հայր օտս աւելի մեծ բաժին ունեցած է աշխարհիս քաղաքակրթական ընդհանուր գործին մեջ՝ քան ինչ որ կը կարծուի: Պէտք է փնտռել, երեւան հանել: Օտարները շատ աւելի ըրած են այդ ուղղութեամբ՝ քան մենք. արդ՝ ատիկա աւելի մեր պարտքն է:

Մաղթելով որ այս ձգտումը, անով վառուած սակաւաթիւ Հայերու մէջ սահմանափակուած մնալու տեղ, տարածուի մեր մէջ եւ ծնունդ տայ ընդարձակ, միահամուռ, մեթօտաւոր հզօր գործունէութեան մը, ես այստեղ կ'ուզեմ՝ աւելի մանրամասնօրէն եւ աւելի

ամրողջականօրէն քան ինչ որ կրցած եմ ընել ցարդ այս հարցին վրայ յօդուածներու մէջ՝ գծել ընդհանուր պատկեր մը այն բազմադիմի ջանքերուն որ կան ընելու « մեր նախնեաց գործը » լիակատարօրէն երեւան հանելու համար:

* * *

Անհրաժեշտ է նախ զբաղել հին ձեռագիրներով: Պէտք է միջոցներ ձեռք առնենք որ այսուհետեւ չկորչի ո եւ է ձեռագիր, եւ պէտք է ջանադիր ըլլանք հետզհետէ ասդին անդին ցրուած ձեռագիրները ժողովել քանի մը մեծ մատենադարաններու մէջ հաւաքելու: Ինչո՞ւ մեր Հայրապետն ու Պոլսոյ Պատրիարքը չըջարեալան չուղարկեն՝ պատուիրելու համար որ առաջնորդները ամէն տեղ հսկեն ձեռագրաց լաւ պահպանուելուն վրայ, եւ ջանան ինչքան կարելի է՝ մասնաւորներու ձեռքէն հանրային հաւաքածուներու մէջ փոխադրել զանոնք: Այդ « հանրային հաւաքածու »ները ցարդ մեր վանքերուն եւ եկեղեցիներուն մէջ կը գրանուին, ընդհանրապէս շատ գէշ պահպանուած, շատ յաճախ բնաւ չուսումնասիրուած, փոշիներու եւ մոռացման տակ թաղուած: Ինչո՞ւ իւրաքանչիւր վանահայր, իւրաքանչիւր առաջնորդ հոգածու չըլլայ գոնէ համառօտ բայց մեթոտաւոր ու յստակ ցուցակ մը կազմելու եւ հրատարակելու իր վանքին կամ իր թեմին եկեղեցիներուն մէջ գտնուած ձեռագիրներուն Յորմէհետէ Տաշեան հրատարակեց Վիեննայի Մխիթարեանց ձեռագիրներու հաւաքածուին մանրամասն ցուցակը, ի՛նչքան քիչեր հետեւեցան այդ վարպետի ձեռքով տրուած հոյակապ օրինակին. դեռ նոյն իսկ էջմիածնայ եւ Ս. Ղազարի ձեռագրական բազմաճիւ հաւաքածուներուն ցուցակները չին հրատարակուած: . . Մեր ձեռագրական մեծ հաւաքածուներու ցուցակներուն հրատարակումը անագին դիւրութիւն պիտի ընծայէ մեր հին պատմութիւնը, դրականութիւնը ուսումնասիրել եւ անտիպ էջեր հրատարակել ցանկացող բանասէրներուն: Նոյնքան կարեւոր է նաեւ մեր ազգային մեծ մատենադարաններուն կանոնաւոր կազմակերպումը՝ որպէս զի բանասէրները աւելի հեշտիւ

կարենան օգտուիլ : Ատոնցմէ՛ Էջմիածնի , Երուսաղէմի , Վենետիկի եւ Վիեննայի մատենադարաններն են ամենակարեւորները . Վիեննայիսը ամենէն կանոնաւորը , եւրոպականաձեւն է , այն ուր աշխատութիւնը ամենէն հեշտ է՝ շնորհիւ մանաւանդ Տաշեանի ցուցակին . այդ աւաւելութիւնը անշուշտ պէտք է փութան իւրացնել Էջմիածնի , Երուսաղէմի եւ Վենետիկի միաբանութիւնները , իրենց հաւաքածուներուն համար , որ անհունապէս աւելի ճոխ ու կարեւոր են : Այս չորս հաւաքածուներն ալ վանքերու մէջ են , այնտեղ գտնուած միաբանութեանց համար գլխաւորապէս . թէ եւ բանասէրները կարող են երթալ հոն եւ օգտուիլ , բայց յաճախ դժուար է՝ որովհետեւ . . . բանասէրները ճամբորդելու միջոց միշտ չեն գտներ մեր մէջ . ուրեմն եւ ես կը կարծեմ թէ պէտք է մասնաւորապէս հոգ տանիլ բազմահայ կեդրոններու մէջ հայ քանի մը հարուստ ձեռագրական հաւաքածուներնալու , հատ մը՝ Վան , որ թրքական Հայաստանի մտաւոր շարժման տեղական կեդրոնը ըլլալ սահմանուած է , հաւանականաբար աւելի Վարազ՝ քան Աղթամար , այսինքն աւելի մօտ քաղաքին , բազմութեան , ժողովրդին , հատ մը՝ Պոլիս , հատ մը Թիֆլիս . մեր աշխարհական բանասիրութեան ինչպէս եւ գրական ուժերու մեծամասնութիւնը Թիֆլիս եւ Պոլիս կը բնակին , ինչո՞ւ իրենց արամադրութեան տակ՝ նոյն իսկ այդ քաղաքներուն մէջ՝ չունենան գրքերու հանրային հաւաքածուին հետ՝ ձեռագրական հաւաքածու մը եւս : Պոլսոյ Ազգ. Մատենադարանին մէջ կան արդէն իսկ բաւական ձեռագրեր , հաւաքածուն աղքատ է գեռ , պէտք է զայն հարստացնել հետզհետէ , եւ ամբողջ մատենադարանը կարգի դնել , կենդանի հաստատութիւն մը դարձնել զայն . նոյնը եւ Թիֆլիս :

Ձեռագիրները հաւաքելու , հանրային մատենադարանները կազմակերպելու , ցուցակները կազմելու եւ հրատարակելու հետ , պէտք է նաեւ միշտ յառաջ տանիլ արդէն իսկ տրամադրելի եղած ձեռագիրներու մէջ գտնուող անտիպ գործերու հրատարակումը :

Ձեռագիրներու մէջ՝ ահագին քանակութեամբ գեռ նիւթ կը մնայ անտիպ : Պատմա-

կան գրուածքներն են որ ամենէն աւելի հրատարակուած են . բայց անոնցմէ ալ դեռ անտիպ մասեր կը մնան . անտիպ են մանաւանդ դէզադէզ « յիշատակարանները » որոնք պատմական գրուածքներու լրացուցիչները պիտի ըլլան . անտիպ է տաղաչափեալ գրուածքներու ստուար մաս մը , թէ՛ գրարար եւ թէ՛ մանաւանդ՝ միջնադարեան աշուղական լեզուով : Մեծ մասամբ անտիպ են եւ գեռ գրեթէ բնաւ չուսումնասիրուած՝ Բժշկարանները , իսկ բոլորովին ուշագրութեան չեն արժանացած կախարդական գիտութեանց վերաբերող բազմաթիւ շահեկան ձեռագրերը որոնք մասնագէտներու համեմատական լուրջ ուսումնասիրութեան կարօտ են . ու դեռ ի՞նչքան անտիպ ու հետաքրքրական մեծ ու մանր բաներ՝ Ոսկեփորիկներուն , Հաւաքածուներուն , Տաղարաններուն , Գանձարաններուն մէջ . ի՞նչքան անտիպ էջեր՝ նոյն իսկ մեր նախնեաց կրօնական , աստուածաբանական , խրատաբանական գրականութեանէն , ուր իրենց տեսակին մէջ արժէք ունեցող կտորներ կան , եւ որոնք պէտք է հրատարակուին :

Նախնեաց երկերու հրատարակման գործին մէջ մինչեւ ցարդ եթէ եղած են անհատներ՝ ինչպէս Կարապետ Վ. Շահնազարեան , Արիստակէս վարդապետ Տէվկանց , Կոստանեանց եւ այլք , որ կարեւոր տեղ ունեցած են , գլխաւորապէս մեր միաբանութիւններն են սակայն որ անոր մէջ կարեւորագոյն բաժինն են ունեցած , եւ բնական էր որ այդպէս ըլլար , որովհետեւ միաբանութիւնները ամենէն աւելի գիւրութիւն ունին այդ գործը կատարելու :

Նախնեաց հրատարակութեանց ստուարագոյն մասը կը պարտինք Վենետիկի Մխիթարեանց . Էջմիածնի ու Երուսաղէմի միաբանութիւնները շատ ետքը կուգան : Երուսաղէմի վանքը , ուր կայ հոյակապ ձեռագրական հաւաքածու մը , երբ դադրի աւաղականոց մը ըլլալէ՝ կրօնական եւ ուսումնական տուն մը դառնալու համար , ի՞նչքան գործ կայ այնտեղ՝ աշխատասէր եւ հմուտ վանականներու համար : Վիեննայի Մխիթարեանք , որ ցարդ աւելի քննական աշխատութիւններով կ'զբաղէին , սկսած են այժմ բարեբաղդաբար նախնեաց

գործերու հրատարակման եւս մասնակցիլ : Էջմիածնայ մէջ սկսած է վերջերս լոյս տեսնել շարք մը մեր պատմագիրներու նոր եւ համեմատական խնամեալ հրատարակութեանց , գործակցութեամբ միաբաններու եւ աշխարհական բանասէրներու , նիւթական աջակցութեամբ Սուքիաս արքեպ. Պարզեանցի (1) . այդ շարքը շատ կարեւոր է — միայն՝ երանի՛ թէ իւրաքանչիւր հատորի սկիզբը ուսումնասիրութիւն մը գտնուէր՝ ուր ամփոփուած ըլլային հեղինակին վրայ ցարդ կատարուած բանասիրական հետազոտութեանց արդիւնքները , ճշտագոյն նկատուած կենսագրական տեղեկութիւնները : Յանկալի է որ Պարզեան արքեպիսկոպոսի անհատական ազնիւ ձեռնարկը միայնակ չմնայ , չայլ վանքը ինքն իսկ իր նիւթական ու մտաւոր ուժերը միացնելով՝ սկսի նախնեաց գործերու հրատարակութեան եւ ուսումնասիրութեան հարուստ եւ հզօր շարք մը երեւան բերել :

Յանկալի է նաեւ որ գէթ շատ կարեւոր հեղինակներու ընագրին վերջնական լիակատար հրատարակութիւնը պատրաստելու համար՝ նախաձեռնութիւնն ունեցող Միաբանութիւնը կամ անհարձ ձեռագիրներու համեմատութեան համար գէթ երեք Միաբանութեանց գործակցութեանը գիմէ եւ զայն ստանայ :

Ձեռագիրներու ամբողջական ցուցակներու հրատարակումը , անոնց մէջ գտնուած բոլոր կարեւոր գրուածքներուն ի լոյս ընծայումը , իրենց ուրոյն շահեկանութենէն զատ , ամենէն թանկագին աջակցութիւնը պիտի բերեն՝ ինչպէս ըսի վերեւ՝ հայ ցեղին պատմութեան եւ հայ գրականութեան պատմութեան լիակատար յօրինումին : Ատոր համար , անհրաժեշտ է նաեւ անշուշտ օտար եւ հայ րահասէրներու կողմէ սկսուած հետազօտութիւնները շարունակել օտար հեղինակներու , յի-

շատակարաններու , արձանագրութեանց մէջ : Պէտք է փնտռել , հաւաքել , դասաւորել , ամփոփել ամէն ինչ որ կը գտնենք այդ օտար աղբիւրներուն մէջ՝ Հայոց վրայօք , թէ՛ այն դերին մասին գոր իրենց երկրին մէջ իբր ազգ կատարած են , եւ թէ՛ այն դերին զոր օտար երկիրներու մէջ հայ գաղութները կամ անհատները կատարած են :

Հայաստանէն դուրս՝ Եւրոպայի եւ Եւրասիայի հայ ցեղը կորովի , օտարերէն , հնարամտութեան մեծ ապացոյցներ տուած է , որոնց Եւրոպայի վրայ հարեւանցի գաղափար մը ունիմք , եւ Եւրոպայի անձանց կը մնան մեզի : Պարսից , Արաբաց արուեստին մէջ ո՛վ գիտէ թէ բաժին մը չէ ունեցած Հայը , ան որ օսմանեան պետութեան գեղարուեստի բոլոր ճիւղերուն մէջ ամենակարեւոր դեր կատարած է : Հ. Անդրիկեան , քանի մը տարի առաջ , Շարտէն Ֆրանսացի ուղեւորին քանի մը հատուածները յիշատակելով , երեւան կը հանէր անյայտ անունը Միւսս մեծատաղանդ հայազգի նկարչի մը որ Սպահանի հին պալատները հոյակապօրէն որմնագործեր է Հայու ձեռքով կերտեալ ու եւրոպական ազդեցութիւններ ալ մատնող պարսիկ նուրբ ու ճոխ ոճով մը . ինչո՞ւ չըլլան խուզարկու Հայեր որ երթան փնտռեն գտնեն Միւսսի գործերէն ինչ որ մնացած է , լուսանկարեն զանոնք , նկարչին կենսագրութեան մասին պարսիկ աղբիւրները քրքրեն : Բիւզանդեան կայսրութեան քաղաքական , զինուորական կեանքին մէջ հայ ցեղը առաջնակարգ դեր կատարած է , անոր մտաւորական գեղարուեստական կեանքին մէջ ալ անշուշտ ունեցած է իր բաժինը (Ս. Սոփիայի վերանորոգումը հայազգի Տրդատ ճարտարագետին յանձնած են , ասիկա նշանակալից մանրամասնութիւն մըն է) : Հ. Կարապետ Տէր-Սահակեան սիրուն շարք մը սկսած է Բիւզանդիոյ մէջ երեւցած մեծ հայ դէմքերու մասին . ես կը ցանկայի որ այդ աշխատութիւնը զեռ ուրիշներ ալ կատարէին , աւելի եւս մանրամասն եւ ընդարձակ ձեւով , եւ մեզի տային մեր ցեղին պատմութեան այդ ստուար ու կարեւոր գլուխը՝ լիակատարօրէն գրուած : Օսմանեան պետութեան մէջ , սկիզբէն ի վեր՝ Հայը ահագին գործ կատարած է , հարիւր ձեւով . մանաւանդ արուեստի մէջ իր դերը

(1) Այդ Եւրոպայի մէջ , Ազգայնագետի ցոր հրատարակութիւնը , կատարուած՝ ձեռամբ բազմամուտ միաբան Փայուս Տէր-Մկրտչեանի եւ Պ. Կանայեանի , իր տեսակին մէջ դեռ նման չունեցող հոյակապ գործ մըն է :

չափազանց կարեւոր է . հաւանականաբար՝ եթէ հետազոտութիւններ ըլլան , պիտի տեսնենք որ ինչ որ մեզի ծանօթ է՝ շատ քիչ բան է բաղադատարար դեռ անյայտ մնացածին : Նոյն իսկ հին մոլորութեան շինութեան , « մահմետական արուեստ » ըսուածին բոլոր ճիւղերուն մէջ , Հայուն մատը կայ յաճախ ապահովագէտ , պէտք է փնտռել ու գտնել . Սիւլէյմանիէի ճարտարապետ Սինան խալիֆան հայ կը կարծուի , ապացոյցները ջանալու է գտնել . Պրուսայի «կանանչ մոլորութիւն»ին ճարտարապետը Պարսկաստանէն յեկածնախկին վաճառական քրիստոնիսայ մըն է՝ Էլիաս անուն , թերեւս Հայ . պէտք է փնտռել : Նոր ժամանակներու մէջ , Մէքիտի , Ազիզի օրերուն , գիտնիք թէ գրեթէ ամբողջ գեղարուեստը Հայոց ձեռքն էր . եւ ի՞նչ հոյակապ տաղանդ ցոյց տուած են — ճարտարապետ Պալեանները , կահագործ Որդիկ պէյը , նկարիչ Ումեթիլը , զարդարուեստագէտ Պիլէզիկճեանը , եւն : Ինչո՞ւ օտար երկրի մէջ հայ տաղանդի արտայայտիչ այս բոլոր գէմքերուն ու գործերուն մասին մանրամասն ու խղճամիտ ուսումնասիրութիւններ չպատրաստուին , լուսանկարներով զարդարուած , — որպէս զի թէ՛ մենք եւ թէ՛ օտարները կարենանք որոշ գիտնալ ի՞նչ է մեր բաժինը աշխարհիս ընդհանուր քաղաքակրթական գործին մէջ : Տեսէք Չրաղանը որ վերջերս փճացաւ հրդեհի մը մէջ , ամբողջապէս հայ տաղանդի ձեռքով կերտուած ու պնդուած թանգարան մըն էր . այսօր՝ անկից տարտամ յիշատակ մը միայն կը մնայ : Եթէ այսքան տարիներէ ի վեր , մէկը խորհած ըլլար այդ չէնքին պատմութիւնը , անոր արտաքին ու ներքին մանրագնին նկարագրութիւնը շարադրել , անոր կորուստը մեզի համար ամբողջական չէր ըլլար :

Ինչո՞ւ Շահապաս Ջուղայի Հայիլը բռնի տարաւ Պարսկաստան . որովհետեւ անոնց քաջ ճարտարագէտ , քաջ արուեստագէտ եւ քաջ վաճառական ըլլալը գիտէր , եւ կ'ուզէր անոնց շնորհիւ ծաղկեցնել պարսիկ գեղարուեստն ու վաճառականութիւնը . եւ իր նպատակին ալ հասաւ : Բայց մենք դեռ ո եւ է հետազոտութիւն չենք կատարած գիտնալու համար որոչապէս թէ ի՞նչ ըրին Ջուղայէն Պարսկաստան գացած Հայերը , ի՞նչ եղաւ ճշտիւ անոնց բա-

ժինը պարսիկ արուեստի տարօրինակ զարգացման մէջ :

Արուեստէն դուրս ուրիշ ճիւղերու մէջ եւս Հայը նշանաւոր գէմքեր տուած է օտար ազգերու . օրինակի համար , մեծանուն Մելքոն խանը , որ Պարսից վերանորոգչական շարժման մեծ ներշնչողներէն մին եղած է իր բազմաթիւ պարսկերէն գրուածքներով , եւ որ պարսիկներէն իսկ իրը մեծ գրագէտ , իբր տեսակ մը « մարգարէ » նկատուած է . ինչո՞ւ պարսկագէտ Հայեր չփնտռեն , չհաւաքեն ու հայերէնի ինչպէս եւ հերոսական լեզուաց թարգմանելով , չհրատարակեն անոր պարսկերէն գրուածքները : Ու դեռ ո՞րքան այսպիսի գէմքեր , գործեր , որ կան գտնուելու , ի լոյս հանուելու՝ Ռուսաստանի , Լեհաստանի , Իտալիոյ , Հունգարիոյ մէջ , եւն . եւն .

* *

Մեր նախնեաց հայրենի հողին իսկ վրայ կատարած գործը երեւան հանելու համար՝ ամենէն կարեւոր ձեռնարկներէն մէկն ալ պեղումներն են : Հողին տակն են մեր շատ մը Պոմպէիները . մեր հին կեանքի , բարքերու , արուեստի մասին որոշ գաղափարներ պիտի ունենանք երբ անոնք բոլորը երեւան ելլեն : Պ. Մարին ոչ միայն պէտք է օգնել , այլ եւ պէտք է հետեւիլ անոր օրինակին . Անին միակ հնավայրը չէ որ պեղմանց կը սպասէ : Դատեան Խաչիկ վարդապետը որ Ջուարթնոց եկեղեցին իր անհատական նախաձեռնութեամբ՝ եւ նոյն իսկ Պ. Մարի տուած օրինակէն առաջ՝ պեղելով երեւան հանեց , մեծ գովեստի արժանի Հայ մընիէ : Երանի՛ թէ այդ սրատեսութիւնը , այդ եռանդը ունեցողներ մեր բանասէրներուն մէջ շատ գտնուէին , եւ անոնց աջակցող մեկնասներ յառնէին հետզհետէ , ու մեր հասարակութիւնն իսկ , անհատներով ինչպէս եւ ընկերութիւններով , ուշադրութիւն դարձնէր այս կարգի ձեռնարկներուն վրայ եւ օգնէր անոնց : Եթէ օսմանեան ներկայ ընթացիկ տեւէ եւ զօրանայ , ինչքան պեղումներ կան կատարուելու Թրքահայաստանի մէջ . . .

* *

Պէտք է ուսումնասիրել մեր բոլոր հին

չէնքերը, վանք, տաճար, դղեակ, բերդ, պարիսպ, եւն. որոնք հողին տակ չեն, այլ մեր անտարբերութեան ու սգիտութեան փոշիին տակ միայն ցարդ թաղուած մնացած են: Կովկասի, ու մասնաւորապէս Անիի, հին հայ շէնքերուն ճարտարագետութիւնը, արդէն իսկ բարեբաղդութիւնը ունեցաւ կարող ու եռանդուն ուսումնասիրող մը գտնելու յանձին Պ. Թօրամանեանի. ահա՛ գործիչ մը որ մեծապէս արժանի է ամբողջ ազգին գնահատման եւ ջերմագին աջակցութեան: մեր ընթերցողները դեռ տպաւորութեանը տակ են անշուշտ այն յստակ, նորութիւններով լեցուն, հմտալից ուսումնասիրութեան զոր մեր նախորդ թիւին մէջ հրատարակեց Պ. Թօրամանեան. ատիկա դեռ համառօտ մէկ ամփոփումն է միայն այն եզրակացութեանց որոնց սկսած է հասնիլ Պ. Թօրամանեան իր երկարաձիգ բազմազան հետազոտութիւններէն յետոյ, եւ որոնք այնքան փաղաքիչ են մեր ազգային ինքնասիրութեան համար: Ահա՛ մեծ արահետ մը, զոր Պ. Թօրամանեան կը բանայ, եւ ուր իրեն պէտք է հետեւին ուրիշ Թօրամանեաններ, վասն զի գործը ահագին է, եւ մէկ երկու հոգիով չէ որ ան պիտի լրիւ կատարուի:

Այգօրինակ ուրիշ մեծ արահետ մը, Կոմիտաս վարդապետն է որ բացաւ, իր առաջնակարգ արուեստագէտ-գիտունի կրակոտ ու խուզարկու մտքին երկարատեւ դժուարին վերլուծման ենթարկելով մեր հին ազգային երաժշտութիւնը գտնելու, որոշելու, սահմանելու գործը. իրմէ արդէն շատ արդիւնք ստացած ենք եւ դեռ շատ աւելին կը սպասենք. « Հայ երաժշտական ոճը » ինչպէս որ ինքը զայն երեւան հանեց, օտար գեղեցկագէտներու զմայլում պատճառեց եւ մեզ Հայերուս՝ հպարտանալու իրաւունք մը եւս կուտայ: Այդ անսահման արահետին մէջ ալ թէ՛ իրեն վարպետին եւ թէ՛ այսուհետեւ իր գծած ուղութեամբ ընթանալ ուզող աշակերտներու համար՝ անսպառ բան կայ դտնելու եւ քննելու: Կոմիտաս վարդապետի Պոլսոյ մէջ հայկական երաժշտանոց մը հիմնելու ծրագիրը ամէն խրախուսանքի արժանի է, ու մեծ հաճոյքով կը տեսնեմ որ Պոլսոյ եւ Իզմիրի հայ հասարակութիւնը այդ ծրագրին

իրականացման օգնելու խանդավառ տրամադրութիւն մը ցոյց կուտայ:

Հայ հին արուեստի մասին ամբողջական գաղափար կազմելու համար պէտք է ուսումնասիրել նաեւ մեր ալեւոր վանքերուն ու եկեղեցիներուն մէջ գտնուած որմնանկարները, հին պատկերները, քանդակագործական նմոյշները, անօթները, սպասները, վարագոյրները, խաչվառները, խաչերը, Աւետարանի զարդարուն կողքերը, շուրջառները, սեղանի, սկիհի ծածկոյթները, եւն. եւն. եւն.: Ասոնց մեծ մասին վրայ շատ քիչ ուշադրութիւն դարձուած է ցարդ, իսկ մէկ մասին վրայ՝ դեռ բնաւ երբէք: Մեր վանքերն ու եկեղեցիները՝ կրօնական սրբավայրեր չեն միայն, այլ ազգային արուեստի քանգաւաններ են. իբր այդ զանոնք նկատող, անոնց մէջ պարունակուած գանձերուն անվթար պահպանման հոգ տանող, եւ զանոնք խնամքով լրջօրէն ուսումնասիրող Հայեր շատ քիչ եղած են ցարդ: Այդ գեղարուեստային գանձերուն մէջ առաջին տեղերէն մէկը կը բռնեն նաեւ նկարազարդ հին ձեռագիրները: Մասնակի ուսումնասիրութիւններ, ասդին անդին մերթնմունքներու արտատպումներ գոյութիւն ունին. բայց ամբողջական հիմնաւոր լուրջ ուսումնասիրութիւն մը դեռ չունինք այդ հայկական արուեստի վերջին ծայր շահեկան բաժնին վրայ, իսկ այդ ձեռագիրներուն գեղեցկագոյններէն միոյն լիակատար եւ մաքուր վերարտադրութիւնը պարունակող չքեղ հրատարակութիւն մը չէ փորձուած տակաւին: Ինչ սիրուն նիւթ՝ գեղարուեստագէտ բանասէրներու համար, անշատեւ մեր ձեռագիրներու մանրանկարչական արուեստին մէջ ինչ որ օտար ազդեցութեան արդիւնք է, ու ցոյց տալ ինչ որ յատուկ է հայ ոգւոյ եւ ճաշակի: Վեհեակի վանքին մէջ, ուր հրաշալի նկարազարդ ձեռագրեր կան, դժբաղդաբար Միւրախութիւնը բոլորովին անփոյթ է այժմ այդ կարգի ուսումնասիրութեանց մասին, որոնց նկատմամբ ատենով Ալիշան, որ ամէն բանով գիտցած է հետաքրքրուիլ, տեղեկութիւն տալ կը սիրէր իր գործերուն մէջ. (Ալիշանի մէկ հին ուսումնասիրութեանէն է օրինակի համար՝ որ ես իմացած էի գոյութիւնը « Պատկերուսոյց գիրք » ձեռագրին, որ ոչ միայն նկարազարդ

ձեռագիր . այլ նկարչութեան հին դասագիրք մըն է , ամենաթանկագին , ամենաշահեկան ձեռագիր , դժբաղդաբար շատ անկատար վիճակի մէջ մեզ հասած , բնագիրը պակաս , միայն իբր օրինակ ծառայող պատկերներու շարքը մնացած . քանի մը տեղ հակիրճ նօթերով . վերջին անգամ վանքը եղած տտենս , փափաքեցայ տեսնել այդ ձեռագիրը , եւ զմայլած մնացի . սքանչելիք մըն է այդ փոքրիկ ձեռագիրը . առաջարկեցի որ հրատարակեն զայն իսկոյն ամբողջութեամբ . մեծ ծախքի ալ կարօտ չէ՝ որովհետեւ գծագրութիւններ են լոկ առանց գոյնի . այդ հրատարակութիւնը պիտի ըլլար՝ կ'ըսէի՝ առաջին թիւը շարքի մը , որու մէջ գային յետոյ՝ Տրապիզոնի Աւետարանը . Աղեքսանդրու պատմութիւնը , եւն . առոնց համար աւելի ծախս պէտք է , բայց Ս . Ղազարու վանքը ունի միջոցներ , եւ այդպիսի գէթ մէկ քանի հրատարակութիւններ Հայոց ու Եւրոպացուց բոլոր մասնագէտներուն , արուեստասէրներուն կողմէ ջերմ ընդունելութիւն կը գտնեն եւ ծախքը կըհանեն օր մը ծանկալի էր որ վենետիկ Միքայէլիսի ընդունակէր անտարբեր մնալ այս գեղեցիկ գործին հանդէպ :

Էջմիածնայ մատենադարանին մէջ եւս կան բազմաթիւ նկարազարդ ձեռագրեր , որոնց մէկ քանին հոյակապ արտադրութիւններ են հայ մանրանկարչական արուեստի . առոնց գլխաւորներէն ոմանց մասին գաղափար մը տալու համար Անահիթի ընթերցողներուն , յառաջիկայ թիւին մէջ պիտի հրատարակեմ յօդուած մը զոր վանքին ամենէն հմուտ միաբաններէն մին՝ Հ . Գարեգին Վարդ . Յովսէփեան հաճեցաւ պատրաստել իմ խնդրանքովս : Ինչպէս արդէն գրած եմ Անահիթի մէջ , Հ . Գարեգին վաղուց հետաքրքրուած է հայ հին մանրանկարչութեան արուեստով , ցանկացած է էջմիածնայ ամենէն կարեւոր նկարազարդ ձեռագիրներէն մէկուն ամբողջական լուսանկարչային հրատարակութեանը ձեռնարկել ընդարձակ ուսումնասիրութեամբ մը . երանի՜ թէ կարենար վերջապէս իր այդ գեղեցիկ ծրագիրն իրականացնել (1) : Յայտնի է նաեւ որ Մեսրոպ եպիսկոպոս

Տէր-Մովսէսեան տարիներէ ի վեր աշխարհիս այլ եւ այլ կողմը գտնուած հայ ձեռագիրներու գլխաւոր հաւաքածուներուն ցուցակները համառօտապէս պատրաստած է , եւ մտադիր է ընդհանուր ցուցակ մը կազմել . շատ խոշոր ձեռնարկ , որուն լիակատար իրագործումը մէկ մարդու ուժէն վեր է թերեւս . լաւագոյն է՝ ընտրել բաժին մը եւ անոր վրայ աշխատիլ մանրակրկիտ կերպով , օրինակի համար՝ Տաղարաններ կամ ուրիշ շարք մը . — բայց Մեսրոպ եպիսկոպոս ունի նաեւ ճոխ շարք մը լուսանկարուած մանրանկարներու . Երուսաղէմի ձեռագիրներէն լուսանկարած իր կտորները , (որոնցմէ մին , ուր կ'երեւայ մեր Լեւոն Գ . թագաւորը՝ իր ընտանիքով , հրատարակեցինք Անահիթի մէջ՝ Մեսրոպ եպիսկոպոսի մէկ ուսումնասիրութեամբ) , վերջին ծայր գեղեցիկ են եւ շահեկան . ինչո՞ւ է՛ն առաջ՝ այդ նկարներու շարքը կամ անոնց մէկ մասը չհրատարակէր մասնաւոր ուսումնասիրութեամբ մը (*):

* *

Մեր նախնեաց գործին ծանօթացուած լրացնող կարեւոր միջոց մըն ալ Ֆոլիարի ուսումնասիրութիւնն է : Ժողովրդին մէջ աւանդաբար պահպանուած վէպեր , հէքեաթներ , երգեր , բարքեր , սովորոյթներ , առասպելներ , հաւատալիքներ , հանդէսներ , կախարդական , բժշկական , միջոցներ , եւ այլն ,² մէկ բաժինն են նոտիանեաց գործին . անոնց կեանքին , մտայնութեան մէկ ստուար ու ընտանի մասն է , որ՝ ոչ թէ քարի , փայտի կամ թղթի վրայ սեւեռուելով՝ այլ ժողովրդին մաքին մէջ իսկ հաստատուած՝ դարէ զար անջինջ յաւելումներ , փոփոխումներ կրելով , եկեր հասեր է մեզի : Ինքնին արդէն հրապուրիչ ու սիրուն , այդ ֆոքլորական գանձերը մեր հայրերուն պատմութեան , գրականութեան , արուեստին ու կեանքին վրայ շատ բան բացատրող լոյս մը պիտի սփռեն : Այս ճիւղին մէջ մենք՝ ուրախութեամբ կարելի է հաստատել՝ յետամնաց չենք . սկսեալ Արովեանէն , Պոօշեանցէն , մին-

(1) Մասնաւոր նամակէ մը կ'իմանամ թէ Հ . Գարեգին այժմ կը պատրաստէ ընդարձակ ուսումնասիրութիւն մը « Արեւիկան ճառոց » հոյակապ ցկարագարդ ձեռագրին վրայ , զոր իմ կը նկատէ հայ մանրանկարչական արուեստին գլուխ-գործոցներէն մին : Սպասելով որ Մ . Արթուր սնտական կացութիւնը լրջօրէն բարեկարգուելով կարող դարձնէ միաբանութիւնը այդ կարգի գործերու սպազութիւնը իր իսկ որումով ղեկը , եւ մաղթեմ որ ասուէր

մեկեանս մը որ՝ բմբուէր այդպիսի նրատարակութեան մը կարեւորութիւնը եւ յանձն առնէր անոր համար ֆարկաւօք եղած գումարը նուիրել :

(*) Հանդիմով կը տեսնեմ որ «Ազգագրական Հանդէս»-ի վերջին թիւին մէջ Մեսրոպ եպիսկոպոս Երուսաղէմայ ձեռագիրներու այդ մանրանկարներէն ոմանց մասին ուսումնասիրութիւն մը նրատարակած է :

չեւ Սրուանձտեանց, Հայկունի եւ այլք, մեծ քանակութեամբ նիւթեղէն պաշար հաւաքուած է. իսկ Պ. Լալայեան արդէն ֆոլքլորական գործունէութիւնը լուրջ գիտական հոգի վրայ դրաւ, տարիներէ ի վեր ան այդ դերը կը կատարէ իր հմուտ վարպետի լիալիր գիտակցութեամբ եւ առաքելի անձնագործ կռանդով: Ներհուն բանասէրներ, Մ. Աբեղեան, Ս. Կանայեանց սկսած են արդէն մեր ժողովրդական ականդութեանց, ժողովրդական դիւցազնավէպերու եւ մեր հին պատմութեան միջեւ գտնուած թաքուն աղերսը փնտռել եւ երեւան հանել: Վանէն կը սկսի շողալ նոր Սրուանձտեանց մը, բազմաշան ու կրակոտ Չիթունի: Այդ ճամբուն մէջ, որ լաւ բացուած է՝ հետեւողներու համար, եւ ուր վարժ գործիչներ կ'աշխատին մինչեւ այսօր եռանդով ու գիտակցութեամբ, շատ բան կայ դեռ ընելու:

* * *

Ահա՛ մտաւոր գործունէութեան ընդհանուր ծրագիր մը, որ նոյն ատեն շատ բեղուն ծրագիր մըն ալ է գերազանցապէս եւ իրապէս «չազգասիրական» գործունէութեան: Ասոր իրենց աջակցութիւնը կարող են բերել մեր ժողովրդին բոլոր տարրերը, իւրաքանչիւրն իր միջոցներովն ու չափովը, թէ՛ հոգեւորականը թէ՛ անհաւատը, թէ՛ յեղափոխականը թէ՛ պահպանողականը, թէ՛ հարուստը, թէ՛ աղքատը, որովհետեւ ասիկա ոչ միայն ընդհանուր գիտական տեսակէտով կարեւորութիւն ունեցող գործ մըն է, այլ մեզ համար՝ մեր ամենաէական, ամենաբարձր շահերուն, մեր «պատուոյն» հետ կապ ունեցող հարց մըն է: Ի՛նչ հոյակապ, անսահման, յուռթի գործունէութիւն, մանաւանդ՝ երիտասարդ մշտաքերու համար. ի՛նչքան օգտակար ու գեղեցիկ կերպով այդտեղ կարող են ասոնք իրենց նորաթուիչ ուժերը գործածել՝ փոխանակ զանոնք յումպէտս վատնելու՝ ինչպէս սովորական երեւոյթ մը սկսաւ դառնալ՝ «փոլիթիսիէն» ի կամ՝ մեր բառով՝ «ազգայինճի» ի յիմար ու ամուլ փառամոլութիւններու, կռուազանութիւններու մէջ:

ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ս Ա Ն Ի Ք Ը

Մինչ ՀԱՅՅԵՐԷՆ լեզուն և հայ գրական, ճարտարապետական, երաժշտական արտագրութիւններն բազում քննութեանց առարկայ եղած են կէս դարէ ի վեր թէ՛ հայ և թէ՛ օտար ուսումնասէրներու կողմէն, տակաւին հայկական հարսանիքը, մին հայ ցեղին հոյակապ հաստատութիւններէն, կը մնայ անխոզարկեալ և անծանօթ: Հայկական եկեղեցիին պէս՝ հայկական հարսանիքն ալ ցեղին հոգւոյն շատ բարդ և շատ հաւատարիմ՝ մէկ պատկերն է: Ու հարսանիքը աւելի բարդ ու աւելի ճշգրիտ պատկերն է հայ հոգւոյն, վասն զի իր մէջ կը միացնէ հոգեւորն ու մարմնաւորը, կրօնականն ու աշխարհայինը: Աչ միայն հայ լեզուն և բանաստեղծականն ու երաժշտական արուեստը իրենց պարզ գեղեցկութիւնովը ի հանդէս կու գան հարսանեաց մէջ, այլ և ցեղին բարոյական ըզձանքը, հոգեկան լրջութիւնն ու ընտանեկան իտեալը: Քրիստոնէական ու հայկական տարրերը հոն զիրար թափանցած՝ ներգաշնակ ու գեղեցիկ միութիւն մը կազմած են: Ամբողջութիւնը այնքան խորապէս հայկական է որ ոչ ոք երբեք կը մտածէ վերլուծել զայն իր տարրերուն: Տաներէցը, տիրացուն, շարականն ու աղօթքը խառնուած են սիրոյ երգերուն, գինիին, պարին, խնջոյքին և երաժշտական գործիչներուն հետ: Երկին ու երկիր գիրկընդխառն են հայ հարսանիքին մէջ: Եկեղեցին ընտանիքի խորհրդաւոր ծոցէն առած է իր վեհագոյն խորհուրդը, և ընտանիքն ալ իր հարսանեաց մէջ եկեղեցիէն կ'առնէ իր հոգեկան վսեմութիւնը: Եկեղեցին կ'երգէ

Խորհուրդ մեծ եւ սեանցելի որ յայսմ առու յայտեցար .
Հովիւքն երգեն ընդ հրեցակս ,
սան աւեթս աւխարհի .
Ծնաւ նոր արեայ ի Բեթղէմէմ Բաղափի :

Այսինքն, Աստուած մարդ եղած է որպէս զի մարդն Աստուած ըլլայ: Այդ է բրիտանեական կրօնին ծուծը: Իսկ հայկական հարսանիքին խորհուրդն այս է թէ տղան նորէն աշխարհ կը մտնէ, կը վերածնի, կը պսակուի, որպէս զի «թագաւոր» ըլլայ, գլուխը փոքրիկ պետութեան մը, որուն քաղաքացիներն ինք

պիտի ստեղծէ, ինք պիտի կաղմակերպէ ու վարէ, և ընէ գոյն իտեալ պետութիւն մը — սիրոյ, գութի, համերաշխութեան, անձնութիւնութեան, երջանկութեան թագաւորութիւնը, ըստ օրինակի երկնից թագաւորութեան:

Այս ըմբռնումով է որ փեսան «թագաւոր» կը կոչուի, մէջքը «սուր» կը կապէ, հարսին հետ «կը պսակուի» որ թագուհին եղած կ'ըլլայ: «Թագաւորը» հարսանեաց բոլոր օրերուն մէջ եզական պատիւներու կ'արժանանայ. ան միշտ ուրիշներէն բարձր կը նստի. ձիով կ'երթայ եկեղեցի՝ պսակուելու. միայն անոր գինի խմելուն աւիթով է որ մեծագոյրդ աղմուկ կը հանեն հարսնեւորը: Ամէն բան հաշուեալ է երիտասարդին վրայ խորապէս տպաւորելու Հարսանեաց կամ ամուսնութեան խորհուրդը թէ ինքը «մարդ է եղած», «քաղաքացի» մը, «պետ մը», թէ «աստիճան» մը ստացած է, տեսակ մը «թագաւոր» օժուած է, և թէ ահա կը թեւակոխէ կեանքի նոր ասպարէզ մը ուր իր հոգւոյն ամենալաւ բնագոյններն և բարձրագոյն կարելիութիւններն արդիւնաւորման կը կոչուին:

Մինչ փեսային այս պատիւները կը շուայեն զինքը իր նոր կացութեան բարձրութեանը գիտակից ընելու համար, միւս կողմէն հարսին հետ կը վարուին իբրև Հարսանեաց կեդրոնին և հոգիին հետ: Իրօք, Անգլո-Սաքսոն weddingը (հարսանիք) խոստում կամ ուխտ կը նշանակէ. թրքական «տիկիւն»ը կապ կամ գօգում ըսել է. իսկ մեր նախնիք «հարսանիք» բառը շինած են «հարս» արմատէն: Հարսանեաց բոլոր իմաստը, խնդիրը «հարս» առնելուն մէջ տեսած են. և արդարև հարս բառը նոյն իսկ հարց բառին մէկ եղանակաւորումն է: Մեր լեզուին ամենէն ոսկեգօծ բառն է հարսը և մեր երևակայութեան յառջև կը բերէ ամենէն գողտրիկ, սիրուն, նազեղիմ, աղուոր, պաշտելի էակը, որ զգեստաւորուած է ամենէն գեղեցիկ և թանկագին հանդերձներով, և ամենէն փափկանկատ ու գորովագին խնամքներով շրջապատուած է: Հարսանեաց բոլոր երգերն հարսին վրայով են, բաց ի մէկէն որ «թագաւոր»-ին նուիրուած է:

* *

Իմ այս ուսումնասիրութեան մէջ պիտի

նկարագրեմ Հայկական Հարսանիքը ինչպէս տեսած եմ ես գոյն իմ բնիկ քաղաքին մէջ, յԱհն: Այլևայլ գաւառացիներէ հարցնելով իմացած եմ թէ մինչ շատ տեղեր հարսանեաց ինչ ինչ արարքներ նման են Ահնականին, և կարգ մը բաներու մէջ ալ ուրիշ ցեղերու մէջ տեսնուած են, Ահնայ Հարսանիքը, իր ամբողջութեան մէջ, եզական է, և վաղնջական ազնուականութեան գծերը բոլորովին պահպանած է: Նախարարական կամ իշխանագուն ընտանիքներ Ահնայ գաղութը հիմնած և հոն՝ ուրիշ աւանդութեանց հետ, բերած են նաև Հայկական Հարսանիքը իր բարձրագոյն և բնիկ տարագովը:

Հոս ոչ միայն պիտի նկարագրեմ Հայկական տիպար Հարսանիքը, որպէս գտած եմ գոյն յԱհն, այլ և պիտի փորձեմ այդ տիպարը մաքրագործուած ներկայացնել: Ինչպէս որ հին դարուց նկարչական հրաշակերտի մը վրայ խակ վարպետներ վերջէն իրենց վրձինը կը փորձեն երբեմն՝ և կը խաթարեն չափով մը անոր գերագոյն աղուորութիւնը, այնպէս ալ մեր հարսանեական երգերուն վրայ նորահասարակ և տգեղ յաւելումներ եղած են որք բնիկ հայ բանաստեղծութեան նկարագիրը բնաւ չունին: Ասոնք իբրև համբակի գծեր պատկերէն կը սրբեմ կը հանեմ:

Թեթև փոփոխութիւններ կ'ընեմ նաև քերականական տեսակետէ. գոր օրինակ, փոխանակ ըսելու, ինչպէս յԱհն կ'ըսուի. «Ելի կոյնէ՛, թագաւոր աղբար, ես քեզ գովիմ գլխուս ի վար.» ես պիտի գրեմ հոս. «Ելի կայնէ՛, թագաւոր աղբար, ես քեզ գովեմ գլխուդ ի վար.» Այսքան մը ուղղագրական փոփոխութիւն ընել հարկ կը սեպեմ, քանի որ իմ նպատակս չէ Ահնայ գաւառաբարբառին ճշգրիտ օրինակները տալ, այլ Հարսանիքը նկարագրել:

* *

Այժմ տեսնենք թէ ինչպէս կ'ընեն Հայկական Հարսանիքը:

Նախ յիշենք թէ նշանտուքը որ բուն հարսանիքէն ամիսներ առաջ կ'ըլլայ սովորաբար, ունի իր հետաքրքրական հանգամանքները: Բարեկամաց միջոցաւ աղջկան ծնողաց հաւանութեան ծանօթանալէ վերջն է որ տղուն կողմէն ծնողքը և մէկ-երկու ազգականք կ'երթան «նը-

շան՝ը տարու աղջկան, կամ զնէ նշանելու՝
 իրենց տղուն: Ոսկեգրամ է նշանը զոր աղջկան
 կընծայեն, և որով նէ իրենց «Տարսնցուն»
 կըլլայ: Ժամանակ մը վերջը «աղջիկտես» կ'եր-
 թան տղուն կողմէն աւելի մեծ բազմութեամբ
 երբ այցելուաց իւրաքանչիւրը ոսկեգրամ մը,
 մը, մեծ կամ պզտիկ, կը նուիրէ Տարսնցունին:
 Աղջկան կողմէն ալ տղուն կողմը «փեսատես»
 կ'երթան և կը պատուասիրուին:

Նշանտուքի օրէն մինչև ամուսնութեան օրը
 կրնայ ամիսներ կամ տարի անցնիլ, սակայն
 տղան, աւելորդ է ըսել, իր նշանածին հետ ո՛չ
 կրնայ տեսակցիլ և ո՛չ պտըտիլ. միայն կէս-
 գաղտագողի կ'երթայ վայրկենական տեսութեան,
 երբ Տարսնցունին հայրը բացակայ է տնէն, և
 կիննր միայն ներկայ են: Տղան շատ ուրախ
 կ'ըլլայ իր նշանածին երեսը վայրկեան մը տես-
 նելու: Այսպէս էր մինչև 25-30 տարի առաջ:
 Անկէ ի վեր բարեփոխումներ և չարափոխումներ
 կրնան եղած ըլլալ:

Նշանտուքէն մինչև հարսանեաց օրը աղջկան
 կողմը շատ զբաղած կ'ըլլայ օժիտի պատրաս-
 տութեամբ: Երեքէն ութ ձեռք զգեստ օժիտ
 կուտան աղջկան ծնողքը՝ ըստ կարողութեան:
 Համի ու Հալէպի պէսպէս ու գունագեղ մե-
 տաքսեայ թանկ պարեգօտներ, և ձիւնափայլ
 կամ գեղնորակ մուշտակներ, երկար և կարճ
 (կոճիկ քիւրք), շալ գօտիներ, մետաքսեայ շա-
 պիկներ, ևն. ևն. կը բաղկացնեն օժիտը: Այդ
 բոլոր ժամանակամիջոցին՝ հարսանեկան մթնո-
 լորտ մը կը տիրէ աղջկան շուրջ, բայց ամենէն
 շատ մայրն է սրտայոյզ և ծանրագրաւ: Հայ
 մօր մը կենանքին ամենէն կարևոր գէպքը իր
 աղջկան ամուսնութիւնն է, և իրօք պատասխա-
 նատուութեան ծանրութիւնը կը հաւասարի ներա
 անպատում ուրախութեան:

Հարսանիքէն ութ օր առաջ տղուն ծնողքը
 կը ծանուցանեն աղջկան ծնողաց՝ հարսանեաց օրը.
 «իմաց կ'անեն» Ակնայ բարբառով:

Հարսանիքը սովորաբար երեք օր կը տեւէ,
 թէև մեծատունք և իշխանք երբեմն շաբաթ մը
 կամ աւելի կը շարունակեն:

Հարսանեաց առաջին օրը

Հարսանեաց առաջին օրը զգեստաւորման օր
 է, երկրորդ օրը՝ պսակի, երրորդ օրը ուրա-
 խութեան և պարի:

Ընգհանրապէս առաջին օրը կիրակի օրն է:
 Շաբաթ երեկոյ փեսան և երիտասարդ բարե-
 կամներ բազնիք կ'երթան: Վիրակի առաւօտ,
 կէս օրէն առաջ, փեսան կը հագցնեն: Փեսային
 այս զգեստաւորումը լուրջ արարողութիւն է:
 Չեռք մը նոր զգեստ շինուած պատրաստուած
 է, «հալաւը» զոր քահանան կ'օրհնէ և տիրա-
 ցուններ շարականներ կ'երգեն: Այնուհետև
 հանգիստաւոր կերպով տղուն նոր զգեստները կը
 հագցընեն, աղջկան կողմէն ևս քանի մը հոգի
 հրաւիրուած ըլլալով այս հանգէսին:

Կնքահայրը և կնքամայրը շատ նուիրական
 անձնաւորութիւններ են: Կնքահօր անկ է փե-
 սային զգեստներն հագցնել, ինչպէս կնքամօրն՝
 աղջկան զգեստներն զգեցնել:

Կնքահայրը հետզհետէ զգեստուց իւրա-
 քանչիւրը զատ զատ աւնելով կը պտըտցնէ երեք
 անգամ տղուն շուրջը՝ ըսելով բարձրաձայն.
 «Աստուած շնորհաւոր անէ. Աստուած շնորհա-
 ւոր անէ. շնորհաւորն Աստուած անէ.» Այս
 «շնորհաւորն Աստուած անէ» բոլոր հանգիստ-
 կանք կ'ըսեն կնքահօր հետ միաձայն:

Այս մաղթանքները կը կրկնուին անձնիւր
 կտորի վրայ, և այս կերպով բաճկոնը, պարե-
 գօտը, գօտին, թիկնոցը կը հագցնեն: Ամենէն
 վերջը գլխարկը գլուխը կը դնեն. այս ալ տղուն
 հօրը վերապահուած է, որ կը համբուրէ միան-
 գամայն իր որդւոյն ճակատը և գրպանը դրամ
 կը լեցնէ:

Այս հանգիսին մէջ սովորաբար դրամական
 նուէրներ կը տրուին քաղաքին կրթական կամ
 բարեսիրական հաստատութեանց համար:

Փեսին զգեստաւորումը երբ կ'աւարտի, հե-
 տեւեալ երգը կ'երգեն ի գովեստ անոր

- (1). Ելի կայնէ, քազուր աղբա՛ր .
 Ես եեզ գովեմ զլիւուդ ի վար,
 Առաջ ես եու հասակդ քսեմ,
 Որ չիմարի ծառ կը նմանի .
 Անկէց ես եու երեսն քսեմ,
 Որ լուսընկի կալ կը նմանի .
 Անկէց ես եու մազերն քսեմ,
 Որ առիւծի բաւ կը նմանի .
 (Որ սրումայի թել կը նմանի .)
 Անկէց ես եու աչքերն քսեմ,
 Որ շահեմի աչք կը նմանի :

Հոս կ'արժէ ի մէջ բերել յոյժ գեղեցիկ
 գովեստ մը Ակնայ բանաստեղծութիւններէն որ

փեսային վրայ ըսուած է . թէ և չեն երգեր զայն այժմ .

- (2) Ան բարձր լեռնէն ի վար
Մեզի բարկ արեւ մին է ցաքէ .
Ամենուն երդիցն ի վար ,
Մեզի դուռն ի ներս է հաւապէր :
Ամէնդ ի վրայ եկէք ,
Թագուորին կապան կարեցէք .
Լուսրեկան առաւ արեւ ,
Արեգակն երես ձեւեցէք .
Ան մամր ու խոռո առաջեր
Թեւերուն կոնակ կարեցէք :

Մարդկային երեւակայութիւնը քան զայս աւելի փառահեղ զգեստ չէ կարող ստեղծել : Երկնաւոր թագաւորին հանդերձն է զոր կ'ուզեն հագցնել իրենց «թագաւոր»ին :

Աղջկան զգեստաւորումը աւելի կարեւոր և երկար արարուած մը կը կացուցանէ : Կէս օրէն վերջ՝ տղուն կողմէն խնամիներու երկսեռ բազմութիւն մը , փեսացուն ալ միասին , կ'երթան աղջկան տունը : Միասին կը տանին նաև հարսնացուին ձեռք մը զգեստը որ տղուն կողմէն ընծայ է : Քահանան հարսնացուին հալաւն ևս կ'օրհնէ : Բայց զգեստաւորման արարողութիւնը կիներու սրահին մէջ տեղի կ'ունենայ , մինչ այր մարդիկ զատ սրահի մէջ կը հիւրասիրուին :

Առանձին սենեակի մը մէջ կը հագցնեն հարսնացուին ընծայուած լաթերը , բաց ի գըլ՝ խորհէն և գօտիէն , և կ'առաջնորդեն զնէ խնամիներուն սրահը : Այն պահուն երբ նէ կ'երևայ սեւամին վրայ , խնամիները կ'երգեն հետեւեալը .

- (3) Աղջիկ , բու հազա՞դ ալ (կարմիր) է ,
Ալուկ փէտեղ վեր ծալէ .
Քալէ ու մանրահիկ քալէ ,
Քու աղտուկ պոյիկդ երեւայ :

Այս երգը վերջին ժամանակաց գործ է , զի նոյնայանգ է , և յանգերն արուեստակեալ են (ալ է , ծալէ , քալէ :

Բնիկ հայ քերթուածի շնորհքէն զուրկ է հետեւեալ կտորը .

- (4) Առաւօտուն կ'ելլես , երեսդ լուս .
Էպրում մագերդ դրե ես հիմա .
Աս աղուար երեսդ պագ մի տուր ճրա :

Առաւօտուն երեսը լուսուրդաւորդ խրատը կու տայ հոս որպէս զի «հինա» (կարմիր ներկող շաղախ մըն է) բառին հետ յանգ մը կազմած ըլլայ . իսկ երրորդ տողը , շատ համարձակ և

շատ յանկարծական , երբէք չի յարմարիր Ահնայ հին ծանր բարքերուն :

Նոյնքան նորերուկ և անշնորհ է հետեւեալը .

- (5) Առաւօտուն կ'ելլես արեւ կը ցաքէ ,
Բերանդ որ կը բանաս մեղր կը կաքէ .
Եկուր հստիցն ամուս ամուս խորաքէ :

«Առաւօտուն կ'ելլես , արեւ կը ցաթէ» խօսքը ո՛ր է կապ չունի «բերանդ կը բանաս» մեղր կը կաթէ» խօսքին հետ , բայց խակ յօրինիչը ուղած է «ցաթէ , կաթէ , խորաթէ» յանգերը ձեւացնել :

Աւելի լաւ է սա կտորը .

- (6) Աղուար մին է կայներ դրանը կէսը .
Շարեր ոսկի լ'արծաթ՝ ձգեր երեսը .
Հագար ոսկի կ'արծէ , աղուար՝ բու տեսը :

- (7) Վերէն ի վար կուգաս , բարակ ձայնով ես .
Չես չես խորաքէր , վախեմ բեցով ես .
Աղուարին ցեղէն ես , այս (միջ) խումով ես :
(8) Նագ արէ , հագ արէ , հագդ վերցրեմ .
Այս երգի նու ու շարք կերպրեմ .
Հագրեմ կապրեմ , մարմնդ խրկեմ :

Այս երգերուն երգուած ժամանակը աղջիկը նստած կ'ըլլայ իր մօր կամ անոր փոխանորդին (մօրբորոջ , հօրբորոջ) առջև , իբր անոր ապաստանած : Երգուած այլ և այլ երգերուն մէջ բնիկ ուլ հին գեղեցիկ երգը հետեւեալն է .

- (9) Ոլրեցար , բոլրեցար ,
Աղուար , համբան մոլրեցար .
Մոլրեցար ու ներս եկար :

Այս կտորին մէջ ևս յանգերը նման են , բայց փնտռուած յանգեր չեն , այլ ինքնեկ : Բնիկ հայկական ձևը անմիջապէս աչքի կը զարնէ բառերուն կրկնութեանն ու իմաստին բնական իթթումին մէջ . առաջին տողը «ոլրեցար , բոլրեցար» աղուար նկարագիր մ'է որ կ'ակնարկէ հարսին քիչ կամ շատ հեռուէն եկած ըլլալուն (երբեմն ուրիշ գիւղէ մը կամ քաղաքէ մը) : Երկրորդ տողը «Աղուար , ճամբան մոլրեցար»ը կը կրկնէ առաջին տողին իմաստը , զայն ընդլայնելով : Երրորդ տողը կը կրկնէ երկրորդին միտքը , նոյնպէս զայն ընդլայնելով և բնական եզրակացութեանը հասցնելով՝ «Մոլրեցար ու ներս եկար» : Այդ երեք տողով փոքրիկ քերթուածը անարատ ու անգին գոհար մըն է հայկական բանաստեղծութեան :

Կ'երգեն նաև հետեւեալ կտորը , ուր նմանապէս կը տեսնենք բառերուն և իմաստներուն

բնական ու վայելուչ խաղացքը, առանց ու է արուեստականութեան .

- (10) Աղու՛ր, քեզ ո՛ր մայր է բերե՛ր .
- Ան բուխ աչու՛ի մայրն է բերե՛ր .
- Մայրն է բերե՛ր մեզի համար ,
- Մենք ենք եկե՛ր քեզի համար .
- Քեզ ճի տանի՞նք վեզի համար :
- Հա՛յ իմ հա՛յ , անճրման աղու՛ր ,
- Զի կայ քեզի նման աղու՛ր :

„Մենք ենք եկե՛ր քեզի համար, քեզ տի տանինք մեզի համար“ը երգելէն վերջ կը կատարեն հարսն առնելու արարողութիւնը որ հարսանեաց ամենէն տարօրինակ արարուածն է, բայց չէ առանց նշանակութեան : Խնամի տիկիններէն մէկը կ'ելլէ և մօտենալով հարսնցուին, անոր երկու թեւերէն կը բռնէ և մօրը գրկէն առնել կը փորձէ, բայց չի յաջողիր : Երկրորդ, երրորդ, երբեմն մինչև վեցերորդ մը նոյն փորձը կու գան կատարել, և կը վրիպին : Այն ատեն սա յայտարարութիւնը կ'ընէ վերջին փորձողը — „Հարսը ծանր է նստեր, կնքամայր կ'ուզէ :“ Աւ կնքամայրը, խնամիներուն է՛ն նըւերականը, է՛ն անդիմադրելին, կու գայ և երբ աղջիկն առնել կը փորձէ, ահա նէ կ'ելլէ ոտքի յուշիկ և կը յանձնուի : Կնքամայրը կ'առաջնորդէ զնէ սենեակին կեդրոնը, ուր բարձեր իրարու վրայ դնելով հարսը վրան կը նստեցնեն և կնքամայրը անոր գօտին կը կապէ և գլխարկը գլուխը կը դնէ : Այժմ լրացած է հարսին զգեստաւորումը . անոր բոլոր հագածները կեսրոնց կողմէն զրկուած զգեստներն են . հարսը պատրաստած են ուրեմն իրենց տունը տանելու, ուստի ցնծապին կը հնչեցնեն իրենց յաղթանակի երգը, որ է .

- (11) Եկո՛ւր, աղու՛ր աղջիկ, հարս եղար մեզի .
- Եսխուք, զմուք, անգին քար եղար մեզի :
- Առաւօտուն կ'ելլես պաղ պող հովերուն .
- Սոխակ խորան կազմեր վարդի բալորուն .
- Որք վարդէն կ'առնէ, որք հովերուն .
- (Անուս Սաքենիկ է այն վարդին անունն :)

Այս նկարագրութենէն հեշտ է տեսնել թէ խնամիներուն այս այցելութեան նպատակը հարսը տեսնել չէ, այլ զայն առնել, զայն իրենցը հոստակել : Աւ առնելու արարուածը թատերական տեսարան մը կ'արժէ : Աղջիկը իբրև մատաղ տունկ մը իր ընտանեկան պարտէզէն խլելով, կ'ուզեն տանիլ անկեղ իրենց ընտանիքին ծոցը .

քանի մը տիկիններ կը փորձեն զայն քաշել հանել մայրական գրկէն, չեն յաջողիր . վերջապէս կնքամօր ձեռքերը կը տանին յաղթանակը : Բռնութեան այս մեղմ կիրարկութիւնը անշուշտ նուազեալ արձագանգն է բարբարոս դարերու սովորութեան՝ երբ աղջիկները բռնի կը յափըշտակէին կը տանէին ի հարսնութիւն : Այս յափըշտակութեան գաղափարը ուրիշ տեսարանի մը մէջ ալ կը վերերեւի, երբ հետեւեալ առտուն, շատ կանուխ, տղուն կողմէն խումբ մը երիտասարդներ, ձի մը առած, կ'երթան աղջկան տունը, զինքը եկեղեցի տանելու համար . սակայն տան դուռը չեն բանար աղջկան ծնողք, և խումբը երբեմն ժամ մը կամ աւելի կ'աղաչէ որ ներս ընդունուի, կամ տանիքէն վար իջնելու հնարը կը գտնէ : Այս ամբողջ կատակերգութիւնը վաղնջական բարբարոս և լուրջ մրցանքի յիշատակն է : Երկուստեք կը վայելեն կեղծ կուրծ այս պարագային մէջ, և ուրախ են . բայց աղջիկը իր մօր գրկէն առնելու նախորդ արարուածը շատ „փաթէթիք“ և սրտայոյզ է : Երբ տիկինները կ'երգեն „Աղու՛ր քեզ որ մայրն է բերեր . Ան թուխ-աչու՛ի մայրն է բերեր . Մայրն է բերեր մեզի համար, քեզ տի տանինք մեզի համար,“ թէ՛ մայրն ու թէ՛ աղջիկը դառնապէս կ'արտասուեն, ինչպէս ուրիշ մերձաւոր արեւնակիցներ : Մայրը շատ երջանիկ է իր սրտահաստը դուստրը ամուսնացնելուն համար, սակայն բաժանումը՝ թէ և երջանիկ բաժանում, իրեն համար ծանր է : Հոն տրամախոհութիւնը գործ չունի . զգացումներն են տիրապետող : Բայց նոյն իսկ շատ զարգացած և ուսեալ մայր մը, եթէ այդ արարուածով իր աղջիկէն բաժնուէր, և լսէր այդ սրտայոյզ երգը, հաւանօրէն չպիտի կրնար չարտասուել :

Հարսին զգեստաւորումէն վերջ երգուած երգերուն մէկը կ'անկարկէ էնոր քանի մը ժամ յետոյ մօրը տունէն մեկնումին դէպ ի կեսրոնց տունը .

- (12) Ման եկու՛ր, աղու՛ր, ման եկու՛ր .
- Դէպ ի մեր տունն ի դան եկու՛ր .
- Չեչ (երբէ) չես ի գար մեր բանէ ,
- Թուխ աչու՛ի հոգիս կու հանէ :
- Հայ իմ հայ անճրման աղու՛ր , եւ այլն :
- Յանուն փեսային կ'երգեն սա տողերը .

Առաւօտուն լուսուն աղու՛ր մի տեսայ ,

Գոհութիւն Աստուծոյ , ետր եղաւ ինձի .
Եսխուք , զմտութ , անգին քառ եղաւ ինձի :
Եկուր , աղուար աղջիկ , եւն . :

Վերջապէս տիկին մը սօջօ կ'երգէ հետեւեալ անտունին , (քաշ. և անուշ եղանակաւ մը) որ գովեստ և խրատ է առ հարսն .

- (13) Ա՛յ իմ հարստի դստի՛կ .
Ծոցդ այգի , ծառդ արմաւենի .
Արմաւը բու ծառդ կը լինի ,
Պիւլլիւլը բու ճեղդ կը քառի :
Քու ծառն ու ճեղդ ոսկի ,
Քու տերեւը վարդ կը նմանի :
Ես բու ծոցուն տէր պիտի ,
Ճեղքունդ արմաւ փայլի :
Հարսնուկ , ճեղ խրատ մի տամ .
Ականոց իս արտ .
(Թէ) որ գան ու հազար թան ,
Հագարէն մէկ խօսք մի խօսք ,
Ան ալ « չգիտեմ » թո՛ւ ,
Հագար չարէն խալթո՛ւ :

Ինձամիները ամէն տեսակ մեծարանօք կը մեծարուին , և վերջապէս ընթրի.քը աղջկան հօրը տունը ընելէն վերջը կը մեկնին , հարսը հոն թողելով , որպէս զի քանի մը ժամ կտքը , գիշերը , ձի և հրաւիրակներ զրկեն զինքը եկեղեցի՝ պսակման տանելու :

Այսպէս կը վերջանայ հարսանեաց առաջին օրը :

Հարսանեաց երկրորդ օրը

Արշալոյսէն երկու կամ երեք ժամ առաջ կը շարժին տղուն կողմէն խումբ մը երիտասարդներ — տղուն եղբայրները , քուզէնները , ևն . — երթալ հարսը եկեղեցի տանելու համար : Հարսը , ինչպէս փեսան , անվրէպ ձի հեծած պէտք է երթան պսակուելու : Ինչպէս վերև անարկեցի , հարսնաղբարներու խումբը ձի մը առած կ'երթայ աղջկան տունը և կատակերգակ զիմազրութիւններու յաղթելով իր մուտքը կը գործէ , կը մեծարուի , և աղջկը ձի հեծցուցած կը գիմէ եկեղեցի : Աղջկան եղբայրներն և քանի մը մերձաւոր ազգականք , ինչպէս նաև հարսնաղբ կոչուած մատաղ տիկին մը խումբին միացած կ'երթան եկեղեցի : Փեսան ևս ուրիշ խումբի մը հետ հոն հասած կ'ըլլայ , Երէցը պսակի արարողութիւնը կը կատարէ : Փեսային սուրը պատեանէն հանելով սուրն ու պատեանը իրար խաչաձեւող զիւրքի մէջ կը դնէ

կնքահայրը փեսային ու հարսին գլուխներուն վրայ պսակման պահուն : Հարսն ու փեսան ձիերը կը հեծնեն և երկու խումբերը միացած , երգելով՝ առօք փառօք կը գիմեն փեսային տունը : «Առաւօա լուսուն»ը գլխաւոր երգն է և շատ պատշաճ է ժամուն , զի տուն կը հասնին արշալուսին :

Հարսանեաց ամենէն ուրախ վայրկեանը հասած է : Հարսնեւորները տանը առջևի բակը , բացօթեայ , կանգ կ'առնեն , և հարսն ու փեսան ձիերուն վրայ հեծած կը մնան բաւական ատեն , երբ տղուն կողմի ազգականներն և նուագածուները կ'երգեն փոխն ի փոխ հարսին ուղղեալ «բարեաւ եկար»ի մաղթանքը : Տողերը կարճ են , բայց չորս անգամ կը կրկնուին , սապէս .

Նուագածուն թէ՛ կը նուագէ և թէ՛ կ'երգէ սօջօ .

- (14) Բարի լո՛յս , աղուո՛ր , բարի լո՛յս ,
Բարի լո՛յս , աղուո՛ր , բարի լո՛յս :
և կին երգիչները կը կրկնեն նոյնը , իբրև արձագանգ .

Բարի լո՛յս , աղուո՛ր , բարի լո՛յս ,
Բարի լո՛յս , աղուո՛ր , բարի լո՛յս :

Նոյն կերպով յաջորդ տողերը .

- Բարի լուսուն բարին վրադ .
Որ ցաթէ արեւն ի վրադ :
Բարով եկար , դուն բարկ արեւ ,
Ցաթեցիր մեր տանն ի վերեւ :
Հայ իմ հայ , անհրման աղուար ,
Չի կայ ճեղի նման աղուար :

Այր նուագածուները տեսակ մը ջութակ (քէմէչէ) և դափ (դէֆ) կը զարնեն , իսկ կիները՝ դափ : Այս արարուածը կէս ժամ կամ աւելի կը տևէ : Անոր գեղեցկութիւնը աննկարագրելի է : Հայկական հարսանեաց ամենէն սիրալի , ամենէն փառաւոր , ամենէն ուրախ դրուագն է , և երգը՝ հարսանեկան երգերուն է՛ն աղուորն է որ կը հնչեցնեն հոն ցնծութեան շեշտերով : Բայց արարուածին ցնծագին հանգամանքէն աւելի բարձր հոգի մը , աղնուական բան մը , սիրոյ և յարգանքի յուզում մը կայ հոն նորեկ հարսին ուղղեալ :

Աղջկը իր նոր ընդգրկած ընտանիքին սեմին վրայ առաջին անգամ կը կոխէ , նոր կեանք մը կը սկսի նոր միջավայրէ մը բողբոլած , նոր հայր , մայր , քոյր և եղբայրներ կան հոս . արդեօք ի՞նչպէս պիտի վարուին իր հետ : Ահա

անոնք ամէնը, հանդերձ մտերիմ ազգականօք հոն են, հարսին ընդ առաջ ելած են, եւ անոր կ'ուզղեն ամենէն սիրալիր ողջոյնը. «Բարի լոյս, ազու՛որ, բարի լոյս:» Եւ կը շեշտեն անոր իմաստը, կը կենտրոնանան, կը շեշտեն իմաստը երկու ուրիշ ձեւով. «Բարի լուսուն բարին վրայ». «Որ ցաթէ արեն ի վրայ»: Եւ ապա գերագոյն յարգանքի ու սիրոյ խօսքը կը հնչեցնեն անոր ըսելով. «Բարով եկար դուն բարի-արե, ցաթեցիր մեր տանն ի վերե.՝ Գուն մեր տանը ուրախութիւն, զուարթութիւն, կեանք կը բերես իբրև արև նորածագ:

Հայ ընտանեկան սիրալիր հոգևոյն ամենէն գողտր ստեղծագործութիւնն է այս տեսարանը, որ բոլորովին իսկատիպ է ու հայկական. ուրիշ ո ե է ժողովուրդ, քաղաքակիրթ թէ բարբարոս, հարսը այս փառաւոր կերպով, այս բանաստեղծական եղանակաւ ընդունելու սովորութիւնը չունի:

Այս պահուն երգ մ'ալ կ'երգեն յատկապէս տղուն մայրը շնորհաւորելու համար.

- 15) Թագաւորի մա'յր, դուն դուրս եկուր.
- Քու բագաւոր որդեկդ եկեր է.
- Թե՛ք գնացեր, զոյգ եկեր է:

Բուն երգը այս երեք տողերէն կը բաղկանայ, թէպէտ կան նուազ ազուր տողեր ալ վերջէն յօրինուած, զոր ոմանք կ'երգեն, ոմանք ոչ:

Պատշաճօրէն կ'երգեն նաև նախորդ աւուր քանի մը տողերը — ոլըրեցար բոլըրեցար, Աղուոր, ճամբան մոլըրեցար...

Արարուածը կը վերջանայ սա կերպով: Թագաւորին հայրը մանր գրամներ կը ցանէ հարսին ու թագաւորին վրայ, և տղաքը կը ժողվեն: Ապա որդւոյն ճակատը կը համբուրէ ու ձիէն կ'իջեցնէ. և ձիէն կ'իջեցնէ նաև հարսը: Հարսնեւորը բակէն կը մտնեն տունը:

Յիշենք թէ Խորենացին Արտաշիսի դիւցազններգութենէն հատակոտոր մը մէջ կը բերէ որ կը ցուցնէ թէ մեր հեթանոսութեան դարերէն շարունակուած է դրամ ցանելու (մարգարիտ, ոսկի, երբ թագաւորն է ամուսնացողը) սովորութիւնը.

- Տեղ ոսկի տեղայր ի փեսայուքեան Արսաւիսի,
- Տեղայր մարգարիտ ի հարսնուքեան Սաթիկեան:
- Իրօք Ահնայ մէջ դրամ միայն կը ցանեն,

մինչ ուրիշ գաւառներու մէջ կորեկ և այլն կը տեղան հարսին վրայ: (Ամերիկացիք բրինձ կը ցանեն երբեմն:)

Հարսանեաց երկրորդ օրը՝ ուրախութիւնը, խաղն ու խնծիղը գապաթնակէտը կը հասնին:

Հարսը, իր «հարսնբրոջ» հետ առանձին սենեակ մը կը գրաւեն, ուր թագաւորը կ'երթայ անոնց ընկերանալ մերթ ընդ մերթ և սեղանակցիլ. երկու կողմէն մտերիմ արենակիցներ ալ մուտք ունին հոն: Աւտող ու խմող բազմութիւնէն զատ կը պահուի այսպէս հարսը: Նէ միայն մասնաւոր առիթներով հարսնեւորաց սրահը կ'առաջնորդուի:

Կէս օրէն քիչ վերջ աղջկան կողմէն խնամիներու երկեսու բազմութիւն մը կու գան շնորհաւորել փեսային կողմը: Այս առիթով է որ հարսանեկան խրատախոսութիւնը իր ծայրագոյն սաստկութեանը կը հասնի: Գինի կը խմեն, կը պարեն, կը խաղան, և վերջապէս մեծ հացկերոյթը կ'ընեն:

Երկու տեսակ է խաղը. թեւ-խաղ և պար: Թեւ-խաղ կը նշանակէ դէմ առ դէմ երկու անձանց խաղալը. երբեմն երկու, երեք զոյգեր այսպէս կը կազմուին միահաղոյն, ըստ տարողութեան սրահին: Կիները, հարսները աւելի կը շարժեն իրենց բազուկները խաղալու ատեն, իսկ այր մարդիկ թէ՛ բազուկներու և թէ՛ սրունքներու շարժումները աւելի եռանդով կը կատարեն: Կան զարմանալի անհասներ, անհասաւտալի տոկունութեամբ մարդեր, որք երկու, երեք ժամ շարունակ կը խաղան, ընդմիջելով միայն գինւոյ բաժակը պարպելու համար, կամ ուրիշ ընկեր մը իրենց դէմ եղած տեսնելու: Հայկական հարսանեաց մէջ տաւուլ զուռնայ չեն գործածուիր, այլ քէմէչէ, տափ, սանթուռ (տեսակ մը տաւիղ՝ մետաղէ թելերով), և սազ: Խաղի երգերը հայերէն և տաճկերէն են: Մանաւանդ այս աւուր ուրախութեանց մէջ է որ շատ մը տաճկերէն երգեր կ'երգուին — «Ալ կէօզլէրի» և «Մանի» կոչուած երգերը մանաւանդ, որ Ահնայ էն սիրական երգերն են, վասն զի սիրոյ և պանդխտութեան երգերն են անոնք:

Պարը Ահնայ մէջ սա կերպ է. կայ պարագլուխ մը (հալայ-պաշի) որ մէկ ձեռքը թաշկինակ մը կը բռնէ կը տատանէ և միւս ձեռքի

ձկոյթովը կը կցուի իրեն քովի պարընկերին ձկոյթին, այսպէս ամբողջ շարքը, ուր կը մըտնեն այրեր ու կիներ խառն: Եթէ ամառ է եղանակը, տանիքը վրան կը կազմեն և հոն կ'ընեն խրախճանութիւնն ու պարերը: Պարի երկար շարքը խաղալով կը դառնայ և կը դառնայ բոլորակ կամ ձուածէ շրջան յօրինելով: Անգամ մը հարսն ու փեսան ալ պարին մէջ կը մտցնեն. եթէ փեսան պարագլուխ ըլլայ, թաշկինակի փոխան իր սուրը կը տատանեցնէ: Այս առիթով բարեկամներէ ոմանք հարսին ծակատը ոսկեդրամ կը փակցնեն ի նուէր: Հարսը շնորհաւորելու աղուոր կերպ մ'է այս:

Երբ թագաւորը գինի խմէ, բոլոր հարսնեւորքը ահագին շփոթ կը հանեն, պատուհաններու փեղկերը, գաւաթները, պատառաքաղները իրարու զարնելով. այս աղմուկը լեցուն վայրկեան մը կը տեւէ ամէն անգամ: Այս ցոյցը միայն թագաւորին կ'ընեն: Այս է ծափահարութեան և կեցցէի աղաղակներու տեղը բռնող հին հայկական սովորոյթը:

Երեկոյն երբ աղջկան կողմէն եկած հարսնեւորները մեկնելու կը պատրաստուին, մտերմագոյնները կու գան հարսին սենեակը՝ մնաս բարով ըսելու: Այս ալ սրտայոյզ տեսարան մ'է: Սրտապնդումի կարօտ անձը մայրն է, և անոր կ'ուղղեն նուագածուք յանուն աղջկան, սա սողերը:

(16) Մի՛ լար, մայրի՛կ, մի՛ լար,
ես նորէն քի գամ.
Ասկի քսանքիկն օր
եղիովս քի գամ:

Ու մայրը աւելի՛ կու լայ:

Սմէնը կ'երթան, բայց «հարսնքոյր»ը կը մնայ հարսին պահապան հրեշտակը, մխիթարիչը և ընկերը:

Հարսանեաց երոզ օրը

Այս երրորդ օրը հարսանիքը կը սահմանափակուի սղուն կողմը, զի աղջկան կողմը երկրորդ օրը բարեկամք մեկնած են և ամէն ինչ վերջացած է: Տղուն կողմը կը շարունակէ խաղալ խնդալ, ուտել խմել մինչև երեկոյ, երբ բարեկամք մեծ մասամբ կը մեկնին:

Չորրորդ օրը, որ է չորեքշաբթի, առաւօտեան ճաշէն վերջը հարսին «պսակը վար

կ'առնէ» քահանան, և «հարսնքոյր»ը որ աղջկան ազգականաց վերջին ներկայացուցիչն է, կը մեկնի: Հարսանեկան շփոթը լուծ է բոլորովին. տունը հանգարտ է, այր մարդիկը գործի կ'երթան:

Չորեքշաբթի գիշեր առաջին անգամ ըլլալով՝ նորապսակ ամուլքն կ'առանձնան միասին իրենց առագաստի սենեակին մէջ: Անոնք այր և կին հոչակուելէ վերջ՝ երեք օր տեսակցած են ի ներկայութեան «հարսնքոյր» կամ կնքամօր, իբրև նախապատրաստութիւն մտերմական ու ներքին կենսակցութեան: Նկատելով մանաւանդ աղջկանց մատաղ հասակը, որ ընդհանրապէս 14-15 տարեկան կ'ամուսնացնեն, մեր նախնիք զգացած են թէ սղուն և աղջկան միջև մտերմական կենսակցութիւնը բարբարիկ հանգամանք մը պիտի ունենար եթէ յանկարծ, իբրև ստիւնով մը սկսէր: Երեք օրեայ շարունակ տեսակցութեան շնորհիւ նորապսակները չափով մը կ'ընտելան իրարու:

Հարսանիքը այսպէս կը վերջանայ, բայց նորապսակներուն համար կեանքի ամենէն անուշ և անմոռանալի տարին կը սկսի, զի անոնք տարւոյն գրեթէ կէսը ուրախութեան և խնջոյքի մէջ կ'անցընեն: Շաբաթ մը վերջը, յետ հարսանեաց, այն է յաջորդ կիրակին, աղջկան ազգականք խմբովին կ'այցելեն իրենց նոր խնամներուն և «երեւան կը հանեն» աղջիկը, որ կը ներկայանայ և կը համբուրէ ձեռքերնին և կ'ընդունի ոսկի ընծաներ նորէն: Այս ոսկիները «երեւան հանողէք» կը կոչուին:

Հարս ու փեսայ ամիսը անգամ մը կը հրաւիրուին աղջկան մարտնցմէ, ուր կը մնան շաբաթ մը: Տուն կը դառնան, և հազիւ շաբաթ մը կը մնան և ահա երկու խնամներուն մերձաւոր ազգականներէն մին կամ միւսը կը հրաւիրէ զիրենք: Հրաւեր կու գայ մօրքրորդէն, հօրքրորդէն, մեծ մարտնցմէն, քենեկալէն. ևն. ևն.: Սմէնուն ալ կ'երթան և իւրաքանչիւր տուն կը մնան քանի մը օր: Երբ տարիներ անցնին և քանի մը գաւազներ ծնին, այն ատեն հրաւերները աւելի ցանցառ կ'ըլլան և աւելի քիչ օրեր կը մնան հիւր:

Արդիացում Հայկական Հարսանիքին

Նկարագրեցի թէ ինչպէս կ'ըլլայ Հայկա-

կան Հարսանիքը . այժմ տեսնենք թէ ինչպէս պէտք է ըլլայ ան այսուհետեւ :

Էական գծերը պիտի պահենք, բայց կան գծեր ջնջելի և կան ևս որ պէտք է աւելցնենք որպէս զի հարսանիքը արդի յառաջդիմական ըմբռնումներուն համապատասխանէ : Այս փոփոխումներով մեր հարսանիքը աւելի աղուոր կ'ըլլայ առանց հայկական ըլլալէ դադրելու .

Ա) Պէտք է դուրս ձգել վերջին ժամանակներու գործ եղող անշնորհ երգերն, ինչպէս թիւ 3էն մինչև 8 :

Բ) Պէտք է եղանակները գանազան ընել, երգերէն ոմանց նոր ու աղուոր եղանակներ պատշաճեցնելով : Այժմ բոլոր հայերէն կտորները երեք եղանակ միայն ունին . մէկը «Բարի լոյս, աղուոր, բարի լոյս»-ին եղանակը, շատ պարզ, աղուոր, բնիկ հայկական, որ տիրապետող է, և բոլոր ութ վանկով տողերը այդ միևնոյն եղանակաւ կ'երգուին — թիւ 1, 3, 9, 10, 12, 14, 15 : Եւ որովհետև իւրաքանչիւր տող կը կրկնուի, դիւրին է երեւակայել ահաւոր և նոր ժամանակիս համար անհանգուրժելի միօրինակութիւնը որ ազդէ կը ծագի : Կարծեմ թէ այդ երգը (բարի լոյս, աղուոր, բարի լոյս) միայն պէտք է երգել, տողերուն աւանդական կրկնութեամբը, իր ծանօթ եղանակաւ, իսկ բոլոր միւսներուն պէտք է յարմարցնել կամ ստեղծել տարբեր եղանակներ :

Երկրորդ եղանակը 11 վանկով տողերուն եղանակն է (5—6) : Այս եղանակաւ կ'երգուին գոր օրինակ .

«Եկուր, աղուոր աղջիկ, հարս եղար մեզի» և «Մի՛ լար, մարիկ, չմի՛ լար, ես նորէն տի գամ»-ը :

Այս եղանակաւ կ'երգեն տաճկերէն կտորներ ալ, և կրնայ ըլլալ որ եղանակը շատ հին կամ բնիկ հայկական չէ : Յամենայն դէպս երաժշտական մասնաւոր արժէք մը չունի :

Թ. 13րդ երգը, «Ա՛յ իմ հարստի գտորիկ»-ը անտունի է, այսինքն միւս երգերուն պէս (որք 3 ական տողէ բազկացած տուններ կը կազմեն) տուններու բաժնուած չէ, այլ իբրև մէկ ամբողջ կը շարունակուի ծայրէ ծայր : Եղանակը քաշ է, դաշն ու մեղմ, և երգիչը դափ կը զարնէ նոյն ատեն շատ մեղմով, մանր մանր մատի արագ հարուածներ տալով : Անտարակոյս այս

ալ հին հայկական եղանակ մ'է և յարգելի :

Գ) Պէտք է որ հարսին անունով երգ մը երգուի, ի պատասխան այն փառաւոր «Բարի լոյս»-ին որով ինքը կ'ողջունուի երբ առաջին անգամ կը մտնէ իր նոր ընտանիքի շրջանը՝ պսակէն անմիջապէս յետոյ : Հիմա աղջիկները 18-20-25 տարեկան կ'ամուսնանան, զարգացած են և աւելի համարձակ, ուստի գերազանցապէս պատշաճ է որ մենբրդոլ երաժիշտ մը յանուն հարսին պատասխանէ զինքը ողջունող ընտանիքին : Իբրև փորձ ես յօրինած եմ հետեւեալը, որուն տողերը կրնան պակսիլ կամ աւելնալ ըստ պարագային .

- (17) Բարի լոյս, հայրիկ, բարի լոյս .
- Բարի լոյս, մայրիկ, բարի լոյս .
- Բարի լոյս, ազնիւ կնիստայր,
- Բարի լոյս, կնիստայր անուր :
- Բարի լոյս, սիրուն եղբայրճե՛ր .
- Բարի լոյս, եղբայր անուրիկ :

Կարելի է այս ալ «Բարի լոյս, աղուոր, բարի լոյս»-ին եղանակով երգել, երկու անգամ կրկնելով, բայց ոչ չորս անգամ : Մինչ երաժիշտը կ'երգէ, հարսը պէտք է կարգով մօտենայ պարոնտատին, կեսօրջը, և համբուրէ անոնց ձեռքը, և յետոյ դառնայ առ կնքահայրն, առ կնքամայրն, առ տագերտաքն, առ տալըտաքն ևն . և խոնարհի անոնց ամենաշնորհալի կերպով, ի հարկէ անոնք ալ իրենց կարգին ոտքի ելլելով իրեն պիտի խոնարհին ի պատասխան իր ողջոյնին : Հարսը հոգ պիտի տանի միայն որ չչփոթի, և իր խոնարհութիւնը առ իւրաքանչիւր ոք կամ խումբ ընէ ճիշդ երբ երաժիշտը կ'երգէ պատկանեալ տողը :

Դ) Հարկաւոր է յայտագիր մը յօրինել իւրաքանչիւր հարսանիքի համար, ինչպէս կը յօրինենք ամէն հանդիսի համար, և այլևայլ արարուածներն կարգադրել ըստ պարագայից : Այժմ, նոյն իսկ ունեւոր ընտանիքներ հազիւ երբէք պիտի ուզէին երեք օր հարսանիք ընել : Շատ վայելուչ կ'ըլլայ այժմ երկու աւուր կամ երկու հանդէսի վերածել հարսանիքը . նախ զգեստաւորման հանդէս . երկրորդ, պսակի և խրախոճանութեան հանդէս : Ահաւասիկ փորձ մը հարսանեկան յայտագրի որ ինչ ինչ եղանակաւորութիւններով կրնայ հեշտիւ յարմարցուիլ ամէն հարսանիքի :

Յայտագիր արդիացեալ Հայկական Հտրասնեաց

Առաջին օր.

Այս է փեսային ու հարսին զգեստաւորման օրը: Այս հանդէսները աւելի ընտանեկան են քան հրապարակային:

Նախ, փեսային զգեստաւորումը տեղի կ'ունենայ իր հօրը տունը, աղջկան կողմէն ալ իւրումը մը հարսնեւորներ հրաւիրուած ըլլալով:

Ա. Երաժշտութիւն կ'ըլլայ, և պատշաճ երգեր կրնան երգուիլ՝ իբրև բացումն հանդիսին:

Բ. Փեսան կնքահօր հետ սրահը կը մտնէ հագած ըլլալով երկար մուշտակ կամ վերարկու, բայց առանց բաձկոնի և թիկնոցի: Կրնայ այս վայրկենիս «հալաւ»ի օրհնութիւնը տեղի ունենալ, եթէ որոշուած է կատարել այդ կրօնական արարողութիւնը: Ապա կնքահայրը, և ի բացակայութեան անոր՝ հայրը, կը սկսի զգեցընել փեսան: Արդէն նկարագրուած կերպով բաձկոնը փեսային շուրջ երեք անգամ դարձընելէ և «Աստուած շնորհաւոր անէ՛» գոչելէ վերջ կը հագցնէ. Հանդիսականք կը մասնակցին երրորդ «Շնորհաւորն Աստուած անէ՛»ին: Նոյնպէս: և թիկնոցը, սուրը, ժամացոյցը, թերեւս նաև գլխարկը ոմանք ուզին այս կերպով գործածել:

Ապա կ'երգեն թ. 1 երգը, «Ելիւր, կայնէ՛, թագուր աղբար»: Եւ յետոյ շնորհաւորութիւն ներ կ'ըլլան «Աստուած կատարն հասցնէ», — «Տառուր... ին գլուխն ըլլայ», կ'ըսեն բարեկամք փեսային և իրարու:

Աւրիշ երգեր կ'երգուին, մեծարանքներ կ'ըլլան և հանդէսը կը վերջանայ:

Ենթադրելով որ այս հանդէսը առաւօտուն տեղի ունեցած է, կէս օրէն յետոյ կամ երեկոյին կը կատարուի երկրորդ հանդէսը, այն է հարսին զգեստաւորումը: Իր ծնողաց տանը մէջ, Այս աւելի երկար ու մեծ հանդէս մըն է, իրօք, ծանրութեան կեղծոնը զեռ աղջկան տունն է, ինչպէս որ պսակէն վերջ պիտի ըլլայ տղուն տունը:

Փեսան և ընտանիքը, հանդերձ մտերմագոյն բարեկամաց խմբակով, կը հրաւիրուին և կ'երթան այս հանդիսին, որ կը կատարուի երկսեռ բազմութեան ներկայութեան: Հանդէսը ընտանեկան, մտերմական հանգամանք ունի:

Ա. Հանդէսը կը բացուի երաժշտական պատշաճ կտորով մը կամ ճառով:

Բ. Տղուն սիրահարութիւնը նկարագրող երգ մը կ'երգուի, զոր օր. «Հայրիկ, ըսաւ տղան, իր բժիշկ տատին»ը:

- (18) « Հայրի'կ », բաւ եղան իր բժիշկ աստից , Սիրս խիս կը տրտիտ , վախել հիւանդ եմ :
- Նեւ մը , որդեա'կ , նեւ մը սիրոյ մխուած է . երսի նեւն է այն , չե'ս լսած երբէք :
- Բնաւ երբէք , հայրի'կ , ի'նչ պիտի ըլլամ , Ի'նչ է անուեր , ա'ն , իմ հիւանդութեան :
- (Սարիսիկ)անառութի'ւն . շաւ լուրջ վիճակ է . Մինչեւ կեանքիդ վերջը այն պիտի տես :
- Հայրի'կ , անգամ մըն ալ սրտիկս զննէ , Բայց զգոյց եղիւր որ նեւը դուրս չելէ :

Այս երգը որուն տողերը երկու անգամէ կը բաղկանան (6-5) յօրինուած է Ահնայ հանրածանօթ և շատ սիրուած « ալա կեօզլէրի » կոչուած եղանակով երգելու համար:

Գ. Ապա կ'երգուի հետեւեալը որ հարսընցուն մտալուս ժամանումին կ'ակնարկէ .

- (19) Արի'կ , ո'ր ակնէն կու գաս , Իմ պա'ղ , անուի'կ ջրի'կ . Գիտեմ սիրու սէր ես դուն . Ի սար աշխարհ կու գնաս :
- Գիտեմ ի բուն չես լինիր , Կ'երթաս որ սիրուդ հասնիս :
- (Վազէ . վազէ , շուս վազէ , Եարդ կ'այրի կարօսով . Այս որ լսեց ջրիկը , Կարկաջելով քաղցրաւայն՝ Վազեց հասաւ շուս շուսով Կարօսակէզ Եարիւն Բով :)

Փակագծի մէջ անուած տողերն ես յօրինած եմ աղուր քերթուածին ամբողջութիւն տալու և զայն հարսանեկան ներկայ պարագային պատշաճեցնելու համար: «Մայր Արաքսի»ի եղանակը բաւական կը յարմարի այս տողերուն:

Այս բոլոր միջոցին հարսը ներկայ չէ հանդիսին, այլ կը պատրաստուի առանձին սենեակի մը մէջ: Եւ ահա յանուն փեսային մեներգող մը բարձրաձայն կ'երգէ հետեւեալ տողերը, զորս յօրինած եմ (6-5) Ահնայ հռչակաւոր «մէնի» եղանակով երգուելու համար .

- (20) Յաճցէ'ք , ցաճցէ'ք , լեռնե'ր , բացուեցէ'ք ծովեր , Սիրուս համբայ տուէք որ շուս ինձ հասնի . Որչափ ալ շուս հասնի , դարձեալ կ'ուշանայ . Օրս սարի եղեր , գիտերս դարեր :
- «Մէնի»ն սրտերը թունդ հանող և զգայուն

Տոգինները յարտասուս շարժող եղանակ մըն է զոր կ'արժէ ձայնագրել :

Երգին վերջին տողը հապի լմնցած, հարսը սրահը կը մտնէ հարսնբրոջ ընկերակցութեամբ, և մինչ անոնք նազեղածեմ կը քալեն, պէտք է երգուի թ. 9 երգը (Ալըրեցար, բուրբեցար) :

Հարսը կը նստի իր մօր առջև, ցած աթոռի մը վրայ, երեսը մօրը դարձուցած և անոր ապաստանած ըլլալու դիրքն առած (արմուկը կը կրթնցնէ մօրը զիտին և ձեռքը երեսին կը դնէ) :

Այս դիրքին մէջ է հարսը երբ թ. 10 երգը կ'երգուի (Աղուճ, քեզ որ մայրն է բերեր) :

Յետոյ երեք տիկիններ, փեսային ազգականներէն հետոյ կը փորձեն հարսն առնել, և վերջապէս կնքամայրը կը յաջողի և կը հագուեցնէ հարսին (գօտին) գլխարկն և կը նուիրէ անոր ծաղկեփունջ մը, ինչպէս արդէն նկարագրած եմ :

Այն ատեն թ. 11 երգը, «Եկուր, աղուոր աղջիկ, հարս եղար մեզի» կ'երգեն մեծ եռանգով :

Ատոր կը հետեւին շնորհաւորութիւններ, և մեծարանքներ, զանազան երգեր, և այսպէս կ'աւարտի հանդէսը :

Երկրորդ օր

Որոշուած պահուն հարսն ու փեսան եկեղեցի կ'երթան հրաւիրեալ բարեկամաց ներկայութեան պսակուելու : Անկէ կ'երթան կամ փեսային տունը կամ այն սրահը որ հանդիսին համար պատրաստուած կ'ըլլայ :

Երբ հարսն ու փեսան հարսին տունը կամ սրահը իրենց մուտքը պիտի ընեն, նուագածուններէն և երգիչ խմբէ առաջնորդուած, և առաջին երգը պիտի ըլլայ «Աւազօտ լուսոյ» : Այդ երգին ընտրելագոյն համարները մինչ կը հնչեն, հարսնեւորը, հարս և փեսայ իրենց յարմար տեղերը կը կանգնին ոտքի վրայ, մեծ շրջանակ մը ձեւացնելով, հարսն ու փեսան կեդրոնը գրաւած ըլլալով, հարսնբրոջ և կնքահարս մօտիկ կեցած :

Հարսը ահա տուն բերուած է ուրեմն և թ. 14 երգը, հարսանեաց մեծ երգը, մեծ խանդավառութեամբ կ'երգեն, երաժիշտներուն հետ փոխ ի փոխ, մասնակցութեամբ փեսային բոլոր ազգականներուն, եթէ կարելի է :

Ատոր պիտի յաջորդէ հարսին կողմանէ ողջոյնը թ. 17 (Բարի լոյս, հայրի՛կ, բարի լոյս) :

Այս միջոցին բազմութիւնը ոտքի վրայ պիտի մնայ :

Յաւարտ հարսին խոնարհութիւններուն, պարոնտատն և ապա կեսուրն, և այլ փափաքողք մանր արծաթ դրամ կը ցանեն հարսին վրայ :

Եւ այն ատեն ամէն ոք կը նստի, և կը սկսի հանդիսին երկրորդ մասը :

Նախ բաժակաճառեր կ'արտասանուին հարսին ու փեսային կենացը, և երկու գերդաստաններուն կենացը :

Առաջին բաժակաճառը արտասանել անկէ փեսային մօրը (կամ մեծ մօրը՝ եթէ ներկայ է) : Նէ գինիի գաւաթն ի ձեռին՝ կ'անուանէ հարսը, փեսան, և իւրաքանչիւրին կ'ընէ մաղթանքներ. «Միապսակի ծերանաս, մէկ ձղէն ու հազար տերեւէն լինիս, երկանարև լինիս» ևն. Եւ հարսն ու փեսան այս օրհնութիւններն լսելու ատեն կը մօտենան ու կը համբուրեն մայրիկին ձեռքը : Ապա խօսքը կ'ուղղէ փեսային պատիկ եղբայրը որ կու գայ մայրիկին ձեռքը համբուրել. «տառօսը գլուխդ լինի, Աստուած շնորհք տայ» ևն. կ'ըսէ մայրիկը օրհնելով զայն : Ըստ պատշաճի կրնայ ուրիշ շատերու օրհնութեան և շնորհաւորութեան խօսքեր ուղղել, և անոնք, իրենց տարիքին համեմատ. կամ կու գան ձեռքը պագնել կամ ոտքի ելլելով հեռուէն խոնարհութիւն կ'ընեն : Այս բաժակաճառը կրնայ 10-15 վայրկեան տեւել : Հանդիսին է՛ն գեղեցիկ տեսարաններէն մէկն է (1) :

Ապա կը կարգացուին շնորհաւորական հեռագիրները : Արնան նաև ցուցադրուիլ հարսին տրուած ընծաները : Մեծարանքներ կ'ըլլան, թեթեւ կամ կատարեալ ընթրիք կը տրուի. պար

(1) Իմ որդւոյս հայկական հարսանիքին, որ Նիւ Եորք կատարուեցաւ եւ ներկայ էին Ամերիկացիներ ալ, ամենէն ցուցադրուեցաւ ազոյն միջադէպն էր այն բաժակաճառը զոր մայրս արտասանեց իրեւ Հայաստանէն եկած մեծ մայր : Ամերիկացի թիկիներ յուզուած եւ հիացած արտասանեցին ի տես այն խորին յարգանքին եւ ձեռք պագնելու սրագին կերպին որով բազմաթիւ զաւակներ եւ հարսներ կը պատասխանէին իւրաքանչիւրն իրեն պատկանած օրհնութեան :

շատ թանկագին մանրամասնութիւններ էր տալիս իւր ժամանակի և յատկապէս Մ. Տաճարի ներքին զարդագրութեան և որմանկարչութեան պատմութեան մասին (1) : Տարաբաղդաբար այդ հատուածը կիսատ էր և մինչեւ այսօր չէ յաջողուել գտնել նրա շարունակութիւնը :

Ներկայիւս հրատարակում ենք մի այլ հատուած "Գաւթար և հաշուագիր անօթից և սպասուց սրբոյ և Միաճնախօյ տաճարիս" վերնագրով ցուցակից, որ Սիմէոն կաթուղիկոսի հրամանով կազմել են նորա սպասաւոր Մկրտիչը, Երեմիա գրագիրը և լուսարար Գրիգոր վարդապետը : Այդ "Գաւթարի" մէջ թուած են ոչ միայն Սիմէոն կաթուղիկոսի ժամանակ եղած պատկերները, այլև տալիս են նրանց դասաւորութիւնն ու երբեմն համառօտ նկարագրութիւնը : Այդ պատկերներից մի քանիսը մնացել են մինչև այժմ : Բայց տարաբաղդաբար հանգուցեալ Մկրտիչ կաթուղիկոսի հրամանով սրանք և Յովնաթանի նկարածները անիննայ պոկուեցան տաճարի պատերից և մի անկիւն նետուեցան : Դրանցից 65 նկարներ, ոմանք թէպէտ վնասուած, դեռ կարելի է փրկել, եթէ շրջանակի մէջ դրուին և պահուին ապագայ պատկերասրահի համար, որպէս նիւթ հայ արուեստի վերջին շրջանի պատմութեան : Մի քանիսն էլ արդէն շրջանակի մէջ են դրուած և կախուած եկեղեցում : Այս ցուցակի համաձայն Սիմէոնի ժամանակի պատկերների թիւը 88 էր, իսկ Ղուկասի ժամանակ 120՝ վերջիչեալ Գաւթարի հատուածի համաձայն : Այդ 120-ից քանի՛սը Յովնաթանը նոր նկարեց և քանի՛սը նորոգեց, պակասում են պարզ ցուցումները անորոշ է նոյնպէս, թէ Սիմէոն կաթուղիկոսի ժամանակից մնացած 88 պատկերները մտնում են ամբողջապէս 120-ի մէջ :

Մեր հրատարակած այս ցուցակը երկու տեսակետով նշանակութիւն ունի Մայր Տաճարի ներքին պատմութեան համար . նախ գաղափար ենք ստանում, թէ ի՛նչ պատկերներ կային Սիմէոնի ժամանակ և ո՛րտեղ դասաւորուած, և երկրորդ միջոց է տալիս մեր ձեռքը հասած

(1) Այս հասուածը գրեթէ ամբողջութեամբ արտաբերուած է « Նաղաւ Յովնաթան աւուրը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը » գրիս յառաջաբանին մէջ :

պատկերներից որոշելու, թէ որո՞նք Յովնաթանի և որոնք նրանից առաջ եղած արուեստագետների գործեր են : Բարեբաղդաբար հին պատկերներից ոմանք յիշատակի գրութիւններ ունին, որ աւելի զիւրացնում են վերստուգութեան գործը : Այդ վերստուգութիւնը կ'կատարենք և լուսանկարչական պատկերներով կ'լուսարանենք մի այլ անգամ, երբ բոլոր պատկերները մաքրուած և շրջանակի մէջ դրուած կ'լինին :

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐՊ. ՅՈՎԱԹՔԵԱՆ
Միաբան Մ. Արոտոյ

ՊԱՏԿԵՐՔ ՄԵՅՔ, ՈՐՔ Ի ՅՈՐՄՈՑ ԿԱԽԻՆ .

Ի մէջ մէջ ի որանին սորբ Աստուածանի էն այս .

1. Մի պատկեր Աստուածածնի, յորոյ վերին կողմն է Երրորդութեան պատկեր :

2-3. Երկու պատկերք ևս՝ յորոց մինն է 1) աղօթել Տեառն՝ յուրբաթ գիշերին՝ և զորա նալն ի հրեշտակէն, և մինն է 2) իջուցանելն ի խաչէն : Են այսք յաջմէ և յահեկէ աւագ խորանին ի մէջ խաչկալին :

4-5. Երկու պատկերք՝ մեծին Ներսիսի 1) և Նիկողայոսի հայրապետացն 2), որք են իբրու գրուէք ներքին դրանց մեծ խաչկալին :

6-7. Երկու պատկերք Աւետեաց՝ մինն 1) հրեշտակին և մինն 2) Ս. Աստուածածնին : Որք ևս են իբրու գրուէք վերին դրանց մեծ խաչկալին :

Ի սորբ Յակոբայ ի որանն՝ և աւելներ նորն
Ի վերին դասն՝ էն այս .

8. Մի պատկեր ի մէջ սուրբ Յակոբայ խորանին, որ է բերել հրեշտակին զգլուխ սրբոյն Յակոբայ Առաքելոյն առ սուրբ Աստուածածինն և Առաքեալսն : Ի վերոյ ևս պատկեր Երրորդութեան :

9. Մի պատկեր Աստուածածնի՝ որ է մեծ, զարեգակն արկեալ զիւրեւ՝ և զլուսինն ընդ ոտիւք, և ի վերայ պատկեր Երրորդութեան, և շուրջ զիւրեւ՝ գուշակութիւնք մարգարէից՝ որք վասն իւր ասացեալ են, մանաւանդ այնք՝ որք ի գիրս Երգ Երգոցին են, որպէս շուշան հովտաց՝

ծաղիկ դաշնաց՝ և այլք: Նմանութիւնք նկարեալ են, և բանքն գրեալ ի ներքոյ իւրաքանչիւրոցն: Զոր սրբազան Սիմէոն կաթողիկոսն ետ նկարել:

10. Մի պատկեր ևս վերափոխման սուրբ Աստուածածնին՝ յոյժ մեծ, և լուսինն ընդ ոտիւք: Է այս հնացեալ:

11. Մի պատկեր ևս, որ է Ս. Աստուածածնի, Միածինն մեռեալ ի գիրկն, և եօթն սուր ի սիրտն:

12. Մի պատկեր ևս թաղման Տեառն:

13. Մի պատկեր Մատթէոսի Աւետարանչին:

14. Մի պատկեր սրբոյ կարապետին, որ է ի մէջ ճաճանչաւոր բոլորակի, և շուրջ զիւրև բոլորակք քաներկու, յորս են Ս. կարապետի ծնունդն, ի յանապատ փախչիլն, անդ սնանիլն, և այլ որպիսութիւնքն մինչև ցմահն և թաղումն, և բերիլն նշխարացն ի Հայս: Է այս յոյժ մեծագոյն:

Ի սուրբ Լուսաւորչի խորանն, և առ ընթեր նորին ի ներքին դռան են այս:

15. Մի պատկեր ի մէջ Լուսաւորչի խորանին, որ է պատկեր տէրունական բազմեալ յաթոռ քառակերպեան, և ի ներքոյ պատկերք Ս. Լուսաւորչին և Ս. կարապետին:

16-18. Երեք պատկերք Ս. Լուսաւորչին՝ մինն մեծագոյն յոյժ, և երկուքն քան զայն փոքր, բայց մեծք: Ի մէջ երկուցն է բժշկելն զՏրդատ արքայն, իսկ ի միումն ինքն միայն է: Յերիսն ևս են չորեքասան չարչարանքն ի մէջ բոլորակաց, շուրջ զիւրև:

19. Մի պատկեր Ս. Հռիփսիմեայ կուսին, խաչափայտն ի յուսն, և Տրդատ արքայն ընդ ոտիւքն:

Ի սուրբ Սրեփաննոսի խորանն են այս:

20. Մի պատկեր ծննդեան՝ է ի մէջ խորանին Ս. Ստեփաննոսի:

21. Մի պատկեր ընթրեաց Տեառն:

22. Մի պատկեր Ս. Ստեփաննոսի՝ որ է փոքր, իւր քարկոծումն ևս առ ընթեր իւր:

Ի սուրբ Յովնանիսի խորանն են այս:

23. Մի պատկեր Աստուածածնի ի մէջ Ս. Յօհաննիսի խորանին, Միածինն ի գիրկն և Ս. կարապետն և Աստուածաճայրն Յովսէփ առ ընթեր իւր:

24. Մի պատկեր գլխատմանն Յակոբու Առաքելոյն, զորոյ զգլուխն բերէ հրեշտակն առ Ս. Աստուածածինն, և առ Ս. Առաքեայսն:

25-28. Չորս պատկերք՝ երկուքն Աւետեաց և երկուքն Տրդատայ և կոստանդիանոսի թագաւորացն: Ի վերայ ճակատուց սեանց առաջի դասուն են այսք:

Ի յետին դռան են այս:

29-41. Երկասան պատկերք, որոց երկոտասանքն են Ս. Առաքելոցն, և մինն է թերահաւատութիւնն Թօմայի, և ցուցանելն նմա Տեառն զձեռս և զկող իւր: Կախեալք են սոքա ի վերին կողմն մեծի դրան տաճարին ի ներսին կուսէ:

42-53. Երկոտասան պատկերք ևս՝ որք կախեցեալք են ի վերոյ քան զվերոյգրեցեալ պատկերսն ի վերայ ռաւթին: Արոց մինն է ստեղծանելն Աստուծոյ զԱդամ, և առնուլն զԵւայ ի կողէն, և խաբիլն Ադամայ, և ելանելն ի դրախտէն: Մինն է գալ ջրհեղեղին, և մտանելն Նոյի ի տապանն: Մինն է զենուճն Իսահակայ՝ և փոխանակ նորա կախիլն խոյին ի ծառոյն Սարեկայ: Մինն է ելք ժողովրդեանն Իսրայէլի յԵգիպտոսէ: Մինն է բարձրացուցանելն Մովսէսի զօձն յանապատին: Մինն է՝ ծնունդ Տեառն, և շուրջ զնովաւ մարգարէք՝ տախտակք կտակարանաց ի ձեռս ունենալով: Մինն է փախուստ տեառն յԵգիպտոս: Մինն որ մեծ է քան զսոսա՝ է յարութիւն Ղազարու, որ կախեցեալ է զերեսօք դրան վերին զանգակատանն: Մինն է գիւտ մորթեալ ոչխարին: Մինն է երեւիլ Տեառն Աշակերտացն յետ յարութեան՝ ի ժամ որոյ ձկանցն, և նստիլն ի նաւն Պետրոսի, և արկանել տալն զուռկանսն յաջակողմն նաւին: Մինն է խարազանաւ չուանեայ հանելն Տեառն ի տաճարէն զվաճառօրս արջառոց և ոչխարաց և այլ իրաց: Իսկ մինն է գոչումն վերջին փողոյն, և Յարութիւն համօրէն ննջեցելոց:

54-58. Հինգ պատկերք ի կողմն հիւսիսային դրան տաճարին՝ կախեցեալք կան յորմոյն: Յորոց մինն է ըմբռնումն տեառն, և կացուցանելն առաջի քահանայապետին: Մինն է՝ փարիսեցւոյ և մաքսաւորի աղօթելն ի տաճարին: Մինն է անկանիլն ի ձեռս աւազակաց առն այնմիկ՝ որ իջանէր յԵրուսաղէմէ յԵրիբով՝ ըստ աւետարանական առակին. և վիրաւորիլն յաւազակացն, և

առնելն նմա զողորմութիւն Սամարացւոյն : Մինն է մահ և ծանօթութիւն տալն ծնողացն սրբոյն Ալէքսիանոսի : Եւ մինն է Փիլիպպոսի կաթուղիկոսին :

59-64. Վեց պատկերք ևս ի կողմն հարաւային գրան տաճարին կախեալք կան յորմոյն : Յորոց մինն է ըմբռնումն Տեառն : Մինն է տեսիլն Յակոբայ՝ որ ետես սանդուխտ հաստատեալ յերկրէ յերկինս : Մինն է մտանելն իմաստուն կուսանացն ի յառագաստ փեսային , և յիմարացն մնալն արտաբոյ : Մինն է անկանիլն աղբատին Ղազարոսի ի դուռն մեծատանն , և լիզել շանցն զվէրս նորա , 7 և զելիլ մեծատանն : Մինն է տեսեսիլն՝ որ զհաշիւս փոխատուաց տեսան իւրոյ խնդրէ , թէ քանի ի՞նչ պարտիս տեսան իմոյ : Իսկ մինն է մեծ քան զսոսա , որ է օրհնել Տեառն զաշակերտան ի ժամ համբարձման , որ է ի մէջ խորանաձև կերտուածոյ : Իսկ յաջմէ և յահեկէ խորանաձևին , են պատկերք սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պողոսի , որք են մեծք : Եւ առ ընթեր իւրեանց՝ գլխիվայր իաշիլն Պետրոսի , և գլխատիլն Պողոսի . է այս յիշատակ քիւթիւր Պետրոս վարդապետին :

64-67. Քսաներեք պատկերք՝ շարեցեալք ի մէջ մեծի կաթուղիկէին ի վերոյ , որք են բոլոր սնորէնութիւնք Տեառն : Այսինքն՝ Աւետիքն : Ծնունդն : Քառասնօրեայ գալուստն ի տաճարն : Կոտորումն մանկանցն Բեթղէհէմի : Մկրտութիւն : Այլակերպութիւն : Յարուցանելն զՂազար : Գալն յերուսաղէմ յաւանակաւ : Ոտնալուայն : Ընթիւքն : Աղօթելն և զօրանալն ի հրեշտակէն և ըմբռնիլն : Կապիլն ի սիւնն քարեայ և ձաղիլն : Պսակիլն փշով և զգենուլն զքղամիդն : Բառնալն ի յուս զիսաչն , և երթալն ի Գողգոթայ : Բեւեռիլն ի խաչափայտին : Իջուցանելն ի խաչէն : Նստեալ մերկ ի վերայ գերեզմանին , և շուրջ զիւրեւ ամենայն գործիք չարչարանացն : Աւերելն զգթոխսն և ագատելն զհոգիսն : Յարութիւն : Համբարձումն : Գալուստ հոգւոյն սրբոյ : Միւս անգամ գալուստն՝ և դատաստանն ահաւոր : Եւ վերափոխումն ամենօրհնեալ Ս. կուսին Մարիամու :

68. Մի պատկեր ևս մեծ և խորանաձև , որ եղեալ է ի գլուխ մեծի գրան սրբոյ տաճարին , յարտաքին կողմն , որ է իջումն Միածնին ի սուրբ տաճարս այս՝ և պատկերք հօր Աստուծոյ և Հոգւոյն սրբոյ՝ նաև սուրբ Լուսաւորչին՝ և խորհրդածու հրեշտակին , Տրդատայ , և քեռ

նորին և կնոջն , և այլոց բազմաց . և ձեք սրբոյ տաճարիս , և սրբոց վանօրէիցն Հռիփսիմեանց , Գայիանեանց , և Շողակաթին : Չոր սրբազան Սիւէօն կաթուղիկոսն ետ նկարել նորապէս , զի առաջինն հնացեալ և փտեալ էր :

Վերոգրեցեալ մէկ թուղթ և կէս պատկերացս զամն է՝ ութսուն և ութ . Ի ՌՄԻԷ թուոջս , և ի յօգոստոսի Ժ գրեցաւ :

ՓԻԼԻԵՈՓՈՅԱԿԱՆ ՄԻՋՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. Կրնանք գտակաւ հոգետեսել՝ որ նախամարդը , իր անմեղութեան վիճակին մէջ , հոգի մե՛ծ ու մենո՛ւկ և անմահութեամբ չափ հաղորդ անմահութեան մեծ աղբււր-հոգիին , մարմին ապականացու անապականութեամբ չափ կցորդ անապական տիեզերքի համարչոր նիւթին՝ կ'արձագանգէր մեծ Հոգին ու մեծ Բանն՝ անգիր ներշնչական գիտնութեամբ գիտո՛ւն բարբառով մը . անմեղութեան արծի՛ւր տիեզերքի մեծ վանդակին՝ գրգալով և հաղորդարարաբար ձախերիով անոր տեսիլներուն և տեսարաններուն վրայ , այսինքն՝ միշտ գնայուն շարժուն վիճակի մէջի պէս . չունէր որոշ պահեր՝ ո՛չ քնելու , ո՛չ ուտելու , ո՛չ կողմնելու , ո՛չ յառաջելու , այլ երբ ու ինչպէս որ կը թելադրէին իրեն իր անաղջ զգայարանքը կարիքն ու ազդեցութիւնը մայր բնութեան ... Ինք բանեղէն քերթուած ու քերթող մը , նախահայ զուարթուն , որ կ'ապրէր ու կ'երգէր բովանդակ տիեզերքը մարդկութեան աւաճող , իր կորած բաստին :

Բ. Ինչ որ այլք կը խօսին քու ինչութեանդ վրայ՝ դու ան չես , այլ պէտք է մինչև աստիճան մը համարիս ինքզինքդ այնպէս՝ խոնարհութեան և խաղաղութեան համար . ինչ որ դուն կը համարիս ինքզինքդ՝ դու ան ալ չես , այլ քու անձնատես կիրքդ է՝ որ շատ մասերով զքեզ քեզի այնպէս կը ցուցնէ եթէ ոչ թերատեսութիւնդ . ինչ որ ճշմարտութիւնն և գործերուդ յաւիտենական արդիւնքը կը դիտեն ու կը սահմանեն քեզ յաւիտենապէս՝ դու ան իսկ ես . երանի՛ քեզի՝ եթէ կրցար փիլիսոփայօրէն այդ գիտակէն սրբագրել զքեզ :

Գ. Կրօններու արտայայտիչ ձևերն ու աստուածաբանութիւնները բուն իբր էութիւնները

կրօնքի՝ անողոր բունելը, կրօնքի մեծ էութիւնն — Աստուածն — ուրանալու մօտ յամառ յիմարութիւն է, և փոխան անոր՝ այդ ձեւերն ու աստուածաբանութիւններն աստուածացնելու չափ անկրօնութիւն և անաստուած էութիւն է՝ հուներուս համար անհունի մը մէջ, որ Աստուծով կը գառնայ :

Գ. Ինչո՞ւ շատ անգամ մեր չուզածին աննկատեալին կը վիճակինք, վասն զի ընդհանրապէս անոր արժանի էինք կամ մեր մեղքէն կամ մեր վարձքէն՝ բարձրագէտ տնօրինութեամբ :

Ե. Գարձեալ գտակաւ կրնանք հոգետեսել՝ որ նախամարդութեան խօսած լեզուն պա՛րզ, հակիրճ ու ճի՛շդ «անհայտ» էր՝ իբրև նախմբունող հանձարինն աշխարհի, իբրև նախահայտնող ստեղծեալ տիեզերքի ահագեղ փառքին վրայ :

Զ. Օրինակուած օրէնսդրութիւնք հայրենասիրութիւնք և ինչ և է հասարակաց կարգք՝ չեն ըլլար ազգի մը համար տեւական ու օգտաբեր այնքան, որքան հանձարի միջոցով ըստեղծուած շրջադիտուած և գտող դատողութեամբ պատշաճեցուցուածները, ուր տեղական իմաստութիւնը մեծ իմաստութեան շնորհ չափ հոգետեսութեամբ օժտուած է օրէնսդիր հանձարը կամ օրէնսդրական աւագաժողովը : Այս կողմէն շա՛տ տուժած է հայ ազգն ալ :

Է. Արեւելեան ուղղափառ եկեղեցին պահած է մեծ նիշեր նախնական կեանքի, հաւատքի ու ներշնչութեանց և սքանչելի բնասիրութեանց . այսպիսի վեհ միջ մըն է նաև ՚ի Հօրե աննակալէ Բնիման վարդապետութիւնը՝ ամենայնն ՚ի մի աւարտեալ և մին յամենայնի բաշխեալ բղխեալ անմիջականօրէն՝ ըստ հայեցուածոց և ըստ պիտոյից . . .

Ը. Աստուծոյ ամենուրեքութիւնն ալ թերեւս պատճառ մըն է (թիւրիմացութեամբ) ամենաստուածութեան :

Թ. Անմահութեան սահմանուած մահկանացուիս մէջ՝ միակ մեծ հիւանդութիւն մը կայ, և է՝ երկիւղը մահուան :

Ժ. Յաւատենից մէջ՝ միշտ այսօր է . լաւ չիկայ :

Կ. Պոլիս, Հոկտեմբեր 1910

ԽԱՉԻՆԱՐ

Ա Ր Զ Ա Կ Ե Ր Պ Ե Ր

Դուն ի՞նչ ըրիք ի՞մ սրտիս :

Անհո՞գ էր ան : Ճերմակ ծաղիկները իրեն ընկեր էր ընտրած . աստղերուն կ'ուզէր պաշտիկ տալ, հովերը գրկել :

Անձայր դաշտերուն մէջ կը վազէր պզտիկ թռչուններուն չափ թեթև, ու իրիկունը ժպտելով կը ծրմնջէր իր անմեղ աղօթքը, իրիկունը՝ երբ իր սիրական արեւը կորսուէր ծովերուն ետին :

Դուն ի՞նչ ըրիք ի՞մ սրտիս :

Տես, օրերուն հետ կը մեռնի ան, արցունքոտ սէրով, փախչող երազով :

Կուրծքիս տակ, հո՛ս, կը մեռնի, ու ա՛յ պզտիկ թռչուններուն թեթև վազքը չունի, եւ պաշտիկ չի տար փայլուն աստղերուն . . .

Դուն ի՞նչ ըրիք ի՞մ սրտիս :

Ծաղիկներ բերեր ես ինձի :

Ծաղիկները կ'իջնան սոքերուս տակ :

Սիրող բերեր ես ինձի :

Սիրող կը սառի փակ շրթներուս տակ :

Ախ, այս իրիկուն հողիս այնքա՛ն հիւանդ է որ՝ ծոցեր եմ քեզի :

Ծաղիկները կ'իջնան սոքերուս տակ . . .

Ախ, այս իրիկուն հողիս այնքա՛ն հիւանդ է որ, տե՛ս, գգուանքներս կորսուեր են :

Սիրող կը սառի փակ շրթներուս տակ . . .

Կարծես կեանքը կեցեր է մէջս :

Մի՛ մեղադրեր զիս . կ'ուզէի չար չըլլալ .

Կ'ուզէի գուրգուրալ քու նուէր ծաղիկներուդ և սրտիդ վրայ ճանաւանդ :

Բայց այս իրիկուն հողիս այնքա՛ն հիւանդ է որ, սրտիս տեղ՝ կարծես անտաշ սառեր կախուած ըլլային կուրծքիս տակ . . .

Այս առաւօտ արևը սրտիս մէջ արթնցայ :

Այս առաւօտ արթնցայ արևը ձայնիս մէջ : բիբերուս մէջ, ճագերուս մէջ :

Արև կայ նոյնպէս ամէ՛ն տեղ ի՞մ շուրջս :

Արև կայ նոյնպէս բոլոր ծառերուն մէջ, բոլոր առուակներուն վրայ, և ի՞մ սիրական բոլոր թռչուններուս երգին մէջ :

Այս առաւօտ արե՛ւ կայ սրտիս մէջ :

Ի՞մ սիրականս, տե՛ս, պզտիկ աղջկան մը պէս ժպտուն կուգամ քեզի . պզտիկ աղջկան մը սէ՛րովը կուգամ քեզի :

Այս առաւօտ արև կը բերեմ քեզի ձայնիս մէջ, բիբերուս մէջ, ճագերուս մէջ :

Անցուր թևերդ մէջքիս և գեղջուկ սիրահարներու պէս, կ'ուզե՛ս, տանինք մեր սէրը «այսօր հեռուի լեռներուն, հեռուի ջուրերուն, հեռուի ծաղիկներուն, ուր արև կայ, արև՛, ինչպէս ի՞մ սրտիս մէջ . . .

Փարիզ,

ՄԱՐՏԻԿ ՊԵՐՊԵՐՅԱՆ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Տ Ղ ՈՒ Ա Ռ Ա Ջ Ի Ն Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք Ը

(Նման ղը նախնեաց մանկավարժական դրամներն)

Աորհոյներու համար շատ մնական է հետաքրքրուիլ, թէ ի՞նչ եղած է հայ տղու առաջին դասագիրքը նախնեաց քով: Այս հարցումին պատասխանը՝ հիմնաբարը պիտի կազմէր Հայ Ազգին մանկավարժական պատմութեան. պատմութիւն մը, որուն վրայ դժբախտաբար դեռ մտածուած չէ: Ստոյգ է որ այսպիսի պատմութիւն մը գրելու համար շատ ատաղձ չունինք հայ մասնագրութեան մէջ. բայց ինչ որ կայ, իրենց նուազագոյն չափին մէջ ալ, ուսումնասիրութեան աւարկայ չէ եղած: Հայ Ազգին անցեալը լաւ սերտելու և լաւ լուսաւորելու համար՝ պէտք է խորապէս և մանրամասնորէն ուսումնասիրել անոր ազգային կեանքը, անոր մտաւորական կեանքը պատրաստող բոլոր ազգակները. մէկ խօսքով՝ պէտք է անոր քաղաքակրթական կեանքին բոլոր կողմերն ու երեւոյթները առնել ուսումնասիրութեան շրջանակին մէջ:

Մենք այս բմբռնումով կ'ուզենք ուսումնասիրութեան փոքրիկ փորձ մը ընել հայ տղու առաջին դասագրքին վրայ:

Գիր և գրականութիւն ունեցող բոլոր ազգերու մէջ՝ տղոց առաջին դասագիրքը եղած է իրենց ազգային այբուբէնը: Իսկ այբուբէնը ամենէն առաջ դասագիրքերու գրուած կամ փակցուած կը տրուէր տղոց ձեռքը (*): Շատ որոշ կերպով այս էր գրութիւնը Ասորի և Յոյն ազգերու մօտ ևս, որոնց հետեւած են մեր նախնիք ալ: Պնակիտը՝ այբուբէնը բովանդակելու չափով քառակուսաձեւ տախտակ մըն էր՝ հինգ սանդղիմէդրի չափ հաստութեամբ, որ վարի կողմէն ձեռքով բռնուելու համար կոթ մը կամ բուն մը ունէր, և այս կոթին վրայ չուան մը անցնելու համար ծակ մը կար, որպէս զի պնակիտը դպրոցական տղուն վզէն ուսընդանութ կախուէր դպրոց երթալ գալու ատեն: Այս պնակիտէն ես ալ ունեցած եմ մանկութեանս, որ հետզհետէ, գոնէ մեր միջավայրին մէջ, Այնթապ, զարգացում ալ ունեցաւ: Այսինքն՝ այբուբէնի թուղթը փոխանակ ուղղակի պնակիտին վրայ փակցուելու, պնակիտին մէկ երեսը ապակի շրջանակի մէջ առնուեցաւ և այբուբէնի թուղթը ապակիին տակը դրուեցաւ, չաղտոտուելու և չպատուելու նախահոգութեամբ, ձիշտ ապակիով պահուած լուսանկարի շրջանակներուն պէս: Շատ այբուբէն և ետքը քերական հինցնող տղոց՝ այսպէս ապակիով պնակիտներուն մէջ քերականներ ալ սկսան դրուիլ. այնպէս որ երբ քերականին մէկ երեսը սերտուէր՝ կը հանէին և միւս երեսը դարձնելով նորէն կը դնէին ապակիին տակը:

Հայերէն պնակիտը ուրեմն, պարզապէս հայերէն 36 գիրերու այդ տախտակը, առաջին դասագիրքն էր հայ տղուն, որ սակայն առանձին դասագիրք մը չէր նոյն ատեն. այլ կը կազմէր բուն առաջին դասագրքին, ՔԵՐԱԿԱՆԻՆ, առաջին երեսը կամ էջը:

Քերական՝ նախնեաց մօտ կը նշանակէ Քերականութեան գիտցող մարդ, յունարէն և լատիներէն Դրամատիկոս, որ Քերանոլ (ոչ թէ Բանաստեղծի իմաստով) ալ կ'ըսուի: Քերական կը նշանակէր նաև Քերականութեան, ձիշտ մեր հասկըցած իմաստով:

Արդ՝ հայ տղոց ձեռքը տրուած առաջին գիրքը, իբր հիմ և սկսուած ապագայ Քերականութեան, առանց վերապահութեան ըսուած է Քերական:

Ի՞նչպէս կազմուած է նախնեաց քերականը և ո՞վ կազմած է զայն:

Քերականները, այն ձեւով որով տպագրուած են, բաւական ուշագրաւ հանգամանքներու մէջ կը ներկայանան: Ես, զորօրինակ, այս փոքրիկ փորձի համար աչքի առջեւ ունիմ 1891 ին Կ. Պոլիս, Պ. Յակոբեան տպարանէն կազմ հրատարակութիւնը, որ սա խորագիրը կը կրէ. «ՔԵՐԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԲԱԲԵՆԱՐԱՆ, Պարչ և Դիւրի ոճով, Յարմարեալ է լաւ յամանակաց»: — Այս Քերականը երկու որոշ մասեր ունի. մէկը՝ այբուբէնի ծանօթութիւնը՝ այլ և այլ ձեւերով կամ դրութեամբ. միւսը՝ միավանկ բառերէն մինչեւ վեցավանկ բառերու կազմութիւնը, միշտ այբուբենական կարգով:

Ինձ այնպէս կը թուի, թէ այս «ի վաղ ժամանակաց» յօրինուած Քերականը՝ ժամանակի ընթացքին մէջ ենթարկուած է փոփոխութիւններու և կրած է աղաւաղումներ: Ասոր ամենէն

(*) Մենք կը կարծենք որ ամենէն հին պնակիտները՝ ուղղակի փայտի վրայ գրուածներն էին, փայտի վրայ ներկուած նկարներու պէս: Այս այսպէս էր անուրեւ զոնէ քուրթի գիւտէն առաջ:

յայտնի նշաններէն մէկն է «և, օ, ֆ», երեք գրերուն յաւելումը մետրական 36 գիրերու վրայ. որովհետեւ այդ երեք յաւելուածական տառերով կազմուած հեգեր, վանկեր և բառեր վերջամուտ են քերականիս մէջ. այնքան յայտնի կերպով վերջամուտ, որ քերականիս միավանկ հեգերու շարքին, այսինքն՝ Ա. Մասին մէջ, բոլորովին անիմաստ հեգեր յերիւրուած են և քիչ ետքը, այսինքն՝ Բ. Մասին մէջ ք գիրը բոլորովին մէկգի դրուած է և միայն Օ գիրը կը գործածուի բառաշինութեան մէջ:

Քերականի կազմութիւնը քննելու համար մենք նկատի պիտի առնենք ատոր Ա. Մասը, և աւելի ճիշտը՝ բուն այբուբէնը:

Քերականի կազմութեան մէջ առաջին ուշագրաւ կէտը՝ հայերէն այբուբէնի 36 գիրերուն դասաւորութիւնն է: Վասն զի քերականի առաջին երեսներուն վրայ, Իւրաքանչիւր և Բուրբուր (խոշոր), երկու զատ զատ տախտակներու վրայ, և ետքը՝ յաջորդ երեսի վրայ՝ դարձեալ Բուրբուր (միջակ ու մանր), այլ և այլ ձեւերով դասաւորուած են 36 գիրերը:

Ա. Չեւ .

ա	բ	գ	դ	ե	զ
է	ը	թ	ժ	ի	լ
խ	ծ	կ	հ	ձ	ղ
ճ	մ	յ	ն	շ	ո
չ	պ	ղ	ռ	ս	վ
տ	ր	ց	ւ	փ	ք

Բ. Չեւ .

ա բ գ .	դ ե զ .	է ը թ .	ժ ի ւ .
խ ծ կ .	հ ձ ղ .	ճ մ յ .	ն շ ո .
չ պ ղ .	ռ ս վ .	տ ր ց .	ւ փ ք .

Գ. Չեւ .

աա բբ գգ .	դդ եե զզ .	էէ ըը թթ .
ժժ իի ււ .	խխ ծծ կկ .	հհ ձձ ղղ .
ճճ մմ յյ .	նն շշ ոո .	չչ պպ ղղ .
ռռ սս վվ .	տտ րր ցց .	ււ փփ քք .

Դ. Չեւ .

ա ի չ .	բ ծ պ .	գ կ ղ .	դ հ ո .	ե ձ ս .	զ ղ վ .
է ճ տ .	ը մ ր .	թ յ ց .	ժ ն լ .	ի շ փ .	լ ո ք .

Ե. Չեւ .

ա ժ ճ ո .	բ ի մ ս .	գ լ յ վ .	դ խ ն տ .
ե ծ շ ր .	ծ կ ո ց .	է հ չ լ .	ը ձ պ փ .
	թ ղ ղ ք .		

Ա. Չեւը երկու տեսակ աղիւսակի մէջ առնուած է. այսինքն՝ նախ իւրաքանչիւր գիր աղիւսակի 36 աչքերուն մէջ դրուած է զատ զատ. ետքը՝ իւրաքանչիւր երեք գիր 12 աչքով աղիւսակի մը մէջ դրուած է: Դասաւանդութեան երկու ձեւին մէջ ալ գիրերը կը ներկայանան $6 \times 6 = 36$ տարազով:

Բ. Չեւը կը ներկայանայ $3 \times 12 = 36$ տարազով, որմէ կազմուած է Գ. Չեւն ալ. $3 \times 6 = 18$
 $3 \times 6 = 18$
 $3 \times 12 = 36$

Գ. Չեւը կը ներկայանայ $4 \times 9 = 36$ տարազով, որմէ կազմուած է Ե. Չեւը.
 $(4 \times 8 =) 32 \quad 32 + 4 (= 36)$:

Ինչպէս որ կը տեսնուի, հայ տղու առաջին դասագրքին առաջին երեսները հետաքրքրական կազմութիւն մը ունին, և այս կազմութիւնը պատահական բան մը չէ. այլ հիմնուած է թուաբանական հաշիւներու վրայ:

Հայերէն գիրերը միայն և միայն հայերէն լեզուի ձայնական գրութիւնը չեն արտայայտեր. ատոնք թուական արժէք ալ ունին: Արաբական թուանշաններու (1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 0,) գործածութիւնը դեռ շատ նոր է հայ մատենագրութեան մէջ: Նախնիք երկու կերպով կը գրէին թիւերն ու չափերը. կամ պարզապէս բառերով, զոր օրինակ, Աստուածաշունչի մէջ գրուած թիւերու և չափերու և այլնի պէս, և կամ հայերէն գիրերու թուական արժէքով (*), ինչպէս նաեւ երկուքը խառն, որուն շատ կը պատահէր հայերէն ձեռագիրներու յիշատակարաններու մէջ: — Օրինակ 1910 թուականը կրնայ գրուիլ.

- ա) Հազար ինը հարիւր տասը,
- բ) Ռ-ջժ (ռ = 1000, ղ = 900, ժ = 10).
- գ) Ռ. ինը հարիւր տասը կամ հազար ղժ. և այլն:

(*) Հայ եւ օսար բոլոր հին մասեմագրութեան մէջ թիւերը, չափերը եւ կեիւները բառերով կը գրուէին:

Հայերէն այբուբենի 36 գիրերուն թուական արժէքը թուաբանական ճշտութեամբ արտայայտելու համար, նախնիք կանոնաւոր դասաւորութիւն մը տուած են ստոնց: Վերոյիշեալ հինգ ձեւերէն՝ Ա. Բ. Գ. Չեւերը, պարզապէս 36 թիւին կազմութիւնը կը բացատրեն՝ թէ՛ մէկիկ մէկիկ համընդունու և գումարելու դրութեամբ և թէ՛ բազմապատկելու ձևով: Իսկ Գ. և Ե. Չեւերը՝ Գաւառի, Գանձաւորի, Կարիւրաւորի և Կաշարաւորի յառաջատուական կազմութիւնը կը ներկայացնեն:

Հիմա Գ. և Ե. Չեւերը վերածենք իրենց թուական արժէքին:

Գ. Չեւի թուական արժէքը,

Միւսոր	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
	1	2	3	4	5	6	7	8	9
Տասնաւոր	ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ճ	ղ
	10	20	30	40	50	60	70	80	90
Հարիւրաւոր	ճ	ճ	ճ	ն	շ	ո	չ	պ	ջ
	100	200	300	400	500	600	700	800	900
Հազարաւոր	ո	ո	վ	տ	ր	ց	լ	փ	բ
	1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000

Ե. Չեւի թուական արժէքը.

Միւսոր	Տասնաւոր	Հարիւրաւոր	Հազարաւոր	Համագումար
Ա = 1	Ժ = 10	Ճ = 100	Ռ = 1000	= 1111 = ՌՃԺԱ
Բ = 2	Ի = 20	Մ = 200	Ս = 2000	= 2222 = ՈՄԻԲ
Գ = 3	Լ = 30	Յ = 300	Վ = 3000	= 3333 = ՎՅԼԳ
Դ = 4	Խ = 40	Ն = 400	Տ = 4000	= 4444 = ՏՆԽԴ
Ե = 5	Ծ = 50	Շ = 500	Ր = 5000	= 5555 = ՐՇԾԵ
Զ = 6	Կ = 60	Ո = 600	Ց = 6000	= 6666 = ՑՈԿԶ
Է = 7	Հ = 70	Չ = 700	Ի = 7000	= 7777 = ՌՉՀԷ
Ը = 8	Չ = 80	Պ = 800	Փ = 8000	= 8888 = ՓՊՉԸ
Թ = 9	Ղ = 90	Ջ = 900	Ք = 9000	= 9999 = ՔՂՉԹ
Համագումար	45	+ 450	+ 4500	+ 45000 = 49995 = ԽՔԶՂԵ

Ինչպէս որ կը տեսնուի, $4 \times 9 = 36$ (Գ. Չեւ) և կամ $9 \times 4 = 36$ (Ե. Չեւ) միևնոյն են և կազմուած են թուաբանական ճշգրութեամբ, և Հայու տղան, հին ատենները, երբ իր լեզուին այբուբենը կը սորվէր, կ'ուսանէր նոյն ատեն թուաբանութեան հիմունքն ալ:

Այս սեղ չենք ուզեր հիշելու թուաբանական փորձերը առաջ տանիլ: Միայն իբր հետաքրքրական դիտել կուտանք, թէ Ե. Չեւի Միւսոր, Տասնաւոր, Հարիւրաւոր, Հազարաւոր, և 4 գատ գատ սիւնակներու գումարներուն հիմք 45 է, և ամէնուն Համագումարն է 49995, որ հաւասար է Աէն մինչեւ Ռ. և Թէն մինչեւ Ք, ինք շարքերու Միւսոր, Տասնաւոր, Հարիւրաւոր և Հազարաւոր խառն թիւերու գումարին: — Գարձեալ, 49995 Համագումարին աջ ու ձախ 4 և 5 թիւերը, որ հիմնական 45ը կը ներկայացնեն, գումարուելով կուտան 9, ($4+5=9$): Եւ եթէ 9ով բաժնէք 49995ը՝ կ'ունենաք 5555, որ Ե = 5ի միւսորին, տասնաւորին, հարիւրաւորին և հազարաւորին գումարին հաւասար է: Իսկ Ե = 5ը և իր աճումները, դիտեցէք, Ա—Թ, Ճիշտ մէջտեղը գրաւած է: Եւ 5555ը իրմէ առաջ գտնուող չորս շարք թիւերուն վրայ գումարելով գատ գատ, կ'ստանանք իրմէ ետքը եկող չորս շարք թիւերը: Իսկ այս վերջիններէն հանելով գատ գատ, կ'ստանանք առաջին չորս շարքին թիւերը: Կ'արժէ նկատի առնել նաեւ ԱՃԺՌ և այլն, որ աջէն ձախ կարգացուելով Աին միւսորէն մինչեւ հազարաւոր աճումը կ'աւտիճանաւորեն. իսկ ձախէն աջ կարգացուելով ՌՃԺԱ, և այլն, ինչպէս որ նշանակուած են Ե. Չեւի համագումարներու սիւնակին մէջ, Ա—Ռ և Թ—Ք, բոլոր աճումներուն գումարները կուտան:

Հիմա նկատի առնենք Գ. Չեւը: Ինչո՞ւ համար 36 գիրերը քով քովի կրկնուած են անիմաստ կերպով. քանի որ հայ լեզուի մէջ շատ քիչ գրեր կան, որ այդպէս քով քովի գան՝ նշանակութիւն ունեցող բառերու առաջին հեզը կամ վանկը շինելու. զոր օրինակ գգ(ուել), դդ(ոււմ), թթ(ու), լլ(կել), ծծ(ել), կկ(ել), նն(ջել), շշ(ուկ): — Արդիհետեւ հայ տղու առաջին դասագրքին թուաբանական նշանակութիւնը հասկցանք, դիւրին է շուտով պատասխանել ստոր: Ատոնք ԱԱ, ԲԲ, ԳԳ, ևն. $1+1$, $2+2$, $3+3$, ևն. գումարում կամ 1×1 , 2×2 , 3×3 , ևն. բազմապատկում ցոյց կուտան:

Երբ գարձնէք քերականին միւս երեսը, ո՛ւր ԲԱ, ԲԵ, ԲԷ, և այլն, և կամ ԱԲ, ԵԲ, ԷԲ, և այլն, այբբենական կարգով փոխադարձ հեզեր կամ վանկեր շարուած են, ասոնք ալ թէ՛ գումարում և թէ՛ բազմապատկութիւն ցոյց տուող թիւերու աղիւսակներ են: Եւ գարմանալ կերպով այս աղիւսակները ո և է խորագիր չեն կրեր. խորագիրներ՝ որ Բերականին Բ. Մասին մէջ կան՝ բառը որ կազմին ի միոյ վանկէ՞ սկսելով:

Ըստ իս այնքան որոշ ապացույցներ և յայտնի հետքեր կան Քերականի Ա. Մասին մէջ՝ թուաբանական սկզբունքներու, որոնք մեծ կարեւորութիւն ունին մեր նախնեաց մանկավարժական դրութիւնը հասկնալու համար:

Երանի՛ թէ կարող ըլլայինք Քերականի հնագոյն, այսինքն նախնեաց ձեռքէն ելած հարազատ օրինակները ունենալ, աւելի հետաքրքրական եզրակացութիւններու կարենալ յանգելու համար: Ասան զի, անգամ մըն ալ կը շեշտենք, այս “ի վող ժամանակաց” յօրինուած Քերականը ենթարկուած է փոփոխութիւններու և աղաւաղումներու, և հասած է իր արդի գրեթէ անձանաչելի վիճակին. և անշուշտ այս է պատճառը, որ ուշադրութիւն չէ գրուած ան մինչև հիմա:

Ար փութանք դիտել սալ նաեւ հայերէն ծածկագրութեան մէկ դրութիւնը, որ հիմնուած է Գ. Ձեւի վրայ:


Հայերէն ձեւագրեր ուսումնասիրողներ գիտեն, թէ տեսակ մը ծածկագիր յիշատակութիւններու կը հանդիպին առոնց մէջ, որոնք կը ներկայացնեն ուղղահայեաց գիծեր, որոնց վրայ կէտեր դրուած են: — Գիծերը 1—4 են, իսկ կէտերը՝ 1—9:

Արդ՝ այդ չորս կարգ կը ներկայացնեն Գ. Ձեւի վրայ (4×9=) 36 գիրերու 4 կարգերը: Իսկ այդ գիծերու վրայ դրուած կէտերը ցոյց կուտան իւրաքանչիւր կարգի գիրերուն թուահամարները: Այսպէս.

	(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)	(7)	(8)	(9)
I —	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ (1)
II —	ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ (2)
III —	ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ղ (3)
IIII —	ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք (4)

Ծածկագրութեան այս դրութիւնը շատ յայտնի է և պարզ: այնպէս որ եթէ անուն մը կամ խօսք մը կ'ուզես ծածկագրել, այդ անունին կամ խօսքին գիրերը կը նշանակես կամ կը փոխանակես իրենց կարգին համապատասխանող 1—4 գիծերով, զնելով նաեւ այդ գիծերուն վրայ գիրերուն համապատասխանող 1—9 կէտեր:

Օրինակի համար:



Ալ փնտռենք վերջին հարցումին ալ պատասխանը: Ո՞վ կազմեց հայ տղուն Քերականը: Անշուշտ ամենադժուարին հարցում մըն է այս, որուն՝ հակառակ բուն հետաքրքրութեանս՝ չեմ կրցած հաստատ պատասխան մը գտնել: Միայն իբր հաստատուն հաւանականութիւն կ'ենթադրենք, որ առաւելագէս յոյն մանկավարժութեան հետեւելով Սահակ-Մեսրոպեան դպրոցը հայացուց պնակիտի դրութիւնը, և մեսրոպեան 36 գիրեր, 6×6=36 շարքով, պատկերացան հայ պնակիտներու վրայ և տրուեցան հայ տղոց ձեռքը: Նկատի առնելով հայերէն 36 գիրերու այլ և այլ ձեւերով դասուանդութիւններն ալ, թուաբանական սկզբունքներով, կ'ենթադրենք որ ասոր ալ հեղինակը եղած ըլլայ Անանիա Շիրակացին (Է. Գար), որ իբր թուագէտ և չափագէտ, իր բազում գործերէն քիչերով, միակ դէպքը մնացած է հայ մատենագրութեան մէջ:

Անանիա Շիրակացի, Պիւթագորեանց պէս, ամէն գիտութեան հիմը կը գաւանի թիւը կամ համարողական արուեստը, և շատ կը ցաւի որ Հայոց մէջ չկար — թերեւս աւելի ճիշտ կ'ըլլար ըսել — չէր վարձացած թիւերու ուսումը: “Եւ յոյժ կարօտեալ արուեստիս համարողական, խորհեցայ թէ ոչինչ յարմարի բան իմաստասիրութեան առանց թուոյ, կարծելով զսա մայր ամենայն իմաստից: Եւ ի Հայս ոչ գտի մարդ, որ գիտակ էր իմաստասիրութեան, և ոչ գիւրք արուեստից գտի յաշխարհիս (Հայոց):” Անանիա դիտել կուտայ, թէ առաջին անգամ ինքը ներմուծեց Հայոց մէջ այս “հօր արուեստ”ը, թէև Հայք շատ գոհ չեղան. և թէպէտ շատեր եկան իր մօտ ուսանելու, բայց առանց ձեռք բերելու “արուեստին կատարումը”, հարեւանցի

(*) Կ'արժէ պրպել եւ երեւան հանել, թէ ե՞րբ սկսած է ծածկագրութեան այս ձեւը հայ մատենագրութեան մէջ: Ասիկա պիտի օգնէր նոսր Քերականի կազմութեան ժամանակը:

սորվեցան, առանձին դպրոց բացին և իրենց չգիտցածները ուսուցանելու ելան: — “Եւ ես տրուպս ի Հայաստանեայց ուսայ ի նմանէ (ի Տիւրքիոսէ) զՏգոր արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի և բերի յաշխարհն մեր, առանց ուրուք լինելով ձեռնաւ. միայն ջանիւ՝ օգնականութեամբն Աստուծոյ և աղօթիւք Սուրբ Լուսաւորչին. թէպէտ և ոչ որ եղև շնորհակալ իմոց աշխատութեանս. և ոչ սիրեն Հայքս իմաստ կամ գիտութիւն, այլ ծոյլք են և ձանձրացողք: Չի իբրեւ եկի ի Հայս, բազումք եկին առ իս յուսումն և սուղ ինչ խելամտեալ՝ ոչ մնացին կատարման արուեստին, թողին զիս և մեկուսացան, սկսան ուսուցանել զոր ոչն գիտէին, և ոչ էին հասու, և այլն (Տե՛ս Անանիայի Երեմիանոյ Մնացորդ Բանից, տպ. Ս. Պետրբուրգ, 1877, էջ 1—2):

Քանի որ ամէն “իմաստ”ի կամ գիտութեան “մայր”ը, հիմը՝ հղբ պրոպագանդա, թիւերու ուսումն է Շիրակացւոյն համար, քանի որ հայ տղու առաջին դասագիրքին առաջին երեսները, ինչպէս որ տեսանք, թուարանական հաշիւներու վրայ հիմնուած են, մեր ենթագրութիւնը աւելի ևս կը հաստատուի, քերականին հեղինակ ձանձնալու նոյն ինքն Անանիա Շիրակացին, որուն գործը, “յորինեալ ի վաղ ժամանակաց, ուշաբար արձանագրութեամբ, մեծատարած շրջան մը ըրած է դարերէ ի վեր հայ մանուկներու ձեռքը:

Քերականի կազմութեան վրայ ուշադրութիւն դարձուցած էի Ազգ. Մատենադարանի (Վ. Պոլիս-Ղալաթիա) ձեռագիրները ուսումնասիրելու ատեն: Այդ ձեռագիրներուն մէջ թիւ 69ը (Փիլոն Եբրայեցի) իր 602—611 երեսներուն մէջ կը բովանդակէ թուարանական գործ մը, որ կարծես թէ ընդարձակ Քերական մըն է, և կը կրէ սա՛ խորագիրը. — “Յովհաննա Գալատացի, Յաղագս անկիւնաւոր թուոց, զի ի յուսումնասէր մանկանց, որ կամիցին և ախորժեն զվարժումն որ ըստ բնութեան թուոց, անաշխատք եղիցին յայնոսիկ և դիւրու հասցեն ըստ սուելոց և առաջի եղելոց խորանացո, որում ախորժենն” (Հմմտ. նոյն Մատենադարանի թիւ 254 ձեռագրի (Ղեց-հագարեակ) հետ. եր. 44—49): — Այս ձեռագրին սկիզբը Անանիա Շիրակացւոյն թուարանական դասերը կան չորս գործողութեանց վրայ:

Այս փոքրիկ փորձը ցոյց կուտայ, թէ կ’արժէ աւելի ընդարձակ ծրագրով մը ուսումնասիրել այս նիւթը: Մենք առ այժմ այդպիսի ուսումնասիրութեան համար ոչ դիւրութիւն ունինք ոչ ալ ժամանակ: Չայն կ’սպասենք այդ երկու պարգեւներն ալ վայելող բանասէրներէ:

Հիմա, փորձս վերջացնելու ատեն, կ’անդրադառնամ մանկական օրերուս, գոնէ 35 տարուան հնութեան մը, ո՛ւր Քերականի առաջին երեսը սերտել կուտային ինձի և դպրոցակիցներու: “Խա՛ւ օգնէա ինչ”, մաղթանքով կ’սկսէր Ա, Բ, Գ, այլն, և կը վերջանար՝ “Ինի մէն իմ”, Աստուած իմ”, փառատրութեամբ: Անշուշտ այն ատեն ո՛չ մեր վարժապետը և վարժապետները գիտէին, թէ Քերականի կազմութիւնը թուարանական խորհուրդներու համագրութիւն մըն էր, ո՛չ ալ մեզի կրնային սորվեցնել, եթէ նոյն իսկ գիտնային (•): Բաց այնքան հաւատարիմ էին մետրոպեան տառերու հինգ ձեւերով դասաւորութեան վրայ դասաւանդութեանը, որ ես մինչեւ հիմա ամուր կերպով կը յիշեմ զանոնք, և Ա. Խ, 2, Բ, Ծ, Պ. և այլն (Ձեւ Բ. և Գ.), ԱԺՃՈ, ԲԻՄՍ, (Գ. և Ե. Ձեւեր) և այլն, և ետքը՝ ԲԱ, ԲԵ, ԲԷ (— բէն այբ՝ ք, բէն եչ՝ քէ, բէն է՝ քէ) ձայնաւոր հեգելը այնքան խոր տպաւորուած են մտքիս մէջ, որ մեր ժամանակի մանկավարժութեան բոլոր տգիտութիւնը և բոլոր միամտութիւնը կ’արձանացնեն աչքիս առջեւ:

Օ, “մանկութեան օրեր, անցան գնացին”, ա՛լ չգրանալու համար. բայց չտարին անշուշտ “ի վաղ ժամանակաց, յորինուած Քերականը, որ դեռ շատ տեղեր հայ տղուն առաջին դասագիրքն է, նոյն ձեւով, նոյն ոճով, մանկավարժական նոյն դրութեամբ և տգիտութեամբ:

Նշանաւոր Պալաթցի Գէորգ Գպիր մանկավարժական սկզբունք մը բանաձեւած է.

— “Եւ թէպէտ կարի իմն դիւրել զձանապարհ ուսման ոչ է բարիոր, զի զհամբակ ուսումնասէր պղերգ առնէ այն դիւրութիւն, և ի նոյն ապաստանեալ և անփոյթ եղեալ, ո՛չ յարանայ ի դեգերանս կրթանաց: Բայց և յոյժ դժուարին առնել և առապար կացուցանել զուսմանն շաւիղ, դարձեալ ո՛չ է բարւոք. զի այն դժուարութիւն կորուստ գործէ ժամու և ժամանակի. յորմէ ձանձրութիւն հետեւեալ ուսանողին՝ տաղապարի և լքանէ” (Բարն. Պրակն. եր. 48):

Թերեւս հին մանկավարժներ (բառին ալ հին իմաստով), ըլլա՛յ իբր հետեւանք տգիտութեան, ըլլա՛յ դիտումով, որ դարձեալ արգիւնք է տգիտութեան, առ հասարակ հաւատարիմ գտնուած են Գէորգ Գպրի բանաձեւի երկրորդ մասին: Գէորգ Գպիր միջին շաւիղ մը կը յանձնարարէ. բայց արդի մանկավարժութիւնը կ’ընդունի, թէ “բարիոր է կարի իմն դիւրել զձանապարհ ուսման”. վասն զի՝ ասի ոչ թէ՛ պղերգ ու անփոյթ կ’ընէ համբակ ուսանողը, այլ աւելի եւս հետաքրքրութիւն կ’արթնցնէ անոր ներսը և կը մղէ զայն յառաջդիմութեան:

Հայ տղու առաջին դասագիրքը սակայն, ա՛լ պատմութեան և բանասիրութեան մէջ միայն արժէք պէտք է ունենայ՝ իբր շատ հետաքրքրական նիւթ ուսումնասիրութեան:


1910 Մարտ 20 ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԻԼԷՍԵՐԵԱՆ*
Կարմիր վաճճ (Անկիւրիա)

*) Այժմ՝ Եպիսկոպոս :

ՏԻՊՐԱՆ ԽԱՆ ՔԵԼԵԿԵԱՆ

ԵՒ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ԵՒՐՈՊԱՑԻ ՄԷՉ



(Առնճնի Saturday Reviewէն քարգմանուած :)

Պէնէտէթթօ քրոս իր սքանչելի և սրամիտ «Էթէթիքա»-ին մէջ կ'ըսէ թէ մենք՝ Պէրիկլէսի ժամանակակիցներէն աւելի մեծ մտային կորով չունինք, այլ աւելի հարուստ ենք միայն: Եւ իբրև հարուստ մարդիկ՝ միշտ աւելի հարստանալու սահմանուած՝ մենք կրնանք ուրախանալ մեր ձեռք ձգած բոլորովին մէկ նոր հարստութիւնով: Կոր չէինք կրնար իսկ ակնկալել ասկէ քանի մը տարիներ առաջ:

Պարսկաստանը արտագրած է անվերջ բազմազանութիւնով և գերագոյն գեղեցկութիւնով խեցեղէն անօթներ, և արտադրուած այն շրջանին — ԺԿ և ԺԿ դարու սկիզբներուն — երբ այդ երկրին գեղարուեստական կեանքը ամենէն աւելի բերրի և զօրաւոր ազգայնական նկարագիր ունէր:

Մօնկօլեան յաղթանակները, որոնք սկսան 1220 թուականին ճինկիզ խանով, չինական ազգեցութիւնը բերին Պարսկաստան: Բայց Իրանի արուեստագէտներն, որոնք զժուարաւ տեղի կուտային օտարամուտ նորութիւններուն առջև, աւելի իւրաչրոյցին գանոնք քան թէ իւրացուցին Սաֆիտներու իշխանութեան շրջանին՝ ԺՁ դարուն: Չինական գծազրուութիւնը և գոյները աչքի կը զարնեն Շահ Թամասի և Շահ Ապպասի սքանչելի կապերտներուն և կտաններուն մէջ, բայց անոնց մէջ չինական չեղող այնքան բան կար որ կարելի էր հաւատալ, նախ քան ուրիշ հաստատ ապացոյց, պարսկական արուեստի մը գոյութեան, արուեստի մը՝ բոլորովին անկար հեռաւոր Արեւելքէն, և ուղղակի ծնունդ Միջագետքի:

Տանընթիւ տարի առաջ խեցեղէն անօթներ հանուեցան Բաքայի մէջ, Հալէպի մօտ, որոնց գիւտը մեծ անակնկալ և ուրախութիւն պատճառեց մօտաւոր Արեւելքի արուեստի սիրահարներուն: Գտնուած կտորներէն շատը խողովակներ էին՝ թէև աւրուած թրծումի միջոցին, բայց իրենց գոյնի փայլունութիւնը, մաքրութիւնը և նկարներու ազնուութիւնն ու նրբութիւնը չէին կրնար չի համոզել ամէնքը՝ բաց ի անտարբերներէն: Քիչ յետոյ, Թէհրանի մօտ Բէյի ու 1503ին Սուլթանապատի շրջականները նոր պեղումներ սկսան: Մէկ քանի տարիէ ի վեր Բաքայի մէջ ոչ մէկ կարեւոր գիւտ տեղի չունեցաւ, բայց և այնպէս Պարսիկները միջոցներ ունին այս գիւտերէկ մասունքները գտնելու և վաճառելու ու կը շարունակեն տեղագործէն պեղել Աերամէնի, Համատանի, Քէրշանի և ուրիշ վայրերու մէջ: Մեծ թանկարարները շատ քիչ բան գնեցին, որովհետև ըստ իրենց սովորութեան անոնք ետ կը քաշուին հրապարակէն երբ գինները կը սկսին բարձրանալ, և մասնաւոր հաւաքողներու (collectionneur) ձեռքը կ'իջնան

ամենէն գեղեցիկ իրերը: Անտոնցիները առիթ ունեցան Պրըլինկընի գեղարուեստական ակումբին ցուցահանդէսին մէջ տեսնելու շատ մը հիանալի կտորներ, թէև նոր սքանչելիքներ եկան ասկէ ի վեր. ու այս տարի ալ Միւնխենի ցուցահանդէսը ունէինք: Միւնխենի ցուցահանդէսին առիթով ըսած էի այս էջերուն մէջ, թէ հոն ցուցադրուած խեցեղէններէն աւելի լաւերը գոյութիւն ունին: Եթէ հիմա ձեռքիս տակ գտնուող գրքին պարունակած հաւաքածոն այդ ցուցահանդէսին զրկուած ըլլար, այն ատեն հարցը տարբեր գոյն կը ստանար: Այս հատորին մէջ, 113 նկարներով հաւաքածոյ մը կայ որ ցոյց կուտայ ինչպէս ոչ մէկ ուրիշ հաւաքածոյ կրնայ ցոյց տալ, թէ Պարսկաստանի մէջ կատարուած այդ անձանօթ ու անանուն պեղումներու արդիւնքը ինչ արտասովոր նպաստ մը կը հայթայթէ մեր հարստութեան: Պնակները բոլորն ալ սեւ ու ձերմակով վերարտադրուած են, և ես կը կարծեմ որ լաւ է ուրիշ գոյն չի փորձել անոնց վրայ, որովհետև այդ գոյներու մասին ամենէն աւելի լաւ գաղափար կրնայ տալ մի միայն պարսիկ բրուտին կիտուածը (մինէ): Այդ պնակները կը պարունակեն անսպառելի պահեստ մը պերագակի, խոր մութ կապոյտի, հին փղոսկրի և պրիսմակի գանազան ցուրբերու. անոնց խորութիւնը կը գերազանցէ խորութիւնն այն ամէն գոյներու, զոր ուրիշ արուեստագէտներ երբէք իրագործած ըլլան: Պարոն Քելեկեան լաւ որ չէ փոփոխած անոնց գոյները. իր սեւ ու ձերմակ պնակները ի յայտ կը բերեն շնորհալի ձեւեր և նկարի անվերջ զանազանութիւններ: Այս պարսիկ նկարիչները վերջին ծայր սիւալ հասկցուած էին առաջ: Անոնք գծերը կը վերածեն ամենապարզ ու ամենակենսական տարրերու. անոնք կ'ուսումնասիրեն կնոջ գէր ու փափուկ դաստակի կորութիւնը, շիկնող տասնըհինգամեայ կոյսին բոլորակ լուսնանման և գրեթէ անդիմագիծ դէմքը, այդ բոլորը կը ներկայացնեն դուրս ցայտեցնելով յատկանշական գծերը եւ մասնաւոր չարաճճի հաճոյքով ներկայացնելով հարէմի գեռատի գեղութիւններու գունատ ու կլոր մարմիններն ու լեցուն այտերով դէմքերը՝ ինչ որ շատ մօտ է ծաղրանկարի: Այն պնակներն ու գաւաթները որոնց վրայ կենդանիներ նկարուած են, ի յայտ կը բերեն դիտելու միւսնայն ընդունակութիւնները, և գծի նոյն վարպետութիւնն ու վերլուծումը:

Տարօրինակ կրնայ թուիլ Ղուրանի դաւանած արգելքներուն դէմ այսքան ինքնայատ անտարբերութիւն մը Պարսկաստանի պէս իսլամ երկրի մը արուեստին մէջ. բայց պէտք չէ մոռնալ որ Պարսիկները միշտ պատկանած են շիթ աղանդին ու հետեւաբար իրենց մտաւորական և գեղարուեստական կեանքը աւելի հարուստ եղած է: Անոնք արտագրած են միսթիք փիլիսոփայութեան դպրոցներ և նկարած ու կերտած են մարդիկ, կենդանիներ և նոյն իսկ թեւաւոր հրեշտակներ: Իսլամութիւնն իսկ չէր կրնար



Պարսկական սկահակ, ժ՛՛ դար, գտնուած՝ Սաւրբանայայ :

փոխել Պարսիկները ու Միջագետքի բնակիչները և տարբեր բան մը շինել անոնցմէ քան ինչ որ եղած էին մինչև այն ժամանակ, այսինքն գեղարուեստագէտ, բանաստեղծ և բնութեան գաղանիքները խուզարկողներ: Թէ որքան երկար ատեն ունեցած են անոնք խեցեգործութեան մասնագիտութիւնը, այդ անկարելի է ըսել առ այժմ, միայն թէ քելեկեան հաւաքածոն կը պարունակէ երկու կոթով գաւաթ մը, որուն վրայ հիանալի կերպով քանդակուած է ձի մը և իր հեծեալը, ու այդ բոլորը ծածկուած խոր մուկ պերդակային ցոլքի տակ, զոր կարելի է համարել քրիստոսէ 1000 տարի առաջ կերտուած գործ մը: Պարոնայք Տիէօրաֆուա և Մօրկըն նորագոյն պնակներ գտած են, որոնք ցոյց կուտան թէ ինչպէս արուեստի աւանդութիւնը փոխանցուած է, ժամանակի ընթացքին մէջ: Նոյն բանը կ'ապացուցանեն նաեւ գտնուած

պտուկներն ու հատակոտորները զարդարուած կապոյտ և կանաչ գանապան կիտուածներով, որոնք Միջագետքի մէջ գտնուած են և կը թուին քրիստոնէական թուականէն առաջ կերտուած ըլլալ: Վարով ջահիրու, որոնք այնքան կատարելագործութեան հասած են Պարսկաստանի մէջ, այնպէս կը կարծուի որ անոնք սկսած են շինուիլ Եգիպտոսի մէջ նախքան Պարսիկներու և Միջագետքի անոնց պատրաստութեան ծանօթ ըլլալը:

Պարոն քելեկեան ունի մէկ քանի կտորներ զարդարուած հափիսէով, որոնցմէ երկուքը անտարակոյս քրիստոնեաներու ձեռակերտն են, որովհետեւ մէկին վրայ բիւզանդական խաչ մը կայ և միւսին վրայ բուրվառող քահանայ մը: Այս խաչիական կտորներուն ոչ մէկը թուական կը կրէ. բայց անոնց հետ գտնուած ձեռագիրներ միանալով իրենց զարդանկարներու նկարա-



Պարսկական սկահակ, ԺԿ դար, գտնուած՝ Սուլթանուպաս :

գրին , ոչ մէկ կասկած կը թողուն անոնց Ը. եւ Թ. դարու գործ ըլլալուն . եւ ոչ մէկ պատճառ կայ արգիւոյ այն ննթագրութիւնը թէ այդ մանագիտութիւնը այդ թուականէն առաջ ծանօթ եղած ըլլայ . քանի որ գտնուած նմուշները այդքան կատարեալ են : Եպպասական խաչիֆաներուն Սիւրիայի , Պարսկաստանի , Միջագետքի եւ Հիւս. Ափրիկէի վրայ տիրապետութեան շրջանին , անօթաշինութեան տեղական վարժարաններ գոյութիւն ունէին Եգիպտոսի եւ Միջագետքի մէջ , կարելի է որ Հարուն-էլ-Րաշիտի հաստատած կայսրութեան շնորհիւ այդ վարժարաններու միջիւ յարաբերութիւն առաջ եկաւ , ու այդպէսով անոնք փոխադարձաբար օգտուեցան իրարմէ փոխ առնելով գեղազարդական մեթիֆներ եւ մանագիտական առանձնայատուկ ուղղութիւններ : Մեծ խաչիֆան , ամէն անկիւններէ արուեստագետներ հաւաքեց իր արքունիքին շուրջը . եւ այդ միջոցով նախ-խաւմական աւանդութիւններն իրար խառնուելով

եւ իրարու միանալով կազմեցին հիանալիօրէն բազմազան մահմետական արուեստը եւ որ տեւեց Հիճրէթի առաջին վեց-եօթը դարերը , որը կը կոչուի Արարական արուեստ , թերեւս այն պատճառով որ Սիւրիացիները , Պարսիկները , Խաչիները եւ Յոյները աշխատեցնող աւագանին ու արհեստականները Արաբներ էին :

Ես են մը կը կարծուէր որ Բաքքայի անօթները աւելի առաջ գտնուած են քան Պարսկաստանի մէջ գտնուածները . բայց հիմա որ Բէճէսի եւ Սուլթանուպատի մէջ գտնուած աւելի շատ կտորներ ունինք , այդ կարծիքը սխալ կը թուի : Բէճէս շատ հին քաղաք մըն է . Թօպէթ այցելեց այդ քաղաքը ու հոն էր որ տասը տաղանդ արծաթի պահ թողուց Գաբրիասի եղբոր Գարայէլի մօտ , բայց չի կրցաւ երթալ եւ յետ ստանալ այդ գումարը երկրին խառնակ վիճակին պատճառով , ինչ որ Աօլթերին չարակամ խճբճանք մը կը ներշնչէ իր «Բարելոնի իշխանուհին» գրուածքին մէջ : Այդ երկրին

վիճակը գեո խառնակ ըլլալ կը թուի, ապա թէ ոչ ֆրանսա՝ որ կը կարծուի թէ առանձնա շնորհում ունի հնագիտական պեղումներ կատարելու Պարսկաստանի մէջ, պիտի չլիցողուր որ լաւագոյն կտորները բնիկներու աւար դառնան: Թէեւ ինծի ծանօթ ամենահին պարսկական անօթը՝ այս հաւաքածոյին մէջ գտնուող կղմինտր մը՝ 515/1121 թուականներուն շինուած է, շատ իրաւացի պատճառներ ունինք հաւատարու որ Բէճէսի եւ Սուլթանապատի մէջ գտնուած նմաններէն մէկ քանին շինուած են Հարուն-էլ-Բաշիտի թագաւորութեան շրջանին, որ կը վերջանայ 809ին (Ն. Բ.), որովհետեւ շատ մօտ նմանութիւն կայ նաեւ այս յիշեալ տեղերու եւ Եփիպոսոս ֆոսթաթի մէջ գտնուած հաֆիսէի կտորներուն մէջ, ու գիտենք որ այս վերջինները քրիստոսէ հապար տարի առաջ շինուած են: Ինչպէս նաև շատ մը թուագրեալ գաւաթներ և ամաններ գտնուած են Բէճէսի ու Սուլթանապատի մէջ՝ Թ. դարու պատկանող և շատ տրամաբանօրէն կրնանք եզրակացնել որ նոյն տեղը գտնուած նման բայց աւելի հնորեայ ամանները մէկ քանի դար առաջուայ գործեր եղած ըլլան: Պարսկական յախճապակեշինութիւնը բաւական ծանօթ է և հիմա կրնանք վստահաբար յայտարարել որ Պարսիկները երբէք անցած քացած ոճերու կէտ առ կէտ նմանութեան մէջ խորասուզուողներ չէին, և այս կէտին մէջ աւելի ֆրանսացիներու կը նմանէին քան թէ Չինացիներուն: Ամէն մէկ շրջան իր սեփական առանձնայատկութիւններով կը ներկայանայ պարսիկ արուեստին մէջ: Առան կուգայ, թէ եւ ուշ, արտայայտութեան պատմութեան մէջ պարապ մը լեցնելու և յեղաշրջելու այն կարծիքները զոր մենք կազմած էինք այն մութ և կարեւոր շրջանի մասին, որ անմիջապէս յաջորդած է իսլամ տիրապետութեան իրարանցումին և որու միջոցին իսլամական արուեստի գլխաւոր առանձնայատկութիւնները բնորոշուեցան:

Ն Ս Ք Ե Չ Մ Ե Ղ Ա Յ

ԹԱՏՐԵՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԻ

(ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ)

ՏԵՍԻԼ Ա.

(ՀՈՒՓՍԻՄԷ Առանձին)

(Ներս կը մտնէ դառնացած երեւոյթով) Տունս դժոխք է դարձեր... Յարութիւնի անթութեանց բաժակն ալ յորդեցաւ... Թո՛ղ այս ամօթով շաղախուած պատերը քանդուի՛ն. կործանուի՛ն... Թո՛ղ այս ապականութեան շէնքը հիմնայատակ կործանի... Դեռ այս մթնոլորտը թարմ է ոճրագործական խորհուրդներով...

Պիտի պայթիմ վերջապէս... Ձիս կը խարէ... Միամիտները կը շահագործէ... Ազգութիւնը կը վաճառէ... Սրմայի պատիւը կը բռնաբարէ... Նոր գտնութիւններ... Չերբակալութիւն... Եքստր... Յարութիւն դահիճ է... Ձիս խարեց, շարաչար կը խարէ... Միշտ անպարկեշտ ուսիկանապետներու հետ... Թրքութիւններու հոլանի կուրծքերուն վրայ... Օ՛հ, քարշիւ, գարշիւ... Հիմա տուն պիտի վերադառնայ... գանկը յոգնած հազարումէկ ստորին մեքենայութիւններով և դէմքը անարտայայտ շարագուշակ ծրագիրներու մէջ... Չզուանքը ա՛լ ամէն կերպով պաշարած է հոգիս... Ես չեմ ուզեր գլուխս անոր ազգաբազա գլուխին քով հանգչեցնել... Ա՛չ, թոյլ պիտի չտամ որ այս անգամ աչքերուս առջեւ գործուած ոճիր մըն ալ յաղթանակէ... Ես ազնիւ և պատուական Հայու մը աղջիկն էի. այսօր ազգադաւի մը կիւնը: Խեղճ Սրմա, կը խոտորի բախտի անիւէն գահափոխօրէն... Այս վայրկեանէն իսկ Տ. Ամբակում հօր պիտի դիմեմ, թէ Սրմա տոսկ անգթութիւններու զոհ մըն է, թէ ամուսինս ազգադա՛ւ մըն է միայն, թէ իրողութիւնը պատուաբեր երաշխիք մըն է Սրմայի հաւատարմութեան և թէ իրեն պիտի վստահեմ կենքիս գնովն այսպիսի խոստովանութիւն մը... Այո՛, Տ. Ամբակում հայրը եկեղեցականներու մէջ հազուագիւտ դէմք մըն է, որ իր երկար տարիները անցուցեր է բանտի և աքսորի մէջ և որ այսօր, տասը տարի է, իր հայրենիքէն հեռու, աքսոր կը մնայ Պոլիս... Ան կրնայ համոզել Նիկողոս աղան, իսկ ես պիտի սպառնամ ամուսնոյս՝ Սրման հեռագրով Պոլիս դարձնել... վերջացաւ... (Ուշադիր ակնկոյտներ կը արեւ) Ինքն է, ա՛խ, չեմ ուզեր իր դէմքը նոյն իսկ աչքիս առջեւ բերել:

(Դուռը բացուելով Յարութիւն ներս կը մտնէ):

ՏԵՍԻԼ Բ.

ՀՈՒՓՍԻՄԷ, ՅԱՐՈՒԹԻՒՆ

Յար. — (Անօրապարտ) Ի՞նչ կ'ընես հօս միտակ, քե՛զ կը փնտռեմ...

Հոիփ. — (Դժգոն) Ձիս փնտռելու պէտք չունիս... Ձիս հանգիստ ձգէ այս տխուր սենեակին մէջ: (Երեսը կը դարձնէ):

Յար. — Նորէ՛ն սկսար բանաստեղծութեան, դուն զրոյս կեանքէն երբէք լուր չպիտի ունենաս: Աշխարհ զրամի վրայ կառուցուած է, կնիկ, դրամի... Սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ... (Բարանաք շփելով):

Հոիփ. — Այո՛, այդ դրամին համար դուն ամէն ոճիր գործելու յանձն առ...

Յար. — Աղւոր աչքերդ սիրեմ, Հոիփսիմէ, մի սկսիր նորէն... Հայտէ՛ կերակուր պատրաստէ:

Հոիփ. — Ես որոշած եմ այս վայրկեանէն իսկ այս յարկին մէջ դեր չունենալ:

Յար. — Հայտէ՛, ան՛ուշս, շէքէրի պէս կը խօսիս, բայց հիմա ատենը չէ: Այսօր շո՛ւս պիտի մեկնիմ:

Հոփի. — Այսօրուան այս սենեակին մէջ գործած ոճիրդ մոռցար, այնպէս չէ՞...

Յար. — Նորէն մի՛ սկսիր, ի՞նչ ոճիր է որ շարունակ երեսիս կուտաս: Եթէ ես ոճրագործ ըլլայի, մինչեւ հիմա զիս մէջտեղը պիտի թողէին...

Հոփի. — Բռնաբարումը, զրպարտութիւնը, ձերբակալութիւնը, մատնութիւնը, պքսորը, բանտը ոճիր չե՞ն...

Յար. — Մի՛շտ միեւնոյն խօսքերն է որ կը կրկնես... Ապագան կրնայ գնահատել արժանիքս: Իս ազգին և կառավարութեան միջեւ այնպիսի դեր ստանձնած եմ որ առաջինին աչքին վատ կ'երեւիմ, երկրորդին լաւ. բայց իրականութիւնը հակառակն է, հասկցա՞ր...

Հոփի. — Այդպէս առաջ կրնայիր զիս համոզել... Սրման միամիտ, երկչոտ և անբիծ աղջիկ էր... Աղէ՛կ կ'ընես, Յարութիւն, եթէ այս կեղծիքը միանգամ ընդմիշտ վերցնես մեր մէջէն...

Յար. — (Շոյեղով կնոջ ուսը) Եկո՛ւր, անուշս, տա փտած խօսքերէդ վա՛ց անցիր... Ամէնքը քեզի երանի կուտան որ դուն իմ կինս ես... Ի՞նչ այլանդակ խօսքեր ալ կ'ընես...

Հոփի. — Ես անպատուութիւն կը համարիմ քեզի հետ կենակցիլ... Այս ոճիրը ձեռքովդ կը մաքրե՞ս թէ ոչ...

Յար. — Կերակուրը պատրաստէ, անուշս, հիմա կատակելու ատենը չէ:

Հոփի. — (Բարկացած) Ա՛յ, ըսել է իմ խօսքերս կարեւորութիւն չունին քեզի համար. կատակի կուտաս, լա՛ւ, ահա՛ տուճո՞ղ, ահա՛ բանալիներդ (Բանալիներու սրցակ մը կը նետէ գետիկը) կ'ուզես թըրուհիներով կառավարէ, կ'ուզես ոստիկաններով. անո՞նք թող քու կերակուրդ պատրաստեն: (Դուռը կը բանայ բարկութեամբ՝ դուրս ելլելու համար):

Յար. — (Բաշտեղով Հոփիս թեւեւ) Հոփիսիմէ, երկու տարուան պէպէի կը նմանիս, եկո՛ւր, ո՞ւր կերթաս. առ սա բանալիները: (Առնելով գետնէն):

Հոփի. — (Մերժելով՝ դարձեալ գետիկը կը նետէ) Կամ գործած ոճիրդ կը քաւես, Սրման հեռագրով, Պոլիս կը կանչես և կամ ես այս տանը մէջ գործ չունիմ: Ահա՛ ես կ'երթամ... (Դուրս կը նետուի):

ՏԵՍԻԼ Գ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ (Առանձին)

(Սենեակին դուռը բարկութեամբ փակելով բանալիները գետնէն դարձեալ կ'առնէ եւ կ'սկսի

մտախոն երթելիկէ՛ր՝ մասը շրթունքիս) Ո՛չ, կընողս հետ կատակ չըլլուիր... Ալ այս անգամ ի՞նչ ալ ըսէ, իրաւունք ունի... Ի՞նչ գիտնամ Սրմայի ինչ ըլլալը. կարծեցի որ երբ ամբաստանութիւն կար վրան, անպատճառ իրողութիւն մը կեցած ըլլալու էր... ԸՏը... ան ի՞նչ աղւոր աչքեր ունէր... Յիմարը, Նիկողոս է, ինչ է. նամուսին համար չընդունիր, եղեր... բախտ ունի ու վայելել չգիտէ. սուրբի պէս աղջիկ է եղեր... հավասար փո՛րս մնաց... աւելի հարուած մըն ալ վրան ճապա... Հի՛չ մտքես չպիտի ելլէ... Աս ամենէն աւելի շիղերուս դպաւ... բայց ո՛չ, եթէ արտուել չտայի՛ շուտով խնդիրը կը տարածայնէին... Ուրիշները հաշտեցնելու տեղ գուցէ մենք բաժնուէինք... Ա՛յ, սա Հոփիկը աղէկ է, աղէ՛կ է ամմա սա ըրած բաները չեն քաշուիր. ալ այս անգամ ոճիքս ազատելիք չունիմ... հիմա ի՞նչ ընեմ, բերե՛լ տամ Սրման... Օ՛հ, կարելի չէ՛, իմ պատիւս պիտի խճրճեն և թէ հաշտութիւն ալ հաւանական չէ... Ի՞նչ ընեմ, ի՞նչ ընեմ... (Կանգ կ'առնէ եւ բաւական մտածելէ ետք) Օ՛, ո՞... շա՛տ լաւ կ'ըլլայ, շա՛տ լաւ եկաւ միտքս... Պապը-Ջապթիյէ Մէհմէտ Ալի կ'երթամ հիմա, քանի մը ոստիկաններով վաղը կամ միւս օր պաշարել կուտամ Նիկողոսի խանութը, ձերբակալել կուտամ՝ զինքը, յետոյ պքսոր միւսներուն ետեւէն... Օ՛յ, շա՛տ աղւոր եղաւ, շատ աղւոր եղաւ... Հոփիկին ձեռքէ՛ն ալ կ'ապատիմ, ապագայ անտեղութիւններէ ալ... Ուզէ չուզէ Նիկողոսը կնիկը պիտի ընդունի, ի՞նչ պիտի ընէ: Օ՛հ, շա՛տ լաւ, շա՛տ լաւ...

(Աւարագոյր)

ԵՐՐՐՈՐԳ ԱՐԱՐՈՒԱԾ

Գործողութիւնը տեղի կ'ունենայ Ակն, Մարգար աղայի սակ կահաւորուած սենեակներէն մեկուն մէջ: Գետիկը սախսակաւած: Բեռի խորը՝ դեպի ձախ՝ դուռ մը եւ « տրապիզոն» կոչուած բազրիք մը: Ծիշող խորը « շառապխանէ » որ բոլորակ սախսակ մըն է մեկ մեքր բարձրութեամբ պատին մէջ մխրճուած. վրան առանձին պնակի մէջ շարուած սկահակներ, ծածկուած սեւ սփռոցով. քովը խոշոր մոխրակաշներ՝ իրարու վրայ դրուած: Բարձրակէն կախուած ձրթիկեակ սակ ազգահամարը շրջա-

նակով : Աջ կողմը « ուխ » ըստած դարակ մը՝ անկողին զեկեղեղու յասուկ : Հասարակ դարակ մը : Աջ ու ձախ պատերու երկարութեամբը ցած ու միակնուր սէտիք (բազմոց), վրան ծուլաւոր գորգով ծածկուած եան (մինտէր) եւ բարձեր հասիկ հասիկ քովէ քով շարուած՝ կրկնած պատերուն : Կողմնակի պատուհաններ՝ ապակափեղկերը բաց, ուրիշ կը տեսնուի սան յարակից պարտէզը մայիսեան սաղարթներով : Պատուհաններու ուղղութեամբ պատերու երկու անկիւններուն բարձունքը երկու առանձին սաֆ (դարձեալ բոլորակ սախակ մը՝ մեկ մասը պատին մէջ մխրձուած երկու մեքր բարձրութեամբ), մեկուն վրայ շարուած իրարու վրայ Սաղմոս, Նարեկ, Ժամագիրք եւն. կրօնական գրքեր, իսկ միւսին վրայ կարի ճգաւթիւղ մը : Պատերու զանազան կախուած զանազան յուսանկարներ եւ երկար չպուխ մը :

ՏԵՍԻԼ Ա.

ՄՐԾԵ, ՄԱՐԳԱՐ, ԽԱՏԷՄ, ՆԱՉԼՈՒ

Արմա . (Հիւանդ պատկած է անկողնին մէջ : Գիշերնոց կը կրէ : Գլխուն վերեւ կը զտնուի, առանձին պնակի մէջ, դեղի շիշ մը, դեղահասի տուփեր, սերկելիչ մը եւ վարդ մը գոր մերթ ընդ մերթ կը հոսոսէ : Երբեմն հիւանդի յասուկ բացագանչութիւններ կ'արձակէ)

Նազլու . (Գեղեցիկ դեմքով : Հագած է բացգոյն սպածոյէ շրջագեւտ մը՝ վիզն ու թեւերը ծածկուած անթիւներով : Գլուխը « ջրմայրով եագմա », ոսկերը խասուսիկ գուշպայ : Նսած է Մրմայի դեմ, գուշպայ կը հիւսէ՝ երբեմն աջտրովն հիւանդը հսկելով)

Մարգար . — (Ձախ կողմի բազմոցին վրայ, պատուհանին առջեւ, ծալապատիկ նսած, ակնոցը աջը, աղօթագիրքը ձեռքը կը կարդայ՝ վերջին տուները բարձրաձայն արտասանելով) . . . Ամենակա՛լ տէր, թո՛ղ զմեզս իմ . . . Ամենակա՛լ տէր, թո՛ղ զմեզս իմ . . .

Խատկ . — (Սեւեր հագած, առջեւը գոգնոց կապած եւ թեւերը կարմիր թեւնոցներով սօսած է : Ոսկերը պարզ գուշպայ եւ գլուխը պարզ եագմա կը կրէ : Տան մէջ իշխողի մը շարժումներն ունի : Վարագոյրը բարձրանալուն դարակը խուզարկելու կը գբադի : Յետոյ սրուակ մը օդի դուրս կը քերէ եւ դժգոն ակնարկ մը

ձգելով Մարգարի վրայ՝ կ'ուղղուի Մրմայի վրայ եւ ձակասը կը շփէ, երբեմն հոսոսել սաղով զայն ափին մեջէն հիւանդին ունզներուն) Զորնա՛մ, կրայնեբու մէջ կ'երի . . .

Մարգար . — (Մտնեղած յանկարծ վար կը դնէ աղօթագիրքը եւ ակնոցները կը հանէ :) Ճիւղերնիս կոյրէ՛ր ուր աս ձանափարին սուռը չեւթայիւք, ճիւղերնիս կոյրէ՛ր . . . Բարո՛վ խէրով Սրբազանը ըսած չիլլէր : Ան օրուան խալքուածիւնն ուր միտքս կ'իյնա՛յ, գիտես թը զէյնս հուսա (զանկը ցոյց սաղով) տաղըլմիշ տ'իլլի . . . Նազլո՛ւ, օղուլ, չըպուխս իլէն կրայ մի բեր : Սա աղօթագիրքն ալ տար ուաֆը դիւ . աղօթելէ՛ն ալ բան մի չիմ հասկընար, ժամէ՛ն ալ . . . (Ոսկերը կը շփէ)

Նազլու . (Անմիջապէս գուշպակ կը բողբ, աղօթագիրքը ուաֆը կը դնէ, չպուխը կ'առնէ կախուած տեղէն, ինչպէս նաեւ մոխրակայ մը՝ շառապխանէիկ վրայէն եւ դուրս կ'ելլէ :)

Խատկ . — (Շարունակելով Մրմայի մարմինը շփել : Յանդիմանակամ) Մեղա՛յ, ըսէ, մարդ, դուն Աստուծմէ չե՛ս վախնար . . .

Մարգար . — Աստուծմէ վախնալո՛ւս հըմար աս տէրէճէին ինկանք ես . . .

Խատկ . (Յանկարծ կը կենայ, բարկութեամբ լեցուն ակնարկ մը կը ձգէ Մարգարի վրայ եւ գլուխը կ'օրօրէ :)

Հոռութիւն .
Մարգար . — Կինէ ի՞նչ գէշը գէշը կու նայիս . . .

Խատկ . — (Աջ ձեռքն ուժգին կուրծիկն վրայ սեղմելով) Ը՛նչ, չորնա՛յ տամարդ, աս փութուռնը քու թիթիգութիւնէդ կու քաշիւք . . . Անխրտար փարաները տարիւր ծովը թափեցիր, հիւսնոցութիւն մին ալ փետաս անել տուիր մասուլումին, ելար եկար . . .

Մարգ . — Կնի՛կ, ես ի՛նչ ուր արիւր իմ նը, հարական վագիֆէս իմ իճրա արեր : Տէյի՛լ քի հարուր օսկի, ալայի վարիէթս ըլ ուր աս աղջըկանս ուղուրին գնիմ՝ նը սըխրտըրի մը պիլէ ումուրս չէ . . . Զէհէր մեր թէճէլունն սսիւրտար մին է եղեր . . . Աս բաները մեր զլօխին բերողներուն վրայ իշալլահ Աստուծու կրակը տի թափի . . .

Խատկ . — Օխտն օտարին խապահատ մի՛ գնեք, խապահատը քո՛ւ քովդ է . . .

Մարգար. — Հելպէ՛թ , խապահաթն իմ քո՛վ է ուր ես ատենկ սոյսուզ փեսաներո՛ւ իմ տիւշմիշ եղեր... Աշխրբքին երեսը չիֆթ մի նսան հատիկի պէս աղշիկ ունէի , տարի ձեռքովս կրա՛կը ձգեցի... Օր մի ան խաչուկի՛ն ալ փողապս կենիշ տի բանամ. իմ տունս թէնպէս լիսանէ չէ. թող նազուռն ֆոս մնայ , ինք թող երթայ ձէհէլլէմ լընի : Արածները ձեռք կուտայ... .

Խաճեմ. — Տէ՛ կինէ մի պաշլայեր , ի՛շ կ'ուզես մասուռնէն... .

Մարգար. — Զաթի ան մասուռնին (դուռը ցոյց տալով) հըմա՛ր է ուր մինչուկ աս օրս ձանս չիմ հաներ : Ըմմա , խայիր , համբերութիւնս հատաւ , իմ տունս թէմպէլիսանէ չէ՛ , թող տէ՛ֆ լընի երթայ... . Ո՛ւր կ'ուզէ հոն թող երթայ... .

Խաճեմ. — Մա՛րդ Ասործու , մէկ աղշը կանրդ հալը նայէ , մէկըլին մեղքըցիր , հիմա ատ խորաթաներուն սրա՛ն է : Անխրտար պործխարձ արիր , ելար թա՛ Ստրմպօլ գացիր , պօ՛շ ուր ետ դարձար նը պարէմ լեզուդ ներս քաշէ քիշ մի... .

Մարգար. — Պէհէ՛ կնիկ , ես ուր կըսիմ կ'ըսիմ նը՝ քու ատ պէյնդ չի՛ մտնար . Ստրմպօլը քու ան էռջի գիտցած Ստրմպօլդ չէ՛ մնացեր . թաս մի ջուրին մէջ մարդը կու խեղդեն... .

Նազլու. (Մեկ ձեռքով չպուխը եւ միւսովը մոխրակալը բռնած ներս կը մտնէ ու Մարգարի ներկայացնելով՝ նորէն կ'սկսի գուշպան հիւսէն)

Խաճեմ. — Զաթի ես գիտցայ ձեր գլօխին գալիքը : Մինակ՛ ես մեռնիր չի տի գիննամ . անխրտար դէմ կեցայ ուր չերթար :

Նազլու. — Հըպա ե՛ս , օձու պէս գերիկցայ... .

Մարգար. — (Կրակը գետեղելով ծխախոտին վրայ) Վե՛՛վ ումմիշ կուլլեր . աս ի՛նչ ուր թերս բան ուր կար նը իմ գլօխի՛ս գալու էր... .

Խաճեմ. — Հուսայեկ քսան օր է գալերնիդ , ալ բան մնաց ուր չի լսինք... . Աս ահօնձը չի լսած սուտերն ու ույտուրմասիօնները ուրկից ալ կու գըննին կու խորաթին... .

Մարգար. — Էհա՛լի է , լեզուն օսկոր չունի :

Խաճեմ. — Չլտիկ կնտոց բերանը կու գոցուի՛ տըհա... . բաներնին գործերնին ի՛նչ է ուր... . Սուտը ձուկալներով կու մազեն... .

Մարգար. — (Հառաչելով) Օ՛ֆ , օ՛ֆ , օ՛ֆֆ , տուշ տեղը չէ՛ ուր Այնէն ելլողը Աւետրանին

ըսածին պէս օտացը փոշին կու թոթվէ , անենկ կու փախչի... .

Խաճեմ. — Սո՛ւս եղիր , Ստրմպօլն ալ տեսնիք... . Տըհա՛ եւել պէլադ գտար... .

Մարգար. — Չանչան կ'անես , կնիկ , Արուսային մէյ մի հարցուր թը Ստրմպօլ ի՛շ տեղ է . Սումա՛ , գլօխդ վեր առ , բան մի գուրուցէ :

Մումա. — (Ի՛նչ մը վերմակը բարձրացնելով) Օ՛իս , գարնան հոտը ի՛նչ անուշ կու փչէ պախձաներէն... . Հայրի՛կ , աս առտու սա ծառին վրայ պիւլպիւլ մի եկեր թառեր էր , կու կանչէր , գիտես թը ի՛ս էր ուր պախձան տալէթ կ'անէր... . Արի թը օտքի տ'ելլի՛ , երկաթ մին էր գիտես թը ոտքերուս իջաւ... .

Մարգար. — Ֆէռահցիր , Սումա , վաղն ուր ոտքի ելլաս նը՝ ուխտ իմ արեր՛ խուզի մը մատաղ տի կըյրիմ . մատաղն ալ ձեռքո՛վդ տի ձաղպես :

Մումա. — Գիտես՞ , հայրիկ , Հոռփիկ հանումին ուր կու խորաթէանք պախձային սէֆաները նը՝ բերնին ջուրերը կու վազէր... . Շա՛տ կու հաւատէր... .

Մարգար. — Ա՛իս , ա՛իս , աշխարքը թերս է . որունը մէկ չէշիտ , որունը պաշխա՛ չէշիտ... . Հոռփիկ հանումին պէս նագենիմի աղշիկն ուր անենկ դեւի մը ձեռօն է ինկեր նը՝ գնա հասկըցիր աշխրբին հալը : Սումա՛ , օղո՛ւլ , իշտէ աշքովդ տեսար . վա՛յ անոր ուր բերանը կու բանայ , շիտտակ խորաթա մի կու փախցընէ :

Մումա. — Ա՛իս հայրիկ , իմ ցաւս մոռցեր իմ , Հոռփիկ հանումին վրայ կու մտածիմ... . Վա՛իս քուրիկս , շլլիս՛ էր պլլուեր , չէ՛ր թողուր ուր իս տանեն . մէյ մի արկանը երեսը կու թքնէր , մէյ մի գապթիէյին... . Արիկը նայեցաւ ուր իս թող տալու ձար չկայ , ոտքերուն տակը առաւ , անէ՛յ մի տփեց ուր տըհա գիտիմ թը աղիկելու ձանը ահօնձս է :

Մարգար. — Ան նագենիմ աղշիկան վրայ ձեռք վերցընողին ձե՛ռքը չորնայ... .

Մումա. — Ա՛իս , ես անենկ անո՛ւշ , անենկ ուսուսմակա՛ն , անենկ թէրպիէլու աղշիկ ո՛ւր էի տեսեր... .

Նազլու. — Ապլա՛ , երնէ՛կ քեզի ուր գացիր անխրտար բան տեսար . մենք ալ մարդ ինք ու կ'ապրի՛նք... .

Խաճեմ. — Տէ՛ , տէ՛ , դուն ալ խաֆատաշ

մ'իլլիր տատիգ ու քրոջդ հետ . դո՞ւն մնացիր մեզի չի հաւնող :

Սրմա. — Ա՛խ , պուպո՛ւկ , ատենկ մ'ըսեր , մենք խոտի պէս եկեր ինք , խոտի պէս կ'երթանք : Դուն իս ուր գրպատուն խրկէիր նը՝ ես անենկ քորնը քորը չի տի պսակուէի ան մարդուն հետը :

Խաճեմ. — (Զայրացած) Տէ՛ , տէ՛ Ստրմպօլ գացիր , քսան օր կեցար չի կեցար , ատենկ խօրաթաներ սորվեցար : Դուն ո՞վ ես որ պսակի դէմ խօրթա տ'անես , տըհա երէկի հարսն ես ... Իշտէ ատ լեզուիդ հըմա՛ր է ուր աս բաները գլօխիդ կուգան ես ...

Մարգար. — Կնի՛կ , պուալու հաճեթ չի կայ . աղչիկին սիրտը էրեր է , թո՛ղ ըսէ ...

Խաճեմ. — Հը՛մ , չորս թարաֆէն վրաս թափեցէք : Քանի ուր ես տանը մեծն իմ նը՝ չէ՛ , էտեթ չէ ուր բերաննին տի բանան ինծի դէմ :

Մարգար. — Կնի՛կ , դուն անոնց վրայ բըռնաւոր կեսո՛ւր ես , ի՛նչ ես . ատ գորպայութինը գնա բամբըսող կըտտո՛ցը ծախէ :

Սրմա. — Պուպո՛ւկ , ի՛նչ Փայտայ , մէյ մի պարանը պողպս անցուցիք , հըմա ի՛նչ ալ ուր ըսիմ նը պօ՛շն է : Զի կարգըւած ուր հըմըկու խելքս ունենայի նը՝ մտի՛կ կ'անէի խօսեքնուդ :

Խաճեմ. — Զերթայի՛ր բարով Ստրմպօլ ...

Սրմա. — Ես ալ չի գայի՛ բարով Ակը :

Խաճեմ. — Հէ՛մ Ստրմպօլ գտար պատիժդ , Տէ՛մ տէ կինէ Ստրմպօլ կ'ըսես կ'երթաս :

Մարգար. — Է՛՛ կնիկ , հերիք է , չափը կ'անցընես , հիւ՛ծնա է մասլումը :

Խաճեմ. — Հիւ՛ծնա է նը թող հիւ՛ծնա կենայ , քանի եկեր է , Ստրմպօլը սե՛նկ աղէկ է , Ակը սե՛նկ գէշ է , Հոռփիկ հանումը սե՛նկ աղէկ է , դուն սե՛նկ գէշ ես ...

Սրմա. — Ա՛խ , Ասուած պսպա , հըմա՛ է ուր աշքս կու բացուի . իշտէ գերի՛ ինք գարձեր մեր մեծոնացը , Հոռփիկ հանումը սուտ չէ ...

Խաճեմ. — (Բարկացած ոսֆի կ'եղի) Տէ՛ ես վախիթ չունիմ ձեր թէգիրները մտիկ անելու : Մութվախ երթամ , տուման եփոց իմ դրեր , նայիմ : (Սրմայի) Սո՛ւս , ըսա՛՞՞դ է... (Թօթուրսնայով դուրս կ'եղի) :

ՏԵՍԻԼ Բ.

ՄԱՐԳԱՐ, ՍՐՄԱ, ՆԱԶԼՈՒ

Մարգար. — Սա թէրս կնկան արածին կու

նայի՛ս . անենկ տ'անէ ուր բերաննիս չի բանանք .

Սրմա. — Բռնաւոր է գարձեր տանը մէջ ...

Նազլու. — Ապրա՛ , հախ ունիս ըմմա դուն ալ քիշ մի էւել կու քալես . հա՛ ըսէ՛ , կաւ քսէ ...

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ, ԽԱԶԻԿ

Խաչիկ. (Բարձրահասակ , խոշոր , ծոյլ աչքերով , հասս պեխերով) : Հագած է զփղա եւ սալթա : Ներս կը մեծն առանց բարեւելու՝ կոշարար կ'երթայ Մարգարի նսած բազմոցին վերի անկիւնը փռուիլ՝ աչքերը յսուած ձեղունին ու սիկարը բերանը .)

Մարգար. (Զայրագին ու երկար նայումով մը ձգելով նաչիկի վրայ , մտնուարով դուրս կ'եղի) :

ԼՈՒՔՐԻՆԸ :

ՏԵՍԻԼ Դ.

ՍՐՄԱ, ՆԱԶԼՈՒ, ԽԱԶԻԿ

Նազլու. — (Վշտացած դեմքով Խաչիկը դիտելով) Նե՛րս ուր կու մնաս նը հայրիկին թէմէն . նէ՛հ մի անել ալ մինասիպ չես տեսնար ...

Խաչիկ. — Հայտի՛ , հայտի՛ , էռջեի գործդ նայէ , խրատներդ քեզի պահէ :

Նազլու. — Ա՛խ , ի՛շ տ'իլլի մեր հալը... Հայրիկն ալ ուր չիլլի ինտո՛ր տի կշտացնինք աս սիւրիւ մի տղաքը : Աս ի՛շ ճամբայ է որ դուն բռներ կ'երթաս ... Ինչո՞ւ ես եկեր դէմս երագիս պէս թէնպէլ թէնպէլ նստեր , գնա՛՛ գործ ճարէ , քանի մը փարա վաստկելու նայէ ...

Խաչիկ. — (Ընկողմանելով) Օ՛խ , պախճաներուն հովը ի՛նչ անուշ կու փչէ . ես չարտախով տուն կ'ուզիմ , իրիկունները եթմիշ անիմ , պաղ պաղ հովերը եութմիշ անիմ ...

Նազլու. — (Բարկացած ոսֆի կ'եղի) Ելիր գնա՛՛ աստեղացս . հայտէ գլխուդ ճարը նայէ՛ , ի՛շ կ'անես արէ , դուն քեզ օլսուն ապրըցուր ...

Խաչիկ. — (Անշարժ , աչքերը գոց) Դո՞ւն հանգիստ ես , ե՛ս ալ : Աստուած զօքսնչ խաթիւն մօրս արե՛ւը պահէ , պահպանէ ...

Նազլու. — Զեռքդ քանի մի արհեստ ունիս . դուն բանելու ուր քիշ մի յօժար լընիս՝ մենք հուսա Ակինը մէջ պէկի պէս կ'ապրինք ու հօրս միննէթ չինք աներ ... Զեռքէդ պէուպէուութին կուգայ , առդա կու քաշես , փոնձու-

թին գիտես, պատ կու շարես, ի՞նչ ուզես նը չես կրնար...

Խաչիկ. — Օ՞րս, օ՞րս, անուշ հովերը կու փչեն պապա՛մ, վե՛՛վ է խնթրցեր ուր բանի:

Նազլու. — (Յուզուած) Իս մի՛ ճաթեցներ. սըտեղէն դո՛ւրս ելիր, ո՛ւր կ'երթաս գնա... Օ՞Փ, աման, Աստուած հոգիս առնէ, խալըսիմ ձեռացդ. հայտի՛, ելի՛ր, հայտի՛... (Խաչիկի քեռէն կը բռնէ ոսֆի հանկուռ):

Խաչիկ. — (Թոթվելով քեռը) Թո՛ղ քիչ մի քնանամ, առտուընէ իվեր հոգիս է ելեր:

(Իռուսեան) Նազլու՛, Նազլու՛, քիչ մի դո՛ւրս եկուր:

Նազլու. — ԸՏընա՛ կուգամ: (Դուրս կ'ելլի):

Խաչիկ. — Փա՛ռք քեզ, Աստուած, կտոր մի խալըսեցայ ձեռքէն: (Այնքոր կը գոցի):

ՏԵՍԻԼ Ե.

ՄՐՄԱ, ԽԱՉԻԿ

Մումա. — (Երկարօրեան եւ վշտարեկ դիմելով ֆնկելով Խաչիկի դիմքը) Նազլուին է ոչին չի՛մ ուզեր որ խօրթիմ վրագ... Քանի որ դուն աս ճամբան բռնեցես նը՝ տըհա ես քաշելիքներ շա՛տ ունիմ... (Բարկութեամբ) Աչքերդ բա՛ց ու քիչ մի ինծի մտիկ արէ:

Խաչիկ. — (Այնքոր կը բանայ):

Մումա. — Ա՛ր գրքին մէջ գրեր են թը բու մեղքերդ ե՛ս քաշելու պարտըհան իմ...:

Խաչիկ. — Ես ի՞նչ անիմ, էհալիին գնա խօսք հասկցուր: Իմ խապահաթս ի՞նչ է, ուր տայիմս տատիդ հետ մէկ կուլիք, կ'ըսէք կ'ըսէք ա՛տ կ'ըսէք...:

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ, ՆԱՉԼՈՒ

Նազլու. — (Ուրախութեամբ Խաչիկի) Տէ հայտի, գործը սորդ է եկեր: Ըուշանենց Գիրգորիկ աղային առդան կու ցաւի, մա՛րդ խրկեր են ետեւէդ ուր երթաս քաշես. հայտի՛, շուտ, տղան վար քեզի պէքլէմիշ կ'անէ:

Խաչիկ. — Ա՛՛վ ըսաւ իրենց ուր ետեւէս մարդ խրկեն, աս ի՞նչ է որ գիշեր ցորեկ հոգիս կ'առնեն: Տըհա նոր եկի թը օտքերս քիչ մի փոխիմ, հըմա՛ն ետեւէս բուսան: Թող սեպեն թը խաչուկ աղբարը թալանին գարկին... Թող

սեպեն թը տըհա Վառնաէն չիմ եկեր... Թող սեպին թը հիւնտ իմ...:

Նազլու. — Ոտուիդ ու ձեռուիդ կու պագնիմ. իս մի դողացներ. ամօ՞թ է չերթալը:

Խաչիկ. — Երգո՛ւմ իմ արեր ուր մարդու ա՛լ առդայ չի տի քաշիմ:

Մումա. — Ինիշտէ աղա, հայտի՛ գնա եկուր ուր կերակուրն եփի ուր ուտէք:

Խաչիկ. — (Մեկուսի) Կերակուր տ'ուտիք իրա՛ւ... (Բարձր) Է՞օՓ, էօ՞Փ, էօ՞Փ, նէ՛ կիրակի գիտես, նէ լուր օր. բանէ՛ հա բանէ, տա՛հն իշ կա. (Ոսֆի եղելով) Տըւածնին ի՞նչ է: Ես վախթին լիրաներուն քէօզին վրայ կու պառկէի... Ըմմա եբուր խուճարի ուր եղայ, աղա պապայիս ան կարմրուկ ոսկիները ջուրի պէս ուր հօսընցուցի՝ իշտէ ան վախթիս իմ մուխս մարերեցաւ... Վա՛խ խաչօ, ան փարաներն ուր հըմա ծոցս ուր ըլլէին՝ աս կնիկս ու աներ պապաս իմ խմէթս տի գիննային... Նէ իսէ: (Դանդաղօրեան դեպի դուռը յառաջանալով): Երգում արեր էի ըմմա նէ՛ իսէ: (Դուրս կ'ելլի):

Մումա. — (Ձեռքերը սարածելով) Տէր Աստուած, իշտէ աս մարդն է որ երկու քուրերուս կերած հացը աղու կու դարձընէ... Նագլուին հալը իմինէ՛ս ալ պէթէր է...:

ՏԵՍԻԼ Է.

ՄՐՄԱ, ՆԱՉԼՈՒ, ՄԱՐԳԱՐ, ԽԱՉԻԿ, ՊԵՐՈՍ

Նազլու. — (Արտուած անքու մտնելով) Ապա՛լ, Պէրոս աղան եկաւ կինէ:

Մումա. — (Իծգոն) Վէ՛՛վ տէ՛՛վէթ կ'անէ:

Պէրոս. — (Կնակ, կարճահասակ, քեռը միևնջեւ ակունջները իջած, սափակ երեւոյթով, աղջոս մօրուսով, ձեռքը պայուսակ) Երկու օր է ուր չեմ երբուր: Էմէն օր թըխէթ անելու է... Բարեւ, Սումա հանըմ, տուած գեղերս իշալլահ Փայտա մի կ'անէ: (Պայուսակը վար դնելով Մումայի դասակը կ'ֆնկէ): Լեզուս դուրս հանէ նայիմ մէյ մի:

Մումա. (Կ'հնազանդի):

Մարգար. — Պէրոս աղա, աղէյ մի իմացիր, եկեր ուր չիտի կրնաս նը, ըսէ ուր տղթոր Արութինը կանչիք:

Պէրոս. — Հալլա՛, հալլա՛, հալլա՛, Մարգար աղա, հե՛շ բան չունի. իմ շինած հապերս

ուր կլլէ , տուած թերթիպներու աղէ՛կ ուր
թըրխէթ անէք նը՝ տասը օրէն վեպք կ'ելլայ-
ատ թարաֆէն անհո՛գ եղիք . ճամբու թուլու-
թին է , կ'օսնի . . .

Խասեմ . — Պէյրոս աղային ձեռքէն մինակ
մեռելը օղջընցընել չի գար : Աս Ակինը մէջը
մարդ չէ՛ մնացեր որ իրեն ձեռքին տրկէն օնցած
չիլլի . քսան տարի է ուր աս գանահաթին մէջն
է : Իրա՛ւ է որ ան Ստըմպուլէն եկած թախում
մի հէօտիւկ-զիւպպէնբուն պէս ձեռքը վկայա-
կան կ'ըսեն , տիվրօմ կ'ըսեն , ի՛շ խարախօթիկ
է , չունի ըմմա , անոնց փութունն ալ թերս
կու կարգացընէ մեր Պէյրոս աղան :

Պէյրոս . — Ատ տղթորները խասպու պէս
մարդը եէ՛ կու կըյրին , եէ՛ կու մորթին :

Մարգար . — Ատ ըսածներդ աղէ՛կ ըմմա ,
Պէյրոս աղա , աս տանըհինգ օր է ուր մեզի
կու կարգացընես թը ի՛շտէ վաղը օտքի տ'ելլէ ,
ի՛շտէ մէկըլօր . օտի ելլալէն վազ օնցանք , օր
ըստ օրէ ետ կ'երթայ մասլումը : Հաթտա Խա-
րահիսարու մէշուր տղթորն ալ ըսաւ թը ջիղե-
րու խանգըրում է եղեր , աղէ՛կ հոգ տանելու է . . .

Պէյրոս . — Մարգար աղա , ատենկ տղ
թորներ ես շատ իմ տեսեր . ես անոնց փութունն
ալ մատիս վրայ կառնիմ , կու խաղցընիմ : Ես
աս աղջկան տէրտը տըհա՛ էվել աղէկ կու հաս-
կընամ , ըմմա ի՛շ Փայտա ուր աս բանը ձեռքէս
չի գար : (Ֆեար հաւնելով բարձին վրայ կ'դնէ :)
Իձեղէ անելու չէ . կամա՛ց կամաց , ահեստէ՛
ահեստէ . . .

Սրմա . — Կամաց կամաց ես բարակը կու
մաղուիմ , դուն խապար չունիս . . .

Պէյրոս . — Դուն ֆոգ անելիք բան չունիս .
ի՛շտէ ես աս պատին վրայ չիզ մի կու քաշիմ ,
(Պասը եղունգովը կ'գծէ :)

Մարգար . — Պէյրոս աղա , քուզում , եկէր
ուր չի տի կրնաս նը՝ տրո՛ւտոն ըսէ ուր անոր
կէօրէ շարթինք : Աս մասլումին հալը հալ չէ՛ :

Պէյրոս . — Աստուած վկայ , Ս . Աւետարա-
նին վրայ երգում կ'անիմ պիլէ , բան չունի :
Դուք իմ ըսած թէրթիպներս աղէ՛կ խուլլամիշ
արէք : Տըւած հապերս օրը իրեք անգամ տի
կլլէ . մէյ մի առտըւանց արեւն ուր քարը ցաթէ .
մէյ մի ցորեկը մօլլան կանչէ նը . մէյ մին ալ
իրկունը՝ կոչնակը գարնէ նը : Մսի ջուր ու կաթ
թող խմէ . աղի լեղի թող չուտէ . իշտէ աս է :

Տասը օրէն , էվել չէ , փիր ու փաք կուլլի :
Խասեմ . — Պէյրոս աղա , մէյ մի տէրպա-
պային տի կանչիմ ուր գայ վրան Աւետարան
մի կարգայ :

Մարգար . — Պէ կնի՛կ , Աւետարան մաւե-
տարան խօլայ է , ճար անինք ուր մասլումը
օտքի ելլէ : Մէյ մի տղթոր Արութինը կան-
չենք , հուսա Արապկիր օխտը սըհաթ է . . .

Խասեմ . — Դուն ուր մէյ մի նօ ուր ըսես ,
չօ չես ըսեր տըհա : (Պէյրոսին) Ան բանին վրայ
ուր մանն ուր դնէ նը ալ ես չառնեմ , խո՛ւյն է :

Մարգար . — Աս իմ մեղքս է , ի՞նչ բիմ :
Պէյրոս . — Մարգար աղա , էմէն բանը բաց
չըսուիր : Աս աղջկանդ տէրտը պաշխա է . . .

Սրմա . — Դուն իս ուր ռահաթ ձգես նը՝
ես աերա չունիմ . ձեռքէդ ուր չի գար նը՝ վազ
եկուր գնա :

Խասեմ . — Հը՛մմ . պապանձի՛ լեզուդ . աս
լեզուովդ դուն տըհա շատ քաշելիքներ ունիս . . .

Պէյրոս . — Ճանը՛մ ձգէ , Խէտէմ խաթուն ,
ան հիւնտ է . ան գիտէ քի մենք հոս ուր
կերթանք կու գանք նը պօշ տեղն է : Աս գլօխս
աս գանահաթին մէջն իմ ձերմկցուցեր :

Խասեմ . — Հա՛ , Պէյրոս աղա , կիւձէնիշ
մ'իլլիր , ցաւուն զօրէն ի՛շ խօրթեկը չի գիտեր :
Հըմմ նոր բան մի ունի՞ս տալու , ա՛ն ըսէ :

Պէյրոս . — (Պայուսակեկ շիշ մը դեղին
նեղուկ հաւնելով) Աս կու տեսէ՛ք , ասոր կ'ըսեն
„անմահութեան ջուր“ : Մախտուս Սումա հանըմին
հըմար շիներ իմ : Ես էօթէտէն պէրի ձեր խը-
նամութինը կու սեպիմ , շատ չի՛մ ուղեր , երկու
չէյրէք : (Մարգարի ներկայացնելով :)

Մարգար . — (Տասանուելով) Աս ի՞նչ իլաձ
է ուր . . .

Պէյրոս . — Աս իլաձը ան նորելուկ տղ-
թորները չի գիտեն : Իմ աղապապաս , էմենուդ
ալ մալում է ուր , վախթովը մէշուր տղթոր
մին է եղեր : Ան Չինումէչու հէքիմէ մի սորվեր
է , լո՛ւս իշնէ վրան , օրդուց օրդի սըը տէյի
մեզի հասցուցեր է : Անունը „Անմահութեան
ջուր“ է ըմմա մէջինը չիմ կրնար ըսեր :

Խասեմ . — Արեւուդ խուրպան , Պէյրոս
աղա , ո՛ւր տեղէն ալ միտքդ ընկեր է : Աղա-
պապադ լսեր իմ , չի գննուած հէքիմ է եղեր . . .

Պէյրոս . — Հիմա աս ջուրը պիլլօր պիլլօր
օրական տուէք ուր խմէ : (Կրկին ներկայացնե-
լով Մարգարի :)

Մարգար — Պէյրոս աղա, առնելը [սուլայ] է ըմմա, օղո՛ւլ, ալ կ'թուելիք տեղ չմնաց վրանիս: էկեր ուր ա՛ս ալ ուր մըկըննեցուն պէս. տ'իլլի նը՝ պօ՛շ բան է:

Խասեմ. — Մա՛րդ, ճէօմէրտութիւնդ կու բռնէ հարուր օսկի խարձ կ'անես մինչուկ Ստըմ՝ պոլ կ'երթաս, տասը խուռուշի հըմար, ա՛ն ալ անմահութեան ջրիկին հըմար կու խնայես:

Մարգար. — (Հառաջեցով քսակը կ'հանէ եւ երկու քառորդ կ'դնէ Պէյրոսի ափը:) Չի՛մ խնայեր, կնի՛կ, չի՛մ խնայեր, հոգիս պիլէ սանկ փութունիդ խուրպան կ'անիմ ըմմա գիտիմ ուր պօշ բան է:

Պէյրոս. — Շէն կենաս, Մարգար աղա՛ (Փեւը գրուխը դնելով պայուսակը կ'առնէ:) Իշալլահ մօտ օրէն կ'աղէնայ, հոգ մ'անէք: Ասօր հիւսնտ շա՛տ ունիմ: Ո՛ր օր ուր պէտք ունենար ինձի, ես սիրով կուգամ, պարտքս կու կատարիմ: Դառա՛յ իմ Մարգար աղայիս: Մնաք բարով: (Կը մեկնի:)

Խասեմ, Նազլու. (Կ'երթան ճամբել:)

ՏԵՍԻԼ Ը.

ՄԱՐԳ. ՄՐՄԱ, ՅԵՏՈՅ ԽԱՏԷՄ, ՆԱԶԼՈՒ

Մարգար. — (Պէյրոսի անհետանալը դիտելով) Երթա՛ս բարով ալ չիգա՛ս բարով: (Վեր առնելով գետին քողուած շիշը) Աղան անմահութեան ջո՛ւր ալ ունի եղեր... Աս ի՛նչ է ուր օտքը տուներնուս էշիկէն չի՛ կըլըր:

Մումա. — Երեսին կաշին քըզ փինէն ամուր է: Խասեմ, Նազլու սեմեակ կը վերադառնան, Աս մարդը մեզ պօշ տեղը կու խաղցընէ, կնիկ, օրօրի վիճակը կու ծօյրընայ խապա՛ր ես, Խասեմ. — Պէյրոս աղան ի՛նչ է եղեր ուր չես հաւնիր:

Մարգար. — Կնի՛կ իս մի՛ ճաթեցըներ, աս Պէյրոսին ձեռքէն բան չի գար. խոշոր խոշոր ջարդելը գիտէ մինակ: Կնի՛կ, դուն կու քնանա՛ս: Ստըմպոլ ի՛նչ հէքիմներ կան. երեսն ուր կու նայիս, գիտես թը ցաւերդ փութուն վրայէդ կ'երթան: Պէյրոսը վէ՛՛վ է ուր. ան քէլ օղանին երեսը նայողը վէ՛՛վ է: Արածն ալ իշտէ քսան օր է ուր՝ կու տեսնինք: Հայօղո՛ւլ, աս տղթոր Արութինին գործն է:

Խասեմ. — Դուն Ստըմպոլէն չէիր եկեր ուր Փշիկոնց կովը մահու դունէն խալըսեց:

Մարգար. — Պէ՛ կնիկ, աս աղշիկը կով չէ,

աս սիրտս կովու սիրտ ալ չէ: Վե՛՛վ իշ կ'ըսէ, թող բսէ. Իշտէ ես կ'երթամ տղթոր Արութինին թեղըրաֆ կու քաշիմ: (Թորթեցով դուրս կ'եղի:)

Խասեմ. — Գլո՛խն ի փորը, ի՛շ կ'անես արէ, կտոր մի փարա է մնացեր, ան ալ հատցուր աս խաֆայիդ երեսէն:

ՏԵՍԻԼ Թ.

ՄՐՄԱ, ԽԱՏԷՄ, ՆԱԶԼՈՒ

Նազլու. — Պուպո՛ւկ, հայրիկը անխտեր ուր կ'ըսէ ըմմա հա՛խ ունի. աս քսան օ՛ր է ուր մեզ կու խաղցընէ:

Խասեմ. — Դուն ալ տատիպ պէս մի՛ պաշլայեր. Պէյրոսին մէրիֆէթը նոր չի՛ տի գիննանք. ի՛նչ հրաշքներ կու պատմեն... .

Մումա. — Ույ աման գլօխս. մա՛յհն ինք ելլէ եօթըննեուն: Օր մին ալ ուր օտքը հոս կոխէ նը՝ օտային դուռը ներսէն տի կըպիմ, գիտցած լընիք:

Խասեմ. — Սըումա՛, օղո՛ւլ ատ լեզուտ քու տունդ կ'աւըրէ. ես ասխրտա՛ր կ'ըսիմ (Թօրթեցով դուրս կ'եղի:)

ՏԵՍԻԼ Ժ.

ՄՐՄԱ, ՆԱԶԼՈՒ

Նազլու. — Ապլա՛, հուսա երկուքս մնացինք: Ստամպոլու վրայ բան խօրթէ մտիկ անիմ:

Մումա. — Ա՛խ, Նազլու, քանի ուր Հոփիկ հանըմը տեսեր իմ նը՝ պուպուկը զըթիս կուգայ, ի՛շ մեղքս պահիմ... Ստըմպոլ գալու էիր ուր հասկընայիր թը ի՛նչ ամթ բան է կարգալ գրել չգիննալը: Հոփիկ հանըմին չօլուտները տեսնէիր... Մօրերնուն ծունկըներուն վրայ կու թառէին՝ կաբու պէս կու կարկնէին. հավասս կուգար: Ա՛խ, հիմա ուր գիր գրել գիննայի նը ի՛շ բաներ տի գրէի Հոփիկ հանըմին...

Նազլու. — Ապլա՛, Ստըմպոլէն քանի եկեր ես նը շա՛տ ես փոխուեր. էռէջ անննկ չէիր:

Մումա. — Իմ աշքս Հոփիկ հանըմը բացաւ... Աս ո՛վ է ուր մեր տունն է եկեր:

Նազլու. — (Ոսկ եղելով) Կողիկ աղային կնիկն է, պուպուկին հետ կու խօրթէ:

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՅՆՔ, ԽԱՏԷՄ, ՄԱՐԻՑԱ

Խասեմ. — (Մարիցայի հետ խօսելով) Մէրէդ մի՛ աներ շատ: Մի՛ վտխար, գէշ խապարը

Թե՛զ տեղը կուգայ կու հասնի... Աղէկ խա-
պա՛րը ուշը կու մնայ...

Մարիցա. — (Լալկան դեմով, պարզ սեւեր
հագած Ակնայ սարագով. երբե՛նք քակիկնակը
աչքերուն կը սանի եւ արցունքները կը սրբէ:
Միշտ կերկերուն ձայնով:) Վեց շաբաթը լմնցաւ,
օխտը մտանք՝ տըհա խապար մը չիք առեր...
(Սրմայի ձեռքէն բռնելով, պաղասագին) Տրուտը
ըսէ, Սումա՛, մերինը Ստըմպով տեսա՛ք թը չի
տեսար:

Սրմա. — Մեզ ուր Զապթիյէ-Խափուսի ուր
բերին նը, կողիկ աղան ալ հետերնիս եկաւ:

Մարիցա. — (Լալագին) Աճապ ծո՛վը ինկաւ՝
մարդ չգիտցաւ... Աճապ հափուսին քէօշէ՛ն
մնաց՝ մարդ չիմացաւ... Աճապ դժար հիւ՛նա
է՛ մարդ չիգիտէ... Ա՛խ, նէ՛ ուտելս գիտիմ,
նէ՛ խմելս: (Դառնապէս կուլայ)

Խասեճ. — Մարիցէ, ատխրտար ֆէսֆէսէ
անելուն տեղը չիկայ. կողիկ աղան փէք կաղուած
մարդ չէ... Զէհէր գիր խրկեր՝ ճանքան կոր-
սըւեր է:

Մարիցա. — Օր մի մեր գրիկը խայիպ չէ
եղեր: Աս գիշերը ալ երազս տեսայ ուր կիւյէ
մերինն է, ձեր Նիկողոս աղային ու Մարգար
աղային հետ ձեր խաս պախճային կողըղերին
(աւաղան) գլօխը նստեր են բախի կու խմեն ու
ծափ կու դարնեն: Մենք ալ ատենկ փութունս է-
ղենին հալա՛յ կու դառնանք ու տէֆ կու ծփինք:

Խասեճ. — Տեսած երազդ կարժէ, Մա-
րիցէ, ինչալլահ ուր ատենկ տ՛իւլի: Ե՛, վէ՛վ
գիտնայ, կու նայիս Աստուծու տէֆթերին մէջ
ա՛տ ալ գրուած կու կենայ...

Մարիցա. — Ամա՛ն, ես շատ երազներ տե-
սայ, հի՛շ բան մին ալ չեղաւ. ի՛նչ կուլէր ուր
էմէն բան ծախէր կախէր ու ելլէր գար ձերե-
րուն հետը. ի՛նչ հասկցեր է տասըհինգ տարի
է ուր... Ես ալ չիւրիմիշ եղայ, ինք ալ...

(Դրսէն աղմուկներ կը լսուին)

Խասեճ, Նազլու. — Աս ի՛նչ կիւրիլթիւ է
էրտիվանն ի վեր (Դուրս կը գնուին):

Լուսիկն:

ՏԵՍԻԼ ԺԳ.

ԽԱՏԷՄ, ՆԱԶԼՈՒ, ԽԱԶԻԿ, ՈՍՏԻԿԱՆ ՄԸ, ՆԻԿՈՂՈՍ
ԿՈԶԻԿ, ԲԱԶՄՈՒԹԻԿ

(Ներս կը մննեն ընդհանուր խանդավառու-
թեան մէջ):

Նիկողոս. — (Շրջապատուած բազմութեան,
պատաստուն եւ ցեխոտ հագուստներով, ձեռ-

քը բիր, ոսքերը սրելիս, այրուած ու սպառած
դեմով՝ կ'սկսի ողբագին) Աս ամիս մըն է ուր
օտքով ճամբայ ինք քալեր: Ա՛լ խամշի չի մնաց
ուր չուտէի... Ա՛լ հարուս չի մնաց ուր չի
մնէի: Ո՛ւյ աման օտքերս, ո՛ւյ աման մէշքս...
Ճիւերուս միտրը կու թափին: Աս Աստուծու
պատի՛ժն էր...

Կողիկ. — (Նոյն ախտի սխուր երեւոյթով
Ա՛լ լմնցա՛նք, մեռա՛նք, մինչուկ ուր Ակը ե-
կանք ընկանք... Մարգար աղա, Սումա, աշ-
քերնիդ լուս, ձեր ետըւէն Աստուծու հրամա-
նովը: (Ձեռները բազկասարած) Տէ՛ր թագաւոր,
Արգա՛ր դատաւոր, աս քու գաղտնիքդ, ուրիշ
բա՛ն չէ:

Բազմութիւնը. — Նոյն պահուն Մարիցան
նշարելով կրթնած պատի մէկ անկիւնը՝ կը ներ-
կայացնէ Կողիկի՝ որոտընդոս ծափերու եւ ա-
ղաղակներու մէջ: Կեցցէ՛, կեցցէ՛...

Կողիկ. — (Յանկարծ նանչնալով) Վա՛յ իմ
աննման կողակիցս Մարիցէ, դո՛ւն ալ ֆոս ես.
Հիմա խելքիս տի գամ... (Կը գրկախառնուին):

Սրմա. — Ապեած կը կանգնի անկողնին մէջ
եւ երագէ արքնցածի պէս կը օփէ աչքերը:) Տէ՛ր
Աստուած, աճապ քո՛ւն իմ թը արթուն...

Նիկողոս. — (Թեւերը բանալով կը փաթ-
բուի Սրմայի) Ա՛խ Սումա, անուշիկ Սումա, ես
արժանի չիմ քու գլխաւորդ ըսուելու... Սումա՛,
դուն հրիշտակի պէս աղշի՛կ ես եղեր... Թո՛ղ
Աստուծու կածակը իշնէ մեր տուշմըններուն
գլխուն: Ա՛խ, անուշիկ Սումա, գլխուդ եկած-
ները էմէնն ալ գիտիմ: ԵՍ ԲԵԶ ՄԵՂԱՅ, ԵՍ
ԲԵԶ ՄԵՂԱՅ, ԵՍ ԲԵԶ ՄԵՂԱՅ... (Կը համ-
բուրուին իրարու գրկախառնուած):

Ոսիկանը. — Պունտան պէօյէ տըհա մու-
հասպէթլէ եաշայընըդ: (Բարեւելով կը մեկնի):

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՈՅՆԲ, ՄԱՐԳԱՐ

Մարգար. (Թախտաբեամբ զգլխած ներս
կը գնուի):

Լուսիկն.

Նիկողոս. — (Թեւերը բանալով կ'ուղղուի
Մարգարի վրայ:) Աներ պապա, ես արի դուն
մ'աներ, մեղա՛յ, մեղա՛յ, մեղա՛յ...

(Վարագոյր)

ԳԵՂԱՍ ԱՐՅՈՒՆԻ

Վ Ե Բ Զ

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ը

Գործը , այո՛ , գեղեցկագոյն զուրս կուգայ՝
Կաղապարէ ճ'աշխատանքին անհրու ,
Ոտանաւոր , ճարճար , ռնիքս կամ կիսուած :

Բընա՛ւ երբեք բռնադբօսիկ սեղծումներ ,
Բայց քալելու համար շիտակ , ո՛վ Մուսայ ,
Ոտքըդ թող նեղ խաղակօշի՛կը հագնի :

Մէկդի՛ երթայ թող կըշուովի՛ւնը դիւրին ,
Ինչպէս ճուճակ ճը շատ խոշոր , անճաշակ ,
Ձոր ամէն ոտք կըրնայ առնել ու ճըգել :

Արձանագո՛րծ , դուն մի՛ երբեք զիջանիր
Կաւին զոր ճա՛տը կը շալուէ երբ անդին
Անփութօրէն կը թափառի միտքն այլուր :

Մաքաւէ՛ դուն ճարճարին հետ քարրարեան
Կամ հագուազիւտ պարտին հետ կարճրակուռ ,
Որ կ'պահպանեն շըրջազըծե՛լը ճաքուր :

Սիրակուսեան հողերէն պրո՛նգը փոխ առ ,
Ուր ամբօրէն կը քանդակուի շէշուրւած՝
Խըրոխտագեղ պատկերագի՛ծը սիրուն :

Նըբբափափուկ ձեռքով ճը դուն հետաճուտ
Եղիբ փորել դէճըն Ապողոն աստուծոյն՝
Մէկ երակին մէջ թանկագին սկատին :

Հեռու կեցիր ջրաներկէն , ո՛վ նըկարիչ ,
Եւ փուռին մէջ կիտուածագործ վարպետին
Սեւեռէ՛ շատ խուսափուկ նե՛րկը բարակ :

Կապուտաշող համբարուններն յօրինէ
Որ բիւր ձեւով կը գալարեն պոչերնին
Ու հրէշներն որ վինանշաններ կը պըճճեն :

Եւաբըլթակ լուսապսակին մէջ ցոյց տուր
Աստուածածինն ու իր Յիսուսը ճանկիկ ,
Եւ երկրագո՛ւնսը վըրան խաչ ճը ցըցուած :

Կ'անցնի ամէն բան . լոկ արուէ՛ստը հըզօր՝
Յաւերժութեան է սահմանուած : Ոստաններն
Կը քանդուին , ու կը ճընայ կիսանդրին :

Եւ խըստողորճ մետայլը զոր երկրագործ
Մ'հողուն ճոցէն զուրս կը հանէ , հին կայսեր
Մը ճոռցըւած անունն ի յայտ կը բերէ :

Աստուածներն իսկ կը մեռնին , բայց սիրական
Տաղերը մի՛շտ անջընջելի կը ճընան ,
Քան արայն իսկ աւելի պինդ և ամուր :

Քանդակէ՛ դուն , ու ողորկէ՛ , ու դրօշէ՛ .
Թող քու երա՛զըդ ճաճանուտ՝ դիճացկուն
Ձանգուածին մէջ ապրի յաւէտ կընքըւած :

Թարգմ. Ա. Չ. ԹէՕֆիլ ԿՈԹԻԷ

Ք Ր Ո Ն Ի Կ

Փարիզի հայ գաղութը իր ամենէն յարգելի
անդամներէն մին , հայ ժողովուրդը իր ամենէն
ազնիւ գաւակներէն մին կորսնցուց յանձին
Միհրան Յովակիմեանի , զոր անողոք հիւան-
դութիւն մը յանկարծակի խլեց զինքը սի-
րողներէն :

Ուրի Յովհաննէս Յովակիմեանի , որ թրքա-
հայ վաճառականութեան մէջ նոր շըջան մը
քացած է՝ զարգացած , եւրոպաճեւ վաճառա-
կանութեան մը հիմունքը դնելով մեր մէջ ևւ
վաճառականութեան մասին եւրոպական գիր-
քեր թարգմանելով , Միհրան Յովակիմեան
ինքն ալ եղաւ մին այն սակաւաթիւ հայ վա-
ճառականներէն , որ գիտեն թէ պէտք է զբամ
վաստկիլ ապրելու համար , եւ ոչ թէ ապրել
դրամ վաստկելու համար . եւ ինք գիտէր նաեւ
թէ ապրելու լաւագոյն ու ճշգրտոյն եղանակը՝
միմիայն ինքզինքին համար ապրելը չէ , այլ
մանաւանդ իր պատկանած հասարակութեան
համար : Այլասէր , անձնուէր մարդը եղաւ
գերազանցապէս : Պոլսոյ Ազգ. Ժողովին մէջ
իբր երեսփոխան , յետոյ՝ անգամ վարչու-
թեան , յետոյ՝ դեր-ատենապետ եւ վերջ ի
վերջոյ ատենապետ , Միհրան Յովակիմեան
ցոյց տուած է միշտ մաքուր , գիտակից , ան-
շահախնդիր ազգասիրութիւն մը , որ զինքը
յարգելի եւ սիրելի ըրած է ամենուն : 1895ի
մեծ ճգնաժամին , երբ ազգը « էֆէնտիներու »
տեղ շուկայի մարդիկ բերաւ վարչութեան
գլուխը դնելու , Յովակիմեան այդ պատմական
քաղաքական ժողովին ամենէն ցայտուն դէմքը
յայտնուեցաւ : Իզմիրլեան պատրիարքին հո-
գեկիցը , խորհրդակիցը , անոր աջ բաղուկը

եղաւ, եւ անոր հետ ինքն այ քանի քանի անգամ մահմեաական խուժանէն բզքտուելու վտանգը արիարար արձամարհեց, մինչեւ վերջին բոպէն կատարելով դժուարին պարտականութիւնը որ իր վրայ դրուած էր :

Ծնի մեծ յոյսերու ջախջախումէն յետոյ, Յովակիմեան, յաչս կառավարութեան կասկածելի, ստիպուեցաւ Պոլսէն հեռանալ. անկէց ի վեր կ'ապրէր Փարիզ, ու մեր գաղութին մէջ չէ եղած ազգանուէր ձեռնարկ մը որուն իր բարոյական աջակցութիւնը նուիրած չըլլայ, հանրային հաստատութիւն մը որուն ծառայութիւն մատուցանելու փութացած չըլլայ: Շատ մը խոստմնալից ուսանողներու համար ան եղած է բարի խորհրդատու եւ եռանդուն խրախուսիչ, ու իր բարոյական աջակցութեամբ, իր անխոնջ ու համբերատար բարեխօսութեամբ՝ զանոնք իրենց նեղ կացութենէն փրկելու համար ո եւ է ձանձրոյթէ խոյս չէ տուած :

Իտէալն ու պատիւը ամէն բանէ վեր դասող, ճշմարիտ հայ ճշմարտի մըն էր Յովակիմեան: Իր բարեկամները, որոնց համար իր սիրտը անսպառ գանձեր ունէր ամենաքնքուշ գորովի, երբէ՛ք պիտի չմոռնան այդ բարի, օգտակար եւ ազնուական մարդուն դէմքը, որ ափսո՛ս, շատ կանուխ անհետացաւ: Իր մահով, ոչ միայն ինքնայատուկ աղուոր ու վճիտ նկարագիր մըն է որ կը պակսի հայ ազգէն, այլ եւ Իզմիրլեանի մեծ հոգւոյն մէկ կտորն ալ է որ անգամ մը եւս կը մեռնի :

Ընթերցողներէս մին կը գրէ ինծի՝

« Շատ անխոհեմ բան ըրած էք, խնդրելով « երկնառաք հրեշտակներէն » որ թեւերնին դէպ ի էջմիրածին պարզեն : Կր սխալիք կարծելով թէ իրենց գործը Պոլսոյ մէջ լիովին կատարած են. այժմեան հանդարտութիւնը զինադադար մըն է միայն, ու 1/3ի վերանորոգումէն յետոյ՝ երբ պայքարը վերսկսի, դժուար է յուսալ որ նախկին սխալները պիտի չկրկնուին : Կերմարդկային միջնորդութեան մը պէտքը միշտ անհրաժեշտ կը մնայ : »

Ուրեմն, կ'աղաչեմ այդ բարերար ոգիներէն որ հաճին երկու մասի բաժնուիլ, մէկ մասը շարունակէ մնալ Պոլիս, իսկ միւսը չուէ

դէպ ի կովկաս: Ուրիշ աղաչանք մ'եւս զոր հարկաւոր կը համարիմ՝ ներկայացնել մեր այդ երկնաւոր բարեկամներուն, այն է որ իրենց ներշնչողական ամբողջ զօրութիւնն ի գործ դնեն որպէս զի Թրքահայոց ուղեղէն հետքն իսկ ջնջուի եկեղեցիները լսարան դարձնելու կամ չդարձնելու ապուշ խնդրոյն, որ ճիշդ իր ապուշ, անօրինակ կերպով ապուշ ըլլալուն համար էր որ այնքան աղետալիօրէն խայտառակ քառս մ'ստեղծեց Թրքահայոց հանրային կեանքին մէջ: Հարկ իսկ չկայ հարցը վերստին ձեռք առնել եւ նոր որոշում տալ. դարաւոր սովորութիւններ լուծած են արգէն հարցը, կը բաւէ հաւատարիմ մնալ այդ աւանդական բանաձեւին, որ թէ՛ շատ խոհեմ եւ թէ՛ շատ ճկուն ու ազատամիտ է, այսինքն թէ՛ ո՛չ թոյլ կուտայ՝ ըստ ոմանց՝ որ եկեղեցին դառնայ քաղաքական կուսակցութեանց պայքարավայր եւ անհատական դասախօսութեանց լսարան, ո՛չ ալ՝ ըստ այլոց՝ (եւ ըստ Խառն Ժողովի թէ՛ ուշ մնացած թէ՛ վախկոտ եւ թէ՛ ծայրայեղ չըջարեւականին) եկեղեցին դարձնել տարամբօրէն կրօնական տուն մը: Աւանդական բանաձեւը հետեւեալն է՝ Հայ եկեղեցին ազգային տուն մըն է, հաստատուած ամէն բանէ առաջ ազգին կրօնական կեանքին համար, բայց ան բաց է նաեւ ժողովրդին՝ ամէն անգամ որ ամէն կուսակցութենէ կամ անհատականութենէ բարձր ամբողջ ազգին հաւանութիւնը կամ համակրութիւնը վայելող արարողութիւն մը, հանդէս մը կամ համախմբում մը տեղի կ'ունենայ, օրինակի համար դպրոցական հանդէսներ, ազգային մեծ տօնախմբութիւններ (Վարդանանց տօն, Սահմանադրութեան տարեդարձ եւն.) մեծ դժբաղդութեան օրերուն, նոյնպէս, եկեղեցին՝ բացառաբար, ապաստանարան կը դառնայ հալածեալներու եւ փախստականներու: Այս բանաձեւէն հեռանալ եւ եկեղեցին դարձնել սովորական լսարան մը, ուրիշ արդիւնք չ'ունենար՝ բայց եթէ վնասել ճշմարիտ լսարաններ հիմնելու պէտքին մեր ժողովրդին մէջ տարածմանը, եւ միւս կողմէն մեր եկեղեցւոյն նկարագրին ու դերին խեղաթիւրմանը, Այս ճշմարտութիւնը հասկցուած չըլլալուն համար է որ ամիսներ շարունակ Թրքահայ հասարակութիւնը նմանը չտեսնուած

խառնաշփոթութեան մը մէջ տապալակեցաւ՝ ինքզինքը բզբտելով եւ օտարներուն առջեւ մեզ խաղք խայտառակ ընելով : Ո՛չ մէկ պէտք կայ միեւնոյն սխալին մէջ դարձեալ իյնալու : Թող ըստ առաջնոյն եկեղեցին մնայ եկեղեցի ու լսարանը լսարան : ու եթէ լսարաններ չու- նինք պէտք եղածին չափ, ջանա՛նք հիմնել :

Ուրիշ թղթակից մը դիտելի կուտայ թէ ազգային հարցերու վրայ խօսած ժամանակս, ծայրայեղ, քիչ մը միօրինակ եւ մինչեւ իսկ միամիտ լաւատեսութիւն մը ցոյց կուտամ : « Օրինակի համար կ'ըսէ, լաւատեսութեան ի՛նչ պիտի « տօղ » մը պէտք է փութալու համար հաւատալ՝ ինչպէս ըրիք՝ թէ թատերական ըն- կերութիւն մը կազմուած է արդէն Պոլիս , թէ թրքահայ Հրատարակչականը արդէն ապրիլ սկսած մարմին մըն է եւ թէ Ազգ. Մատենադա- րանին լրջօրէն վերակազմութիւնը հնարաւոր է մօտալուտ դէպք մը համարել : »

Կ'ընդունիմ որ մեր ազգային հարցերուն մէջ ունիմ արդարեւ յաճախ ձգտում մը դէպ ի յա- մատ լաւատեսութիւն մը . այդ ձգտումը կէս մը բնագրական է , խառնուածքի արդիւնք , կէս մըն ալ կամաւոր , որոշ փիլիսոփայու- թեան մը արդիւնք : Ես շատ կը սիրեմ ժողո- վրդական առածը որ կ'ըսէ « Աղէկ ըսէ որ աղէկ ըլլայ » : Թատերական ընկերութիւնը եթէ չէ կազմուած դեռ , պիտի կազմուի , որով- հետեւ անհրաժեշտութիւն մըն է : Նոյնպէս եւ Ազգ. Մատենադարանը : Եթէ այդ երկու ծրա- գիրները դեռ չեն իրականացած , այդ կը նշա- նակէ որ տակաւին երեւան չեն եկած կամ գէթ հրապարակ չեն նետուած այն քանի մը կորովի , անվհատ ու գործել գիտցող անհատ- ները որ լծուին այդ գործերուն եւ զանոնք ի կատար ածեն : Ամէն գործ ըստ իս կը կա- տարուի շնորհիւ քանի մը ձեռներէց կամազօր անհատներու , որոնք էականը կը հիմնեն ու իրենց ետեւէն կը քաշեն հասարակութիւնը՝ մնացեալը լրացնելու եւ հիմնուած գործը տե- ւականացնելու : Ես համոզուած եմ որ այդ անհատները պիտի յայտնուին , եւ թրքահայ հասարակութիւնը պիտի ունենայ իր թատե- րական ընկերութիւնը եւ իր Ազգ. Մատենա- դարանը : Գալով Հրատարակչականին , կարծեմ

թէ առանց երազամոլ նկատուելու կարելի է հաստատել թէ ան իսկապէս ապրիլ սկսած է : Դեռ փոքրիկ երախայ մըն է անշուշտ , քիչ մը տխրող , դժուարութեամբ ծնած , վէճերով ու կնճիռներով պաշարուած : Բայց կեանք ունեցող էակ մըն է վերջապէս եւ մեր պարտքն է բաղձալ եւ աջակցիլ որ ան շարունակէ ապ- րիլ եւ զօրանալ : Ես երբէք համաձայն չեմ անոնց որ այդ Հրատարակչականի այժմեան վարիչներուն մէջ քանի մը Դաշնակցական գտնուելուն համար այդ ձեռնարկը կուսակցա- մտկան անձուկ գործ մը նկատելով անոր ամէն օժանդակութիւն մերժեցին : Հրատա- րակչականի մը հիմնարկութեան համար եզրպ- տահայ քանի մը հարուստներու կողմէ նուիր- ուած 500 ոսկին եթէ սրամայրութեանը տակ դրուած ըլլար այժմ գոյութիւն ունեցող Հրա- տարակչականի վարիչներուն , բնականօրար այդ ընկերութիւնը աւելի արագ եւ աւելի հզօր զարգացում մը կ'ունենար : Գոնէ այս Դաշնակցական համարուած Հրատարակչականին աջակցիլ չուզողները՝ եթէ իրենք իսկ ցոյց տային հարկ եղած կորովը՝ այդ նուիրուած 500 ոսկին արդիւնաւորելով կենսունակ ու ինքզինքը ամենուն պատկասելի դարձնող Հրատարակչական մը հիմնելու , ըոնիք պիտի չմնար : Բայց այդ ալ չեղաւ : 500 ոսկիները գացին կամաց մը նորէն իրենց նուիրատու- ներուն գրպանը մտան առանց հանրութեան օգուտ բերելու : Միակ արդիւնքն այն եղաւ որ կուսակցական համարուած Հրատարակչա- կանին աճումն ու զարգացումը այս կարգի թիւրիմացութիւններու երեսէն մեծապէս վը- նասուեցաւ : Ըստ իս այդ կուսակցական հա- մարուած Հրատարակչականը կուսակցական գոյն չունի : Ռուբէն Զարդարեան որ այս Հրատա- րակչականին վարիչներուն մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ , կուսակցական մը ըլլալէ առաջ գրադէտ մըն է իմ աչքիս , եւ մին մեր ամե- նէն ինքնատիպ ու տաղանդաւոր գրագէտնե- ներէն : Այդ Հրատարակչականը բացած է մըր- ցում մը , եւ պիտի հրատարակէ լաւագոյնը այն թատերագութեանց եւ քննադատական ուսումնասիրութեանց որ իրեն պիտի զրկուին մրցակիցներուն կողմէն . ան մտադիր է նաեւ հրատարակել գրական հաւաքածոյ մը աշխա-

տակցութեամբ բոլոր ծանօթ հայ գրագէտներուն՝ ինչ կուսակցութեան ալ որ պատկանին. ես չեմ գիտեր թէ ասոնց մէջ ի՞նչ կարելի է գտնել « կուսակցամոլական » : Եւ շատ ցաւեցայ իմանալով որ Հաւաքածոյին հրատարակութիւնը յետաձգուեր է մեր թրքահայ գրագէտներէ շատերուն կողմէ ցոյց տրուած անտարբերութեան պատճառով :

Սրտանց կը բաղձայի որ գրականութեան նուիրուած ու գրականութիւնը սիրող բոլոր Հայերը վեհանձնութիւնը ունենային իրենց աջակցութիւնը փութացնելու թրքահայ Հրատարակչականին, որ մեր մտաւոր կեանքին մէջ ամենաէական դեր սը կատարելու սանձմանուած է :

Նոյնքան համակրելի եւ կարեւոր ուրիշ ծրագիր մը՝ Կոմիտաս վարդապետի ղեկավարութեամբ Պոլսոյ մէջ Հայկ. Երաժշտանոց մը հիմնելու ծրագիրն է : Այս ծրագրին հանդէպ հասարակութեան ցոյց տուած ընթացքին մէկ ինքնատիպ եւ բաւական հազուագիւտ գիծը այն է՝ որ ատոր դէմ խօսող, ատոր մասին ո՛ր եւ է վէճ յարուցանող չկայ : Բոլոր կուսակցութիւնները, բոլոր դասակարգերը հաւասարապէս համակիր են այդ գաղափարին . հաւատացեալն ինչպէս ազատախօհը, յեղափոխականն ինչպէս պահպանողականը նոյնքան ցանկացող կ'երեւան այդ գաղափարին իրականացման : Գեղարուեստը միայն՝ իր մաքուր տիրական ազդեցութեամբ՝ կարող է այսպիսի հրաշքներ գործել, երբ մանաւանդ ան կը ճառագայթէ հասարակութեան մը վերեւ՝ Կոմիտաս վարդապետի նման եռանդ, տաղանդ ու հմտութիւն միացնող արուեստագէտի մը մէջէն : Բայց եթէ այս ամբողջ միահաղոյն ու սաստկաբուռն խանդավառութիւնը երեւան գալէն յետոյ, գաղափարը շարունակէ մնալ իր գուտ գաղափարի ձեւին մէջ, եւ կազմակերպիչ յանձնախումբը՝ որ մեծ մասամբ մեծահարուստ անձերէ կազմուած է՝ եթէ այդ երաժշտանոցին հիմնարկութեան անհրաժեշտ եղող դրամագլուխը գտնելու համար յոյսը խեղճ Կոմիտաս վարդապետի ճակտին քրտինքովը պատրաստուած նուագահանդէսներու վրայ միայն դնէ, այն ատեն Պոլսեցիք իրօք

արդարացուցած պիտի ըլլան Ռուսահայոց դարբնած « հոսոս » ծաղրանունը :

Պոլսոյ Ազատամարտ թերթի խմբագրութիւնը կազմակերպած է enquête մը լեզուական հարցի մասին . պատիւ ըրած է ինձ եւս ուղարկել հետեւեալ հարցարանը . խնդիրը շահեկան է եւ կը փութամ այստեղ պատասխանել Ազատամարտի հարցումներուն :

1 Ի՞նչ է ձեր կարծիքը Թրքահայ լեզուի արդի կացութեան եւ մշակման մասին :

1. — Թրքահայ լեզուի մշակումը շատ լաւ ճամբու մէջ է 15-20 տարիէ ի վեր, եթէ նկատի առնենք միմիայն մեր ճշմարիտ գրագէտները եւ այն եզանակը որով անոնք ցարդ զարգացուցած են եւ կը շարունակեն զարգացնել նոր հայերէնը : « Արդի կացութեան », այսինքն ներկայ անմիջական ընթացքին մէջ, եթէ կայ այդ զարգացման բնաշրջութիւնը խանդարող երեւոյթ մը, այն ալ մեր մամուլին մէկ ստուար մասին մէջ երեւան եկող տգիտութիւնն ու անհոգութիւնն է լեզուի նկատմամբ : Որովհետեւ մեր մէջ մամուլը միշտ մեծ դեր կատարած է եւ դեռ երկար ատեն ալ պիտի կատարէ գրականութեան ու լեզուի զարգացման մէջ, անհրաժեշտ է որ լրագրութեան ղեկավարները մեծ ուշադրութիւն դարձնեն լեզուի մաքրութեան ու վայելչութեան :

2. Բանաւոր եւ պատեհ կը գտնուի՞ մը Արեւելեան եւ Արեւմտեան ափառհարաբերու միջեւ եւ ի՞նչ պայմաններով : Եթէ կը մերժէ այդ գաղափարը, ի՞նչ են ձեր պատճառաբանութիւնները :

2. — Արեւելեան եւ Արեւմտեան աշխարհաբարներու գոյութիւնը արդի Հայութեան ամենամեծ դժբաղդութիւններէն մէկը կը համարիմ ես, ու բնաւ համաձայն չեմ Ստեփաննոս Նազարեանցին որ, ռուսահայերէնը հիմնողներէն մին հանդիսանալով, ըսած է՝ « Ի՞նչ վնաս ունի, մէկի տեղ երկու ծաղիկ թող ունենայ Հայութիւնը » : Ազգ մը պէտք է մէկ լեզու միայն ունենայ : Այս սկզբունքին եթէ հաւատարիմ մնացած ըլլային ռուսահայ աշ-

խարհաբար կազմող առաջին գրագէտները, անտարակուսելի է որ այսօր ամբողջ Հայու-
թեան գրական լեզուն կ'ըլլար արեւմտեան
աշխարհաբարը, որ իբրեւ հարազատ եւ ուղ-
ղակի յաջորդ մեր նախնեաց գրական լեզուի
երկրորդ մեծ փուլին՝ միջնադարեան աշուղա-
կան հայերէնին, եւ իբրեւ ուսանայ գրակա-
նութիւն մը կազմուելէն առաջ արդէն իսկ
ձեւաւորուիլ եւ մշակուիլ սկսած գրականու-
թիւն մը ունեցող լեզու՝ արժանի էր ատոր
Բայց եղածը եղած է: Այսօր ունինք երկու
գրական բարբառ, որ նուիրագործուած են
իրենց սւրբն առանձնայատկութիւններն ու-
նեցող երկու զուգահեռական մատենագրութիւն-
ներով եւ որոնց իւրաքանչիւրը տարբեր մի-
ջավայրի եւ ազդեցութեանց ծնունդ՝ պիտի
չարունակէ զարգանալ իր ուրոյն ճամբով:
Ձուլում մը նիւթապէս անհնար կը գտնեմ:
Քաղաքական հզօր կերպարանափոխութիւններ
միայն՝ կարող են օր մը այդ բարբառներէն
մին տիրապետող դարձնել, կամ աւելի ճիշդ՝
անոնցմէ միոյն տարածումը ընդլայնել, որով-
հետեւ զժուար է ենթադրել որ ամբողջ Հայու-
թիւնը օր մը ենթարկուի քաղաքական մի-
եւնոյն պայմաններուն: Առ այժմ՝ ինչ որ կա-
րելի է. եւ բաղձալի է, այն է որ երկու բար-
բառները մշակող գրագէտները իրարու գրական
ու լեզուական շարժմանը շարունակական հո-
գածութեամբ հետեւին եւ երկու բարբառներէն
իւրաքանչիւրը փոխ առնէ միւսէն այն տար-
րերը որ իրեն կը պակսին եւ զոր կարելի է
փոխ առնել (բառեր, ասութիւններ, ոճեր,
եւ այլն): Ասոնց մասին մանրամասնօրէն գրած
եմ Առհէփի մէջ, ու պէտք չեմ տեսներ ինք-
զինքս կրկնելու: Սաչափ միայն յիշեցնեմ որ
երկու բարբառներէն՝ արեւմտեանը կարող է
արեւելեանէն օգտուիլ ժողովրդական տարբե-
րով աւելի եւս ինքզինքը հարստացնելու տե-
սակէտով: Մինչ արեւելեանը կարող է օգտուիլ
արեւմտեանէն՝ դասական տարրեր իւրացնելու
եւ ընդհանրապէս լեզուն բարձր գրականու-
թեան գործիք մը դարձնելու տեսակէտով:

3. Կ'ընդունի՞ք երեք ինքնուրոյն բարբառնե-
րու՝ Արեւելեան, Արեւմտեան ու գաւառակա-
միջնաօխարհի անկախ, հաւասարազօր գոյու-
թիւնը:

3. — Երկու բարբառներու գոյութիւնը
զժբաղդութիւն մը համարելէս յետոյ, հասկա-
նալի է որ երրորդ բարբառի մը՝ « գաւառա-
կան միջնաշխարհիկ » լեզուի մը անկախ հա-
ւասարազօր գոյութիւնը ընդունելու բնաւ
երբէք տրամադիր չըլլամ: Պոլսոյ հայերէնը, որ
հիմքը եղած է Արեւմտեան հայերէնին, սխալ
է կարծել՝ ինչպէս կ'ընեն ոմանք՝ թէ հայկական
դրօշմէ զուրկ օտարախորթ լեզու մը ըլլայ՝
միմիայն Պոլսեցոց յատուկ: Պոլսահայ բար-
բառը ուրիշ բան չէ բայց եթէ Փոքր-Հայքի
եւ Կիլիկիոյ բարբառներուն մէկ մոզայիքը,
որուն մէջ խառնուած կան նաեւ Մեծ-Հայքի
բարբառներէն տարրեր, սրովհետեւ Պոլսահայ
ըսուած հասարակութիւնը ուրիշ բան չէ բայց
եթէ գաւառներէն եկած եւ դեռ ամէն օր գալ
չարունակող Հայերու (եւ ամենէն ձեռներէց
եւ ուշիմ Հայերուն) համախմբում մը: Պոլ-
սահայ բարբառը շատ աւելի մօտիկ է միջնա-
դարեան աշուղական լեզուին՝ քան թէ Վանայ
կամ Մշոյ բարբառը: Արեւմտեան հայերէնը
ուրեմն մնաս մը չէ կրած իրեն հիմք առնելով
պոլսահայ բարբառը: Վնասակարը այն ձգտումն
է որով ոմանք, սխալ հասկցուած Հայաստա-
նասիրութեամբ մը, կը մղեն գաւառի Հայու-
թիւնը՝ տեսակ մը գրական ու լեզուական
ապստամբութեան դրօշակ բարձրացնելու ընդ-
դէմ պոլսահայ մտաւորականութեան (ինչպէս
եւ ոմանք ալ ուսանայը տաճկահայուն կամ
տաճկահայը ուսանայուն դէմ կը հանեն՝ գերա-
զանցութեան անիմաստ եւ անտեղի հարցեր
ստեղծելով): Քանի որ քաղաքական ընդհանուր
տխուր պայմաններ ստիպած են Հայութիւնը
այսպէս իրարմէ հեռու քանի մը մեծ հատուած-
ներու բաժնուած ապրիլ, պէտք է միշտ մղել
այդ հատուածները, որ իրարու նկատմամբ
անտարբեր կամ արհամարհոտ ընթացք մը
բռնելու տեղ, միմեանց օգնելու, իրարմէ
օգտուելու եւ զիրար լրացնելու ձգտումը միայն
ունենան: Պոլսահայուն դէմ այն տեսակ մը
հակակրօթիւնը զոր ուսանայոցմէ եւ հայաս-
տանցիներէ՝ ոմանք տարածած են եւ դեռ կը
տարածեն ամէն կողմ, ամենէն շոշորթ ու
ազգաշնաս երեւոյթներէն մէկն է մեր կեան-
քին: Պոլսեցին հռչակել « օտարախորթ, այլա-
սեռած, անհարազատ Հայ », նախատել է իս-

կապէս նոյնիսկ հայ ժողովուրդը . որովհետեւ պոլսահայ հասարակութիւնը կազմուած է, ինչպէս ըսի վերեւ . ամէն օր գաւառներէն եկող հայաստանցի Հայերով ձիւղ է որ գաւառէն եկող եւ Պոլիս հաստատուող Հայը քանի մը սերունդ յետոյ՝ կը կրէ այդ քաղաքին յոյն-թուրք-Ֆրանսական ազդեցութիւնը (աւելի ճիշդ՝ յոյն-Ֆրանսական ազդեցութիւնը . որովհետեւ թրքականը արդէն իսկ ունէր գաւառին մէջ՝ եւ աւելի յոռի ձեւով , անոր հետ ունենալով նաեւ քրդականը որմէ պոլսահայը զերծ է) . այս ազդեցութեան տակ պոլսահայը հարկաւ որոշ չափով կը կերպարանափոխուի , իսկ իր բուն հայրենիքէն հեռու մնալը անշուշտ իր բարքերուն , մտայնութեան եւ զգայնութեան ձեւին զուտ հայկականութենէն քիչ մը բան կը պահպանէ (կ'ըսեմ +իւ ղ . որովհետեւ անոնք որ ինծի պէս առիթ ունեցած են ու սիրած են յաճախ լսել Պոլսոյ անուս պառակնիկները , գիտեն թէ պոլսահայուն մէջ կարծուածէն աւելի Հայաստան մնացած է , թէ՛ լեզուով թէ՛ բարքերով) . սակայն , ընդունելով որ պոլսահայը ցեղական գոյնի տեսակէտով բան մը կորսնցուցած է , եւ պէտք ունի միշտ աչքը դէպ ի բնավայրը դարձնելու իրեն այդ պակասածը վերագտնելու համար , անհնար է նաեւ չընդունիլ որ պոլսահայը իր միջավայրին մտաւորական տեսակէտով պարզած մեծ առաւելութիւններէն օգտուելով , երեւան բերած է եւրոպական զարգացում . ճաշակ եւ կեանքի ըմբռնում ունեցող Հայու տիպարը եւ զայն ինքն իսկ փոխանցած ու տարածած է գաւառացի Հայութեան մէջ : Այդ նոյն դերը կատարած են Ռուսահայոց մէջ Մոսկուայի եւ Թիֆլիսի Հայերը : Ուզենք չուզենք , այս կացութիւնը պիտի մնայ դեռ երկար ատեն , ինչքան որ քաղաքական պայմանները որ զայն ստեղծած են մնան անփոփոխ , այսինքն թէ Պոլիսն ու Թիֆլիսը պիտի շարունակեն ըլլալ (թէպէտ ոչ-հայկական քաղաքներ) Արեւմտեան եւ Արեւելեան Հայութեան մտաւորական բարձրագոյն կեդրոնները եւ միջնորդները եւրոպական քաղաքակրթութեան ու հայ ժողովրդական մըտքին : Խօսքը մասնաւորելով Պոլսոյ վրայ , կարելի է ըսել թէ պոլսեցի Հայը , ունենալով անշուշտ իր թերութիւնները (ինչպէս որ Ռուսահայն ալ ու գաւառացի Հայն ալ իրենց յա-

տուկ որոշ թերութիւններն ունին) , Արեւմտեան Հայութեան համար մտաւորական լուսաւորչի , ղեկավարի դերը , եւրոպական քաղաքակրթութեան տարածիչի պաշտօնը կատարած է շատ յաւ կերպով՝ աւելի քան դար մը ի վեր . մասնաւորապէս լեզուի հարցին մէջ , եթէ այսօր Թրքահայք ունին լեզու մը այնքան նըշացած , յղկուած , ճկուն (որուն առաւելութիւնները Ռուսահայք ալ կը խոստովանին) , այդ լեզուն կազմողները եղած են պոլսահայ գրագէտները («պոլսահայ» անուանակոչութեան մէջ Իզմիրի հայն ալ ներփակուած կը զգամ , որովհետեւ Իզմիրը Պոլսոյ տեսակ մը շարունակութիւնն է) : Անշուշտ եղած է եւ կայ պոլսահայուն մէջ իսկապէս օտարախորթ , այլասեռած եւ այլանդակ տարր մը որ ո՛չ հայ է եւ ո՛չ օտար . ան է որ գրած է , կը գրէ եւ պիտի գրէ անձոռնի հայերէն մը որ թուրքերէնի կապկուտիւն , Ֆրանսերէնի կապկուտիւն , ո եւ է օտար բանի մը կապկուտիւն է՝ առանց հայերէն , առանց լեզու . Ելլալու . բայց ի՞նչ իրաւունքով հասարակութիւն մը դատել իր բացասական անհարազատ տարրերէն . բուն պոլսահայը՝ իրր գործիչ՝ կը պատկերանայ Պէզճեան Ամիրայի , Գրիգոր Օտեանի , Ներսէս Վարժապետեանի , Իզմիրլեանի , եւ ասոնց պէս դեռ տասնեակներով հաշուող մեծ անուններու մէջ , իսկ իբր գրագէտ՝ պէտք իսկ չեմ տեսներ անուններ թուելու , որովհետեւ թրքահայ գրականութեան մեծ մշակներուն երեք քառորդին անունը պէտք պիտի ըլլար յիշել . սաչափ միայն ըսեմ որ թեթեւսով լեզու մը մեծագոյնն է օտարախորթ կարծել լեզու մը զոր կերտած , դարբնած եւ յղկած են Ալիշանի , Պէշիկթաշիանի , Թէրզեանի , Դուրեանի , Աճէմեանի , Գ. Օտեանի , Մամուրեանի , Տէմիրճիպաշեանի , Ա. Արփիարեանի նման գրողներ : Պոլսահայ « ճշմարիտ գրագէտը » ո՛չ միայն միշտ գիտցած է գուրգուրալից եւ յարգալից ուշադրութիւն մը նուրբի ժողովրդական , գաւառական , բուն հայկական բարբառին , աւանդութիւններուն , ասութիւններուն , եւ իր գրական ախարհաբարը ջանացած է հայացնել , կենդանացնել , հարստացնել այդ ժողովրդական տարրերով , այլ եւ ինքն իսկ է որ ատենով կրիմեաններու , Սրուանցտեանցներու ամենաեռանդուն

աջակիցը, իրախուսողն ու խորհրդատուն եղած է, եւ այս վերջին ատեններն ալ՝ Հայրենիք՝ Մշակչի շրջանին՝ ինքն իսկ է որ կոչ կարգացած է գաւառի նոր սերունդներուն, որ փոխանակ ստրկօրէն հետեւելու պոլսահայ լեզուին ու գրականութեան, գաւառացի գրողները ստեղծեն բուն իսկ հայրենիքի կեանքը ցոլացնող ու համն ու հոար պարունակող տեղական գրականութիւն մը եւ արեւմտեան աշխարհաբարը ճոխացնեն տեղական բարբառներու այն տարրերով որոնց համարժէքները կը պակսին պոլսահայ լեզուին մէջ, Ահա այսպէս է որ երեւան եկան Թլկատիցիները, Ս. Զարդարեանները, զորոնք իրենց տաղին քայլերէն իսկ պոլսահայ գրադէտը խանդաղատանքով պաշարեց ու քաջալիրեց: Ուրեմն « երրորդ լեզուի մը » ստեղծումը բոլորովին անիմաստ է եւ աղէտարբեր պիտի ըլլար: Ուղղութիւնը որուն մէջ պոլսահայ մեծ գրագէտները դրած են արեւմտեան գրական աշխարհաբարը՝ լաւագոյնն է որ կարելի է երեւակայել: այդ ուղղութիւնը ես կը սահմանեմ երկու բառով սապէս՝ Քերականութեան համար անխախտ հիմ բռնել պոլսահայ բարբառի (այսինքն Կիլիկիոյ եւ Փոքր-Հայքի նուրբ, յստակ եւ միջնադարեան աշուղական գրականութեամբ ինչպէս եւ Ակնայ հոյակապ ժողովրդական բանաստեղծութեամբ յղկուած բարբառին) քերականութիւնը, բառամթերքին համար՝ գիտնալ օգտուել գրաբարի անսպառ հարստութենէն, միջնադարեան աշուղական գրականութեան թարմ ու շնորհալի զարդերէն, Պոլսոյ բարբառին « ժողովրդական » կարծուածէն աւելի ճոխ տարրերէն ու բնավայրի գլխաւոր բարբառներուն պարունակած անգնահատելի եւ դեռ քիչ օգտագործուած գանձերէն: ահա այս վերջին կէտին մէջ է որ գաւառացի գրագէտները օգնութեան պիտի հասնին պոլսահայ գրագէտին, արեւմտեան աշխարհաբարին մէջ մտցնելով տեղական բարբառներու բառեր, ոճեր եւ ասութիւններ, եւ զայդ ընելու համար ալ հարկ եղած չափի զգացումը, ճաշակը անոնք դարձեալ պիտի սորվին՝ ինչպէս ցարդ սորված են՝ պոլսահայ գրագէտներէն: Ուրիշ կարեւոր տարր մը եւս որ ցարդ մեծապէս նպաստած է եւ պիտի շարունակէ նպաստել արեւմտեան հա-

յերէնի կազմաւորմանն ու կատարելագործմանը՝ Քրանսերէնի ազդեցութիւնն է. ողորմելի գրչականերու Քրանսամոլական խեղճ ու կրակ աշխարհաբարը պէտք չէ երբէք կարծել տայ թէ Քրանսերէնը վնասակար եղած է մեր աշխարհաբարի կազմութեանը. Քրանսերէնը նոր ժամանակներու ամենէն նուրբ, ամենէն յրկուած ու կատարեալ լեզուն է. Քրանսերէնը այն է այժմ ինչ որ էր Սոփոկլի լեզուն ատենով. արեւմտեան Հայոց համար ամենամեծ բարեբազդութիւն մըն է որ իրենց լեզուին գրական կազմաւորմանն ու զարգացմանը առաջնորդ ու աջակից ունեցած են Քրանսական լեզուն ու գրականութիւնը: այդ է մին գըլխաւոր պատճառներէն որ թրքահայ աշխարհաբարին առաւելութիւնը կը կազմեն բազմաթիւ արեւելեան աշխարհաբարին, Ֆրանսերէնը կատարած է եւ դեռ պիտի կատարէ ճիշդ այն դերը զոր ատենով յունարէնը կատարեց մեր ոսկեդարեան պանծալի լեզուն յառաջ բերելու համար. Քրանսերէնի օգնութեամբ է որ պիտի կազմուի մեր նոր Եզնիկը, եւ արդէն կազմուելու վրայ է, կազմուելու մօտ է մեր նոր Եզնիկը: Մեր հանրային կեանքին շատ մը տխրութիւններուն ու խեղճութեանց մէջ, մեր այժմեան արեւմտեան աշխարհաբարը մեր ունեցած ամենէն գեղեցիկ, մխիթարական եւ սրտապնդիչ բաներէն մէկն է: Պարապ տեղը չվրդովինք, պարապ տեղը նոր պառակտումներ չստեղծենք. պոլսահայ ու գաւառահայ՝ ձեռք ձեռքի տուած շարունակենք մշակել, յղկել ու ճոխացնել մեր աշխարհաբարը այն ուղիղ ու բեղուն ճամբուն մէջ զոր անոր առջեւ արդէն իսկ բացած են վարպետ ձեռքեր:

4. Կը կարծե՞ք որ ներկայ գաւառաբարբառները կրնան երկուր ասեմ ցարուցակել իրենց գոյութիւնը:

Կ.Ներկայ գաւառաբարբառները կրնան տեւել յաւիտեան՝ տեղական, մասնաւորապէս գիւղական հասարակութեան մէջ, ինչպէս որ նոյն իսկ Ֆրանսայի գաւառներուն մէջ Քրանսերէնը ամէն կողմ վերջնապէս տիրապետած ըլլալով հանդերձ, տեղական բարբառները կը մնան

մինչև ցարդ կենդանի՝ մասնաւորապէս գիւղերուն մէջ : Ատոնք մեր գրական աշխարհաբարին տեղը չպիտի բռնեն երբեք : Կրնայ ըլլալ միայն որ երբեմն բացառապէս յայտնուին « տեղական գրողներ » որոնք վանայ կամ Մշոյ բարբառով գրուածքներ ուզեն յօրինել . ատոր կարելի չէ հակառակիլ , բայց այդպիսի գրուածքները միայն տեղական նշանակութիւն կ'ունենան : Ամէն անգամ որ գաւառացի Հայը պիտի ուզէ արտադրել գործ մը ամբողջ արեւմտեան Հայութեան համար , անիկա պէտք է որ գործածէ արեւմտեան գրական աշխարհաբարը :

4 ապրիլ, 1911

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

Պ. Կ. ՓՐՕՖՖ-ԳԱԼՖԱՅԵԱՆԻ ՆՈՒԱԳԱՆՆԵՐԷՍԸ

Ապրիլ 4ի իրիկունը , Scola Cantorumի սրահին մէջ , ընդ բարձր հովանաւորութեամբ Վէնսան տ'էնտիի , տեղի ունեցաւ նուագահանդէս մը զոր կազմակերպած էր Պ. Փրօֆֆ-Գալֆայեան եւ որուն յայտագիրը ամբողջապէս նուիրուած էր իր երաժշտական հեղինակութիւններուն , (մեներգներ , խմբերգներ եւ երգեհոնի համար կտորներ) : Մեներգները երգեցին Պ. Շահ-Մուրատեան , Օր. Սիւզան Կրավոլէ եւ Պ. Միհրանեան , իսկ խմբերգները երգուեցան Սքօլա Քանթօրոմի երգիչներուն կողմէն : Յայտագրի Բ. մասը կը կազմուէր Պ. Փրօֆֆ-Գալֆայեանի հեղինակած հայկական պատարագի մը մէկ քանի կտորներէն :

Պ. Փրօֆֆ-Գալֆայեանի այս հեղինակութիւնները , որ այդ նուագահանդէսին մէջ առաջին անգամ կ'երգուէին , յայտնութիւնը բերին ինքնատիպ սիրուն տաղանդի մը , եւ իրենց պարունակած անձնական հրապոյրովը մեծապէս հաճելի եղան ներկայ գտնուող հայ , թուրք եւ ֆրանսացի ունկնդիրներուն ու անոնց կողմէ ջերմ ծափահարութիւններով ողջունուեցան :



Կ Ո Չ

Հայոց Դրամատիկական Ընկերութեան նախաձեռնութեամբ կայացած ժողովը , որին մասնակցում էին Քիֆլիսի բոլոր հայ կրթական-բարեգործական հաստատութիւնների եւ հայ պարբերական հրատարակութիւնների ներկայացուցիչները , որոշեց սօնել այս տարուայ մայիսի 7ին մեր տաղանդաւոր թատերագիր եւ վիպասան Շիրվանդանդէի գրական գործունէութեան երեսնամեայ յօբելեանը եւ այդ նպատակով մի մասնաժողով ընտրեց , որի պատուաւոր նախագահութիւնը սիրայօժար ընդունեց Պ. Ալէքսանդր Մանթաշեանը :

Յորեկանական մասնաժողովը՝ լիայոյս , որ բազմարդիւն գրողի յօբելեանը ջերմ արձագանգ կը գտնի հայ հասարակութեան բոլոր խաւերում , խնդրում է յօբելեարի տաղանդի բազմաթիւ յարգողներին՝ նպաստել այդ համազգային սօնի յաջողութեանը :

Շնորհաւորութիւններ , ուղերձներ եւ նըւէրներ պէտք է ուղարկել յօբելեանական մասնաժողովի նախագահ Համբարձում Մելիքեանին (Ambarzoum Melikoff 8, Rue Sololak. Tiflis, Russie. կամ մասնաժողովի գանձապահ՝ Լեւոն Մղերբեանին, Lévan Mguebroff, notaire — 4, Rue Ganovskaia, Tiflis.)

Մասնաժողովի նախագահ՝ Հ. Մելիքեան
Փոխ-նախագահ՝ Տ. Յովհաննիսեան
Գանձապահ՝ Լ. Մղերբեան

Անդամներ՝

- Յովհ. Արելեան, Ղ. Աղայեան, Ասրպէս, Բժեկապէս
- Ա. Բաբայեան, Ա. Բաբեան, Գ. Բաւիլադեան, բժ. Ա. Զարգարեան, Յովհ. Թումանեան, Լեօ, Ա. Խասիսեան, Գ. Յուրիսեան, Չ. Մամուլեան, Տիկին Վ. Մամուլեան, Ա. Միլեան, Ա. Յարութեան, Տիկ. Յլ. Վարդանեան, Գ. Տէր-Մարգարեան :
- Քարսուդար՝ Մ. Աւետիսեան

ՆԱԶԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ ԱՇՈՒՂԸ

ԵՒ

ՅՈՎՆԱԹԱՆ ՅՈՎՆԱԹԱՆԵԱՆ ՆԿԱՐԻԶԸ
(26 նկարներով զարդարուած)

Գին 3 Ճրանք

Այս հատորը հրատարակուեցաւ Տիգրան
խան Բեկեկեանի աջակցութեամբ :

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

20, Չաքմաքճըլար, 20

Կ. ՊՈԼԻՍ

	Քր.
Զօհրադ Գ. Կեանքը ինչպէս որ է, վէպ	1.75
Թադևոս Լ. «Յարութիւն», Ա. Բ. Գ. հա- տոր, վէպ, թարգմ. Օտեան Ե.	5
Պարթեւեան Ս. Հայուհին, վիպակ	1.25
» Բայքայում, »	1.50
» Կիլիկիան արհաւիրք	2
Ոսկեան Կ. Սրտի ժամեր	2
Շախիբեան Լ. Յաւին տունը (բանտար- կեալի մը յիշատակները)	1
Նուպարեան Մ. — Նուպար փաշա (կենսա- գրութիւն մեծ պետական մարդուն)	1.25
Քառիճ Խորհրդաւոր աղջիկը, վէպ	2.50
Անդրեան Ա. Կաւէ արձաններ	2
Այվազեան Ա. Բառանմոյշ	0.70
Նալբանդեան Երջանկութեան երկիրը	0.70
» Կրթական վերածնութիւն	1
Փօլաճեան Ե. Արեւելքի բոցեր (բանա- ստեղծութիւն)	1.25
Շիրաճեան Ա. Անդրանիկ (թատրերգ.)	0.80
Էսաճանեան Լ. Այրած քնար մը (բա- նաստեղծութիւն)	0.60
Փլաճարեան Գ. Գիսաւորներ	1.25
Բիւրաթ Ս. Հրացանակիր քահանան	1
Մրթեան Յ. Գ. Հայ մեծատուններ	2.25
Սեւիկ Ռ. Կարմիր գիրքը	1.25
Մարտիրոս Տ. Առաջնորդ թարգմանութեան անգլ. լեզուի	0.70
Կարմա — Ինչո՞ւ Հայր Կաթողիկ եղաւ	0.70
Նուպարեան Մ. Փրանսիայի աշխարհ. բառերն.	6.50

Ա. ԶՊԱՆԵԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գին՝ Ճրանք

Les massacres d'Arménie,
préface de G. Clémenceau. 1

L'Arménie, son histoire, sa littéra-
ture, son rôle en Orient ; introduction
d'Anatole France. 1

Zeitoun, depuis les origines jusqu'à
l'insurrection de 1895, par Aghassi ;
traduction française ; préface de Victor
Bérard.

Նախագիտ Բուչակի դիւանը, (քննական
ուսումնասիրութեամբ մը հրատարակուած)

**Poèmes arméniens anciens et
modernes,** traduction française,
précédée d'une étude sur la poésie et
l'art arméniens par Gabriel Mourey. 1

Chants populaires arméniens,
traduction française avec une introduc-
tion et des notes ; préface de Paul
Adam. (պատկուած՝ Փրանսական Ակա-
դեմիայէն) : 3,50

Մկրտիչ Պէտիկբաւեանի փերբաւած-
ներն ու նաոներ, (ճանօթագրութիւններով
հրատարակուած) : 2

Les Trouvères arméniens, tra-
duction française, avec une introduc-
tion et des notes. 3,50


Մկրտիչ Պէտիկբաւեանի կեանքն ու
գործը, քննական ուսումնասիրութիւն
Քերբաւածներ. 3



ԱՆԱՀԻՏԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՆԵՐՐ

Նիւ-Նորֆ		Խմբագրութիւն «Արմէնիա»-ի
Սենթրըլ Յօլս	Պարոն	Սահակ Ծառուկեան
Ադէֆանդերիա	»	Յովհաննէս Գաբանձեան
Գահիրէ	»	Արմենակ Ատիլեան
Կ. Պոլիս	»	Պալենց գրատուն
»	»	Արծիւ գրատուն
Ադրիանուպոլիս	»	Տիգրան Մարտիրոսեան
Իզմիթ	»	Դաւիթ Պօղոսեան
Իզմիր	»	Սեդրաք Թօքթաձեան
Պարսիզակ	»	Մելքոն Յովսէփեան
Փոֆաք	»	Ա. Ետիս Հայկազեան
Նիսուար	»	Պետրոս Տրապիզոնեան
Սամսոն	»	Յարութիւն Յ. Տիվանեան, «Արարատեան» գրատուն
Ամասիա	»	Սենէքերիմ Բէկապօճեան
Մարգուան	»	Յակոբ Պապասինեան
Կեսարիա	»	Գէորգ Ճամձեան
Բաքերդ	»	Զաքէոս Այվազեան
Կարին	»	Գառնիկ Լուսպարոնեան
Նրզնիկա	»	Գուրգէն Բէլլերեան
Շապին-Գարահիսար	»	Խորէն Սէրձէնեան
Խարբերդ	»	Գարեգին Կոստանեան
Կիւրին	»	Սարգիս Չիլինկիրեան
Ասանա	»	Միհրան Բէշիշեան
»	»	Դաւիթ Խաչիկեան
Տարսոն	»	Խաչիկ Քարուկեան
Մերսին	»	Յովհաննէս Փորսուքեան
Ուրֆա	Գեր. Արտաւազդ Ծ. Վ. Գալէնտերեան	
Տօրք-Եօլ	Պ	Միհրան Տէր-Մելքոնեան
Հալեպ	»	Վահան Պաթաճեան
Մուս	»	Համադասպ Տէր-Յովհաննէսեան
Վան	»	Տիգրան Չիթուճի
Սեբասիա	»	Վահան Մոսկոֆեան
Ռուսնուզ	»	Գառնիկ Մազմանեան
Ֆիլիպէ	»	Թապուր Հինդլեան

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ



ԱՆԱՀԻՏԸ կը հրատարակուի երկու ամիսն անգամ մը :
 Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 Ֆրանք (Ֆրանսա), 12 Ֆրանք (օտար երկիրներ),
 2 տղար (Ամերիկա), 5 ռուպլի (Ռուսիա):
 Վեցամսեայ՝ 5 Ֆրանք (Ֆրանսա), 6 Ֆրանք (օտար երկիրներ), 1 տղար (Ամերիկա),
 3 ռուպլի (Ռուսիա):
 Յօդուած եւ բաժանորդագրին դրկել հետեւեայ հասցեին .

A. TCHOBANIAN

17. Rue La Bruyère, Paris.

